Բեմադրություն

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ և ԱՐՎԵՍՏԻ

Բ. ՏԱՐԻ 1963

ՄԱՐՏ

3

باكين

مجلة شهرية ، ادبية وفنية علمية

مدير المسؤول

السيد ارتين كارنيك قزانجيان

•

PAKINE

REVUE MENSUELLE

LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire

Dr. A. KAZANDJIAN

•

ԲԱԳԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆԱՆՈՒԹԻՒՆ

ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ՎԱՐՈՒՉ ԽՄԲԱԳԻՐ

Կ. ՍԱՍՈՒՆԻ

ԽՄԲԱԳԻՐՆԵՐ

ԵԴ. ՊՕՅԱՃԵԱՆ, Պ. ԱՆԱՊԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՆԴԱՄՆԵՐ

Ց. ԳԵՂԱՐԴ

Տ. ՈՍԿՈՒՆԻ

Բ. ՓԱՓԱԶԵԱՆ

Վ. ՕՇԱԿԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ

ED. BOYADJIAN

B. P. 1153, BEYROUTH - LIBAN

Հեռաձայնի թիւ 256078

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

Ն. ՁԱՐԽՈՒՏԵԱՆ

ՄԻՔԱՅԷԼ ԹԱՒՐԻԶԵԱՆ

ԲԻՒԶԱՆԴ ԿԱՆԵԱՆ

Ա. ԵՐԿԱԹ

Ա. ԵՐԱԶԵՆՑ

ՄԵԼԳՈՆ ԷՊԼԻՂԱԹԵԱՆ

ԳԱՅԼ ՎԱՀԱՆ

Ռ. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ

Կ. ՓՕԼԱՏԵԱՆ

Լ. ՄԿՐՏՉԵԱՆ

Գ. ՇԱՀԻՆԵԱՆ

ՏՈՌԹ. ԵՐ. ԽԱԹԱՆԱՍԵԱՆ

ԹԱՏՐՈՆ Բ. Փ.

ՆՇԵՄԱՐ Մ. Զ.

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ Ե. Պ.

Բազմն

ԱՅՍԱՓԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

Գ. ՏԱՐԻ, ԹԻՒ 3 — ՄԱՐՏ 1963 — ՊԷՅՐՈՒԹ

ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻ

Գրեց՝ Ն. ՉԱՐԽՈՒՏԵԱՆ

Բեսրօ կանգ առաւ սրճարանին ապակեպատ դրան առջեւ։ Նայեցաւ շուրջը։ Օրը Շաբաթ ըլլալով, մայթերը գրեթէ ամայի էին։ Ներս մտաւ, եւ պառմանին — Հէյ՛ Ճօ՛, պոռալով, նստաւ իր հանապազօրեայ սեղանին առջեւ, որ կը գտնուէր սրահին խորը, աջ անկիւնը։ Սեղաններուն հազիւ երեք չորսը յաճախորդ ունէին, բոլորն ալ իրեն անծանօթ։

Քիչ յետոյ, պառմանը ափսէով մը մօտեցաւ իրեն. սեղանին վրայ դնելով գաւաթը, լեցուն չիչը եւ ծալուած թերթ մը որ կու դար սրճարանին հասցէով։

— Ի՞նչ նորութիւն, Ճօ՛, հարցուց Բեսրօ։

— Կէսօրուան մօտ, Տերէջ ըսաւ որ իրեն անպայման հոս սպասես, կարեւոր ըսելիքներ ունի եղեր քեզի։

Բեսրօ պարպեց առաջին գաւաթը, սեղանին վրայէն առաւ թերթը ու սկսաւ կարդալ։

Պառմանը որ հազիւ տեղը հասած էր, չտապ վերադարձաւ։

— Հէյ՛, Լ'Արմէնօ, ըսաւ, մոռցայ ըսելու որ անցեալ օրուան երիտասարդ տիկինը քիչ առաջ հոս էր եւ քեզ տեսնել կ'ուզէր։ Ըսի որ ժամը հինգին անպայման հոս կ'ըլլաս։

— Շատ լաւ, Ճօ, այս վերջին լուրդ առաջինէն հաճելի էր։

Բեսրօ գլուխը չէր վերցներ։ Պառմանը սակայն տեղէն չշարժեցաւ։

— Պարոն Բեսրօ, ըսաւ, այս ի՞նչ տխուր գիրեր են։ Փորձեցի քանի մը նրմանցնել, բայց ոչ-ուսերէն է, ոչ հրնդկերէն...

— Ասոնց հայերէն երկաթագիր կ'ըսեն։ Շա՛տ հին գիրեր են, շա՛տ հին։

Իսկ այս թերթը կը կոչուի ՀԱՅՐԵՆԻՔ, եւ լոյս կը տեսնէ Պոսթոն, շաբաթէ մը ի վեր բաժանորդագրուեցայ եւ կը ստանամ կանոնաւորաբար...

– Ուրեմն քու քուն անունդ Բետրոս Լամբէնս չէ...

– Սիրելի ձօ, եթէ այդ հարցումը ուրիշ մէկը հարցուցած ըլլար դիտե՞ս ինչ կը պատահէր...

– Ներողութի՛ւն, Լամբէնս, դիտես որ շատ կը համակրիմ քեզի, եղբօրս տեղն ես... Եւ խրատ մը ունիմ տալիք, այդ մարդոց հետ այլեւս խղէ յարաբերութիւններդ, որովհետեւ անոնք միայն կ'ուզեն օգտուիլ քու քաջութենէդ։

Բետրոս թերթը նետեց սեղանին վրայ, գոյնը փոխուեցաւ։ Ձօ սկսաւ եւ ետ նահանջել, ղղլայ համարձակութեան վրայ։ Սակայն Բետրոս տեղէն չշարժեցաւ եւ իրեն դառնալով.

– Շնորհակալ եմ, Ձօ, ըսաւ, շնորհակալ եմ, վստահ եղիր որ խրատդ խուլի մը ականջը չինկաւ։

Բետրոս շարունակեց ընթերցումը, հասաւ տեղական լուրերու բաժնին եւ զարմանքով կարդաց հետեւեալ տողերը.

ԼՈՍ ԱՆՃԵԼՕՍԷՆ կ'իմանանք որ Քալիֆորնիոյ մեծագոյն քաղաքին մէջ աւարտած է արդէն շինութիւնը Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ. օրհնութիւնը տեղի պիտի ունենայ այս Կիրակի, Գլխաւորութեամբ Գրիգոր Վարդապետ Սահակեանի, որ ժամանած է Պէյրութէն և պիտի ներկայացնէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը։

Բետրոս մէկ ումպով պարպեց երրորդ գաւաթը, ծալեց թերթը ու դրաւ գրպանը։ Գրիգոր Սահակեան։ Այս ի՞նչ անակնկալ։ Բայց արդեօք ա՞ն էր։ Մտաբերեց որ վարդապետ ձեռնադրուելու ատեն, սարկաւագները իրաւունք ունին իրենց մկրտութեան անունը փոխելու... Որքա՞ն մեծ էր անակնկալը։

Երկու յաճախորդներ ներս մտան ու տեղ առին պարին առջեւ։ Ամեն առեն, Ձօ իր կողմը անձկագին նայուածքներ կ'ուղղէր։ Իրարու հետեւէ երկու գլանիկ ծխեց։ Այս մութ սրահը վրան կը ճնշէր։ Այսօր շատ չէր ախորժեր այս վայրին լռութենէն։ Եթէ ժամադրութիւն չունենար, պիտի երթար քաղաքին կեդրոնը, ուր լոյս կար, աղմուկ ու նուագ։ Շատ կը սիրէր թափառիլ Լոս Անճելսի հրապարակներուն վրայ շաբաթ իրիկունները եւ հանդիսատես ըլլալ ժողովուրդին ուրախութեան։

Դուռը բացուեցաւ։ Ձօ նշան մը ըրաւ իր կողմը։

Երիտասարդ կին մըն էր, սեւեր հագած։ Դէմքին վրայ խուր ժպիտ մը ղծաղրուեցաւ, երբ Բետրոս ոտքի ելլելով, խոնարհութիւն մը ըրաւ իր կողմը...

– Որքա՞ն ուրախ եմ, որքա՞ն ուրախ, Տիկին Տիքսըն, ըսաւ Բետրոս աթոռ մը հրամցնելով։

Պահ մը իրարու երես նայեցան։ Ժրպիտները եղան աւելի անկեղծ, աւելի մտերիմ։ Տիկինը սեւ պայուսակը դրաւ սեղանին վրայ։

– Ձօ՛, պոռաց Բետրոս, նայէ տիկինը ի՞նչ կը փափաքի խմել։

– Ոչի՛նչ, պարոն Բետրոս, շնորհակալ եմ։

– Այսօր հիւրս էք, պէտք է անպայման բան մը առնէք։

– Եթէ անպայման կը պնդէք, կրնամ լիմոնատ մը ապսպրել։

Լուռ՝ խմեցին իրենց հեղուկները։ Բետրոս սիկառէթ մը հրամցուց, այս անգամ տիկինը չմերժեց։

– Պարոն Բետրոս, ըսաւ տիկինը, ձեր ըսածը կէտ առ կէտ գործադրեցի։ Այս առտու իսկ դացի ապահովութեան ընկերութեան գրասենեակը եւ գանձեցի դիւրութեամբ խեղճ ամուսնոյս արեան դինը։ Երեք տարի եղաւ մեռնելուն եւ տակաւին նոր եկած է հրամանը, որպէսզի որոշուած գումարը ինձի վճարուի։ Երկուշաբթի առտուն պիտի տանիմ պանք...

Բետրոս չկրցաւ յուզումէն բերանը բանալ։ Ուրախութիւնը կոկորդին մէջ կը կուտակուէր, կը նեղէր շնչառութիւ-

նը։ Սիրտը բանտարկուած թռչունի մը պէս կը զարնուէր կուրծքի վանդակին։ Վերջապէս յաջողած էր թակարդը ձգել այս ոնճարակ որսը։

– Տիկի՛ն Ալիս, կը նեղէք որ ձեզի ձեր անունով կանչեմ, ըսաւ Բետրո, ինքզինք դանելէ ետք, չատ լա՛ւ ըրած էք։ Ապահովութեան ընկերութիւնները այնպիսի խրթին օրէնքներ ունին, որ կը-նան իւրացնել ձեր իրաւունքը եթէ ստորակէտ մը պակաս ըլլայ այս ինչ կամ այն ինչ գրութեան մէջ. եւ կամ ալ եթէ ժամանակին չգանձէք ձեր դրամը։ Զեղմէ աւելի ես ուրախ եմ որ արագ շարժած էք։

– Շնորհիւ ձեր օգնութեան եւ ձեր խրատներուն, կրցայ վերջապէս ապագան քիչ մը աւելի վարդագոյն տեսնել։

– Ամէն պատուաւոր մարդու պարտականութիւնն է օգնել որը եւ այրիի մը, ըրածս ոչինչ էր։ Եւ յետոյ մի մոռնաք որ անհուն համակրանք ունիմ ձեզի հանդէպ. եւ կը յուսամ որ մօտ ատենէն օտարներ պիտի չըլլանք այլեւս իրարու համար։

Տիկինին դէմքը պայծառացաւ դարնան արշալոյսի մը պէս։

– Պարո՛ն Բետրո, ըսաւ, հիմա կըրնամ ձեզի վերադարձնել այդ հինգ հարիւր տոլարը որ ինծի փոխ տուէք եւ կրնամ ըսել, կեանքս փրկեց եւ ուրախացուց նաեւ երկու փոքրիկներս...

– Երկու փոքրիկները, ո՞ր փոքրիկները...

– Բա՛յց զաւակներս, պարոն Բետրո։

– Ինծի երբեք չըսէք թէ երկու զաւակներու տէր էք։

– Վախցայ որ սկիզբները տարիս կրնայ տպդել մեր ապագայ յարաբերութիւններուն. սակայն հիմա հասկցայ որ դուք զդացումի տէր էք. եւ վստահ եմ որ չէք դրժեր ձեր խոստումը, որովհետեւ ձեր սիրած կինը երկու զաւակներ ունի... Բայց պիտի տեսնէք. այնքան սիրուն եւ բարի են, ձեզի պիտի սիրեն ու յարգեն իրենց հարազատ հօրը պէս։ Երբեք պիտի չզղջաք...

Բետրոյ դլուխը հակեց դէպի սեղանը ու երկարօրէն դիտեց մատներուն եղերքը։ Տիկին Ալիսին ժպիտը փոխուած էր տխրութեան։ Բետրոյ դլուխը վեր առաւ։ Նկատեց որ տխրութիւնը աւելի կը վայելէր անոր մելամաղձոտ դէմքին։ Գեղեցիկ էր, երիտասարդ էր, այրի էր, բայց երկու զաւակներ ունէր։ Ատիկա կը խանգարէր իր ամբողջ ծրագիրը։ Գեղեցիկ այրի մը ուր որ ալ ըլլայ, ինչպէ՞ս որ ալ ըլլայ, իր ապրուստը կրնայ հարիւր, բայց երկու որբուկներ... Ինք ալ որբ եղած էր ժամանակին եւ դիտէր թէ աշխարհի ամէնէն դժբախտ մանուկն էր։ Եւ որքան անիծած էր ճակատագիրը։

Վայ անոր որ որբերու ինչքին ձեռք կը դպցնէ...

Սկսաւ սիկարէթի տուփը փնտռել դրպաններուն մէջ։ Թերթը դետին ինկաւ, դայն վերցուց եւ դրաւ սեղանին վրայ։ Տուփը հանեց տաբատին դրպանէն. պարապ էր։

– Ներողութիւն, ըսաւ, ոտքի ելլելով, երթամ անկիւնի խանութէն տուփ մը սիկարէթ գնեմ։

Երբ վերադարձաւ քանի մը վայրկեան վերջ, տեղը սառած մնաց։ Տիկին Ալիս Տիքսըն թերթը բացած էր եւ ուշադրութեամբ կը կարդար...

– Այս թերթը ձե՞րն է, պարոն Բետրո, հարցուց Տիկին Տիքսըն։

–Չէ, ըսաւ, բարեկամի մը՝ն է, որ հասցէ չունենալով ինձմէ խնդրեց որ իմ հասցէովս գայ։

– Ա՜խ, եթէ հայ ըլլայի՛ք, որքա՜ն պիտի սիրէիք այս թերթը։ Այնքան կարօտը ունիմ հայ բաներու։ Իւրաքանչիւր բառը որ կը կարդամ այս թերթին մէջ, ինծի կը յիշեցնէ անցեալէն ծանօթ դէմք մը, մանկութեանս քաղցր ժամերը։

– Բայց ձեր անունը սովորական անուն մըն է... եւ եթէ չեմ սխալիր Հայերը Տիքսըն չեն կոչուիր։

– Ամուսինս Ամերիկացի էր. բայց

չատ ազատամիտ։ Շնորհիւ իր թոյլտրութեան կրցայ զաւակներուս հայեցի կրթութիւն տալ։ Անոնք կը կրեն հայու անուններ. ազիկս կը կոչուի Արշալոյս, իսկ տղաս Մեսրոպ...

– Բարեկամս ալ, այսինքն այս թերթին տէրն ալ Մեսրոպ կը կոչուի. ինչ զուգադիպութիւն...

– Սուրբ Մեսրոպ հայերէն տառերը հնարողն է...

– Գիտեմ, բարեկամս ինծի չատ բաներ պատմեց Հայերու մասին։ Օր մը, եթէ առիթը ներկայանայ, դուք ալ կ'ամրողջացնէք իր մոռցած բաները։

– Սիրով, երբ որ կ'ուզէք ձեր տրամադրութեան տակն եմ։

Տիկին Տիքսըն ոտքի ելաւ մեկնելու։

– Զկամէ խնդրանք մը ունիմ, Տիկին Ալիս, այսօր ձեր տունէն դուրս մի ելլէք մինչեւ որ ինձմէ լուր մը չառնէք...

– Շատ լաւ, եթէ դուք անձամբ գաք, կը ծանօթանաք Մեսրոպին եւ Արշալոյսին, եւ առիթ կ'ունենաք Հայերու մասին խօսելու։

– Կը փորձեմ, բայց այսօրուան համար խօսք չեմ կրնար տալ։

Տիկինը չատոնց անհնտացած էր եւ տակաւին Բետրօ դրան կողմը կը նայէր։ Թերթը ծալեց, դրաւ գրպանը, կրկին նստաւ տեղը, ու դէմքը առնելով ափերուն մէջ սուզուեցաւ մտածումներու խորը։

– Հէ՛յ, Լ'Արմէնօ, պոռաց իրեն ծանօթ ձայն մը։

Բետրօ գլուխը վեր առաւ։ Սանչէղ կանգնած էր դէմը։ Լայն ժպիտը կը քօղազերծէր ակռաներուն շարքը։ Քիչ հոգ, իրարու հուէշ նետ մտան Ֆրէտ, Տերէք եւ երկու անծանօթներ։

– Նստ մտնելու պէտք չկայ, ըսաւ Ֆրէտ. դրեթէ առանձին ենք. կրնանք հոս աղատօրէն խօսիլ։ Ձօ՞, չիշ մը եւ դաւաթներ բեր։

Նստան սեղանին շուրջ. երկու նորեկները քիչ մը անդին տեղ ասին։ Ֆրէտ խումբին պետն էր։

– Ի՞նչ կարգադրեցիր, նայինք, ըսաւ Տերէք։ Տիկինը բաւական երկար մնաց քովդ։ Մենք դուրսը կը սպասէինք ձեր մտերմութիւնը չխանգարելու համար։ Իրիկուան խնջոյքը ժամը քանի՞ն է։

Բետրօ գլուխը վեր առաւ. աչքերուն մէջ սեւ բոց մը կար։

Բոլորն ալ բարձրաձայն խնդացին։

– Ամէն բանէ տեղեակ ենք, ըսաւ Ֆրէտ։ Ապահովութեան գրասենեակի մեր բարեկամ պաշտօնեաներէն մէկէն իմացանք թէ այս առտու իսկ, տիկին Տիքսըն գանձած է իր ամուսնոյն արեան դինը, այսինքն քսան հազար տոլար, եւ այդ գրամը այս պահուս կը գտնուի իր տան մէջ։ Բետրօ, կը շնորհաւորեմ տարած աշխատանքդ, իսկապէս կատարեալ է։

– Եթէ այդ է մեր այս գիշերուան խնջոյքը, ըսաւ Բետրօ, առանց ձայնը բարձրացնելու, կը ցաւիմ որ ես պիտի չկարենամ մասնակցիլ։ Ես կը նախընտրէի այս գիշեր, կրանվիլ թաղի դրամատան արկղին հետ գործ ունենալ, ուր կայ չատ աւելի մեծ գումար մը։

– Այսօր որոշեցինք աւելի համեստ խնջոյք մը ընել։

– Ես կը մերժեմ այդպիսի խնջոյքներու մասնակցիլ։

– Բետրօ, մերժումիդ տակը բան մը կայ։

– Բան մը կա՛յ, այո՛, բայց դուք երբեք պիտի չկարենաք հասկնալ զայն։ Զայն մը ինծի կ'ըսէ որ մեր այսօրուան գիւրին արշաւանքը պիտի ունենայ չատ դէշ հետեւանքներ։

– Զէս կը զարմացնես, ըսաւ Սանչէղ իր հնչեղ ձայնով։ Ամէնէն դժուար արշաւանքներուն մասնակցեցար. գրաւեցիր դիրքեր, ուր մահուան սպառնալիք կար. աննահանջ կեցար ոստիկաններուն առջեւ, որպէսզի ընկերներդ ժամանակ ունենան անհետանալու, եւ հիմա կը մերժես այս երեխայի գործը։

– Ես երեխայի գործերէն չեմ ախորժիր, պոռաց Բետրօ։

– Լ'Արմէնօ, մէջ եկաւ Տերէք, խեր-

քրդ գլուխդ հաւաքէ. դուն հողը պատրաստեցիր, եթէ բաժինդ քիչ կը դտնես, աւելին պահանջէ։

– Հիմա որ հողը պատրաստուած է, կրնաք դուք առանձին դործել։ Շահաբաժինս կը ձգեմ մեր երկու նորեկ անդամներուն։

Ծրէտ սկսաւ մատներով թմբկահարել սեղանը։

– Բեւորս, լաւ դիտես որ մեր խումբը կը դործէ մէկ անձի պէս, հոն է մեր ուժը եւ մեր յաջողութեան դաղտնիքը։ Եթէ դործ մը միասին սկսինք, պէտք է որ դայն միասին ալ վերջացնենք։

– Այդ այդպէս է։ Մինչեւ այսօր, հետո անկեղծ եղաք, բայց այս դործին մէջ ուզեցէք խիղճս ծուղակը ձգել։ Ինծի չըսիք որ այդ այրի կինը երկու դաւակներու մայր է։ Ես հրեշտակ մը չեմ, սակայն կը մերժեմ երկու որբուկներու ինչքին ձեռք դպցնել։ Եւ ով դիտէ, դանոնք կրկին որբացնել։

– Պայման չէ որ կինը սպաննուի։ Եթէ խոհեմ դտնուի, եթէ դումարը մեզի յանձնէ եւ չփորձէ ոստիկանութեան լուր տալ, այն ատեն իր մազին իսկ չենք դպչիր։

– Այդ յանկերդը շատ լսած եմ։ Նոյն յայտարարութիւնը ըրած էք միշտ, եւ միշտ ալ մեր աշխատանքները ատրճանակի հարուածներով վերջացած են։

– Երէկ, կրակ ու բոց էիր, եւ հիմա պատրուակներ կը փնտռես մեզի հետ չդործակցելու համար։ Արդեօք վախնա՞լ սկսած ես։

– Վախնալ, ո՛չ երբեք։ Ինծի վախկոտ ըսողը տակաւին չէ ծնած։ Ո՞վ էր, Սընտաուն փողոցին մէջ ոստիկանական Լոկատին դէմ դնողը, երբ դուք մէկիկ մէկիկ կ՝անհետանայիք։ Ո՞վ էր Լոնիթաունի պանդիին նեբոը մնացողը, որպէսզի դուք կարենաք խոյս տալ դրամներու տրցակներով։ Մի՛ մոռնաք որ Հայ եմ։ Հայը կրնայ ամէն տեսակ ոճիրներ դործել, սակայն տեղ մը կայ ուր, խիղճը որքան որ ալ կուրացած ըլլայ, կը սկսի արթննալ։

– Բայց տակաւին երէկ դիշեր, դո՛ւն էիր ամէնէն խանդավառը։ Դո՛ւն եղար ծրագիրները պատրաստողը։ Դո՛ւն փորձեցիր չահել այդ կնոջ վստահութիւնը...

– Այո՛, երէկ դիշեր այդպէս էր. սակայն այսօր այդպէս չէ։ Որովհետեւ քիչ առաջ իմացայ որ այդ կինը Հայ է, եւ ունի երկու դաւակներ, որոնք ինծի պէս Հայ են։ Թուխուհանս կ՝անիծուի այն Հայը, որ իր ազդակցին ձեռք կը դպցնէ։ Եւ կ՝անիծուի այն ձեռքը որ այրիի եւ որբերու ինչքը կ՝իւրացնէ...

Սանչէդ գլուխը ծռեց եւ պաղտնաբար խաչակնքեց։ Սանչէդ կը վախնար անէծքէ, բայց շատ կը սիրէր արկածախնդրութիւնը եւ դրամը։

– Ուրեմն, վերջին խօսքդ... միջամտեց Ծրէտ։

– Եթէ կ՝ուզէք որ միշտ բարեկամ մնանք, եթէ կ՝ուզէք որ խումբը չքայքայուի, ձեզի խրատ կու տամ որ չմոռնաք այդ անպայմանական կնոջ։

– Այսպիսի զդացումներով կարելի չէ դործը շարունակել։ Երբ մեր խումբին մասնակցեցար, կէտ առ կէտ տեղեկացար մեր կանոնագրին, եւ երդում ըրիր որ միշտ պիտի հնազանդիս մեծամասնութեան որոշումներուն։ Այս վայրկեանէն սկսեալ կը նկատուիս անբաղձալի տարր մը մեր խումբին համար։ Քըսանը չորս ժամ ունիս այս քաղաքէն հեռանալու համար։ Այդ պայմանաժամը վերջանալէ յետոյ եթէ կրկին դտնուիս մեր ճամբուն վրայ, դիտես պատահելիքը...

Ծրէտ, Սանչէդ, Տերէք եւ միւս երկու նորեկները ոտքի ելան եւ առանց աջ ու ձախ դառնալու ուղղուեցան դէպի ելքը։ Բեւորս առանձին մնաց սեղանին առջեւ։ Քսանը չորս ժամ ունէր հեռանալու Լոս Անճելոսէն։ Եթէ չհեռանար, դիտէր պատահելիքը։ Աչքին առջեւ ունէր Ծրէտին եւ Գէնին ճակատագիրը։ Գիտէր որ իր ընկերներուն գնդակը քիչ անգամ կը վրիպէր իր նպատակակէտէն... Բայց ինք ո՛չ իր ընկերներէն կը վախնար եւ

ո՛չ ալ մահէն։

Անմիջապէս թուղթի կտոր մը ուզեց Ճոյէն եւ տիկին Ալիսին հետեւեալ երկտողը գրեց, հայերէնով։

«Անմիջապէս որ այս երկտողը ըստանաք, տուէք ձեր պզտիկները եւ դուքմարը եւ հեռացէք ձեր տունէն։ Եթէ աղգական կամ բարեկամ չունիք, գացէք վստահելի պանդոկ մը։ Կենաց կամ մահու հարց է։ Եղբը ձեզի ամէն բան կը բացատրեմ»։

ԲԵՏՐՈ ԼԱՄՄԷՆՕ

Եւ չակերտի մէջ դրաւ իր բուն անունը «ՄԵՍՐՈՊ ՍԱՀԱԿԵԱՆ»։

Դուրս ելաւ, երկտողը յանձնեց ներկարար տղու մը, որ կը թափառէր փողոցներու մէջ, եւ իրեն լաւ նուէր մը խոստացաւ, եթէ կարենար քառորդ ժամէն տիկնոջ պատասխանը բերել։

Տղան սնուցիկը խանութի մը անկիւնը դրաւ ու սուրաց։ Տասը վայրկեան վերջ վերադարձած էր։ Տիկինը կը պատասխանէր որ անմիջապէս կը սկսէր գործադրել երկտողին մէջ գրուածները...

⁂

Բետրո ժամացոյցին նայեցաւ։ Տասնըմէկն էր։ Գլուխը ծանր էր։ Գիշերը սովորականէն աւելի խմած էր։ Արագօրէն հագուեցաւ ու փողոց իջաւ։ Ու կարմիր Կիրակին ցցուեցաւ իր դէմը, անտեսանելի եւ ահարկու։ Շատ ուշացած էր։ Սանթա Ինէզ պողոտան կը գտնուէր իր բնակած վայրէն բաւական հեռու։ Անցնող թաքսիներուն բոլորն ալ լեցուն էին։ Սկսաւ քալել ամայի մայթերու վրայ։ Վազելով կտրեց հրապարակները։ Վերջապէս հասաւ լայն ու հանդարտ պողոտայ մը, ուրկէ դրեթէ ոչ ոք կ'անցնէր։ Ուշադրութեամբ սկսաւ զննել չէնքերը, եւ հեռուն, ձախ կողմի շարքին վրայ տեսաւ դմբէթը եւ փոքրիկ դանգակատունը։ Արագացուց քայլերը եւ կանգ առաւ մայթին վրայ, եկեղեցիին ճիշդ դիմացը։

Եւ ամբողջ մարմնէն սարսուռ մը անցաւ, կարծես կը դանուէր իր մեռած մօր դիմացը։ Վեհ ու սիրելի կերպարանքի մը առջեւ։ Ահա կրկին դիմացն էր։ իր ճերմակ քարէ պատմուճանին մէջ, երկնային հարսը։ կարծես իրեն պէս աքսորուած այս օտար ափերուն վրայ։ Որքա՜ն ցանկացած էր ներկայ ըլլալ տարուան ժամերգութեան եւ պատարագին։ Որքա՜ն ցանկացած էր կրկին ծունկի գալ եւ աղօթել անմեղ եւ հաւատաբիմ մանուկի մը պէս։ Կրկին լսել հայկական շարականները որ իրեն պիտի բերէին իր պապերուն ձայնը։ որքա՜ն փափաքած էր իր քարացած սիրտը նետել «Տէր Ողորմեա»ներու փափկացնող եւ յուզող հոսանքին մէջ։ մանաւանդ որ, այդ վերացումի պահուն պիտի տեսնէր իրեն շատ սիրելի դէմք մը...

Եկեղեցիին դռները տակաւին բաց էին եւ խոնարհին վրայ կերոնները կը պլպլային բոցէ շուշաններու պէս, մինչ խունկին յամեցած բոյրերը դինք դիմաւորելու կու գային ժպտող քոյրերու նըման։

Կտրեց փողոցը ու բարձրացաւ քարէ աստիճանները որ կը տանէին գլխաւոր դուռը։ Ներս պիտի մտնէր։ չհամարձակեցաւ։ Կը յուսար որ զինք դիմաւորող մը պիտի ըլլար։ Անառակ որդին ուզղակի իր հօրը տունը չմտաւ,այլ սպասեց դուրսը, որպէսզի ստանայ անոր ներումը։ Տարիքոտ մարդ մը, մամերը մարելէ ետք, կուգար դռները գոցելու։

– Կ'ուզեմ Կորիւն վարդապետին հետ տեսակցութիւն մը ունենալ։

Ժամկոչը զարմացած դիտեց այս օտարականը որ հայերէն կը խօսէր։

– Կորիւն վարդապետը քիչ առաջ մեկնեցաւ։ Եթէ կ'ուզէք անպայման դինք տեսնել, կէսօրէ ետք, ժամը հինգին հոս կ'ըլլայ։

Քալեց ամայի փողոցներու մէջ։ Շարժող կէտ մըն էր այս հսկայ քաղաքի մայթերուն վրայ։ Ցիշեց այն Կիրակի օրերը երբ կը թափառէր Պէյրութի փողոցներուն մէջ, մինչ մինակը, հակառակ իր ունեցած բարեկամներուն։ Շատոնց կշռած ու չափած էր բարեկամնե-

բուն արժէքը. անոնց անկեղծութիւնը կը նմանէր Ցունուարի խաբուսիկ արեւին։ Իր անյոգ ու տառապած մեծ հոգին պէտք կը գտար անհունութեան մինչ շուրջը ունէր կեղծաւոր խամաճիկներ։ Պահ մը մտադրեց Առուծոյ նուիրուիլ, աշխատիլ անոր փառքին համար, լքել աշխարհը եւ զոհուիլ բոլոր անոնց որոնք իրեն պէս միայնակ էին աշխարհիս երեսը. ստիպն ինքզինք արժանի չտեսաւ այդ մեծ առաքելութեան համար...

... Եւ հիմա կը թափառէր այս օտար քաղաքի մայթերուն վրայ. կը տողանցէր այս դոց խանութներուն անտարբերութեան առջեւ, և շուրջը կը տարածուէր Կիրակի յեսմիլիօրէներու անձկութիւն։

Կարմիր էր Կիրակին, մարը մտնող արեւին պէս, աշնան շոյանքներու տակ դեղնող անտառի մը ծառերուն պէս։

Ճաշից համեստ ճաշարանի մը սեղանին վրայ ու վերադարձաւ պանդոկ։ Պահ մը երկնցաւ մահճակալին վրայ, կացութիւնը քննելու համար։ Որոշում մը առնելու տրամադրութեան մէջ չէր։ Լաւագոյնն էր իրեն համար լքել այս քաղաքը, ուր իր նախկին ընկերները հիմա մեծագոյն թշնամիներն էին, ուր ատիկանութիւնը զինք դատած էր կասկածելիներու ցանկին վրայ։ Եւ սակայն կարելի՞ է ճակատագիրը փոխել քաղաքի մը միւս քաղաքը անցնելով։ Կարելի՞ է չնչել այն անտեսանելի ուժը որ խառնուած է մեր արեան։

– Ինչո՞ւ չէ, ըսաւ, նոր մթնոլորտ, նոր մարդ։ Սակայն պէտք է նախ եւ առաջ տեսնեմ Կորինը...

Հեռուէն ժամացոյց մը չորսը զարկաւ։ Ընդոստ ոտքի ելաւ. իրեն տրուած պայմանաժամը վերջանալու վրայ էր։ Բացաւ պայուսակը եւ հագուստներուն տակէն հանեց հասա պահարան մը եւ երկայն փողով ատրճանակ մը։ Զանոնք դրաւ ներսի ձախ կողմի գրպանը։ Վերջին նայուածք մը նետեց չորքը, այս չորս պատերուն, որ ամիսներ իր միակ խօսակիցները եղած էին։ Եւ դուռը բաց ձգելով ելաւ դուրս...

Բեսրօ աչք մը նետեց սրճարանէն ներս։ Պարին երկայնքին քանի մը յաճախորդներ, յոգնած անասուններու պէս կը դիտէին իրենց պարապ դատարկները։ Բեսրօ զգուշութեամբ ներս մտաւ, գրաւեց իր սովորական տեղը եւ նշան մը ըրաւ ձոյին։ Պառմանը դատարկ մը եւ շէջ մը գետնելով ափսէի մը վրայ մօտեցաւ իրեն։

– Ի՞նչ լուր մեր բարեկամներէն, հարցուց Բեսրօ։

– Այս առաւ, կանուխէն հոս եկան, իրենց նախանշաչ պատրաստեցի։ Սկսան վիճաբանիլ։ Քանի մը անգամ լսեցի անունդ։ Հասկցայ թէ իրենց գիշերուան արշաւանքը ձախողած է։ Թէ տունը ամայի եւ պարապ գտած են... եւ այս բոլորին պատասխանատուն դուն ես եղեր...

Բեսրօ զոհունակութեան ժպիտ մը ունեցաւ. ուրեմն ամէն բան լաւ էր. երկտողը հասած էր իր առենին, եւ տիկին Ալիս, կէտ առ կէտ կատարած էր իր հրահանգները եւ այդպէսով փրկած էր իր եւ զաւակներուն կեանքը եւ ունեցածը։

Ժամը հինգին մօտ ըլլալու էր։ Պէտք է մեկնէր եթէ կ'ուզէր ներկայ ըլլալ իրիկուան ժամերգութեան։ Ցանախորդները մէկիկ մէկիկ մեկնած էին անդրշիրմեան շուքերու պէս։ Մօտեցաւ պարին։

– Ձօ, ըսաւ, երկու գաւաթ լեցուր եւ խմենք իրարու կենաց։

– Բա՛յց, այդ անկարելի՛է, պարոն Բեսրօ, գործի ատեն պառման մը պէտք չէ որ խմէ։

– Առիկա դիտեմ. բայց այսօր պարապ տարբեր է։ Թերեւս այլեւս տոք չկոխեմ այս սրճարանին մէջ, թերեւս այլեւս դիրար չտեսնենք. կը գուշակե՛ս ինչու։

Ձօ նայեցաւ աչքերուն մէջ։ Առաւ գաւաթը.

– Կենա՛ցդ, պարոն Բեսրօ, ըսաւ,

յուզուած ձայնով մը։ Ո՛ւր որ ալ ըլլաս, Աստուած քեզ հետ ըլլայ։

Բեւորը դանդաղօրէն ուղղուեցաւ դէպի դուրս։ Երբ ոտքը դրաւ մայթին վրայ, Կարմիր Կիրակին զինք դիմաւորեց իր մեհեալային անտարբերութեամբ։ Շարժում չկար փողոցին մէջ, նոյնիսկ ինքնաշարժ մը չէր անցներ։ Սակայն ըզգաց որ ամայի չէր, այս Կարմիր Կիրակին կր մեղսակցէր իր թշնամիներուն հետ, վրէժխնդիր կնոջ մը պէս, որ երբ արհամարհուի մարդէ մը, կ'ըլլայ անոր մեծագոյն ոսոխը։

Ամ կողմի փողոցէ մը յանկարծ յայտնուեցան Ֆրէտ, Սանչէզ, Տերէք եւ Երկու անծանօթները։ Մտածեց եւ մրտնել սրճարան. սակայն զինք տեսած ըլլալու էին, եւ թակարդի մէջ ինկած պիտի ըլլար։

Առանց ճապարելու քալեց դէպի Ֆրանքլին պողոտան որ կը տանէր քաղաքին կեդրոնը։ Փողոցին անկիւնը դառնալու պահուն, աչք մը նետեց դէպի ետ հասկնալու համար թէ ի՞նչ էր իր նախկին ընկերներուն մտադրութիւնը։ Եթէ սրճարան մտնէին, ըսել է թէ իրմով չէին ուզեր զբաղիլ եւ զինք ազատ կը ձգէին։

Սակայն անոնք զտնուելով հանդերձ սրճարանին ճիշդ առջեւը, ներս իսկ չնայեցան։ Զինք տեսած ըլլալու էին։ Հետապնդումը սկսած էր։ Եթէ օրը Կիրակի չըլլար, Բեւորը երբեք պիտի չմտահոգուէր։ Մայթերը պիտի վխտային անցորդներով, խանութները բաց պիտի ըլլային եւ իրեն համար երախայի խաղ պիտի ըլլար անհետանալ ամբոխին ու եռուզեռին մէջ։ Սակայն այսօր Կարմիր Կիրակին կը տիրէր ամէն կողմ, եւ իրեն օգնելու համար միայն ծառերը կային, անշարժ ու անտարբեր։ Թաքսիներն իսկ այնքան արագ կը սուրային որ կարելի չէր անոնցմէ մէկը կեցնել։

Բաւական քալելէ ետք, դրան մը մէջ պահուըտելով, ուզեց հասկնալ թէ միշտ հալածուա՞ծ էր։ Վայրկեան մը սպասեց եւ առիթէն օգտուելով, առաջ նետուեցաւ, կտրեց պողոտան եւ մտաւ Սան Անթոնիո փողոցը։ Սակայն անկիւնը չդարձած, նշմարուած էր։ Սկսաւ վազել դոց խանութներու անխորտակելի պատնէշի երկայնքին։ Գահուըտեցաւ հատա ծառի մը բունին ետեւը եւ նայեցաւ եկած կողմը։ Տերէք կը վազէր առջեւէն, յետոյ կու գային երկու անծանօթները, եւ վերջապէս Սանչէզ եւ Ֆրէտ։ Բոլորին ալ աչքերը դրպանին մէջն էր։ Բեւորը դիտէր թէ ի՞նչ կը նշանակէր այդ ժեստը։ Որոշած էին առաջին առիթին իսկ կրակել իր վրայ։ Շատ քիչ անգամ անոնց դնդակը վրիպած էր իր նպատակակէտէն։ Ինք ալ մեքենաբար ձեռքը տարաւ ներսի գրպանը, եւ զգալով ատրճանակին ծանրութիւնը ապահովութիւն մը զգաց։ Մանաւանդ որ իր զէնքը միւսներուն վրայ առաւելութիւն մը ունէր, կընար շատ աւելի հեռուներէ զարնել։

Այսուհդ գործեց առաջին սխալը։ Բուն անխոհեմները միւսներն էին։ կրընար զանոնք մէկիկ մէկիկ դեռին փռել։ Բայց իրը չէր կրակելու կարգը։ Միւսներուն իրաւունքն էր պարպել առաջին դնդակը, այս էր քսաներորդ դարու չար ասպետներու պատուոյ օրէնքը։ Իրեն ձգուած էր մէկ միջոց.— փախչիլ, անհետանալ։ Սկսաւ ծառէ ծառ յառաջանալ եւ հասաւ քառուղիի մը։ Ցաջորդ ծառը կը գտնուէր միւս մայթին վրայ եւ փողոցը շատ լայն էր։ Առջեւը ունէր երկաթ ճամբայ։ Եթէ չարունակէր ուղիղ կր հասնէր քաղաքին կեդրոնական եւ մարդաշատ մասերը։ Դէպի ձախ, այսինքն կանգնած մայթին վրայ, կային միայն բարձր շէնքեր եւ լայն պողոտաներ։ Ամ կողմը, կային հին թաղերը եւ նեղ փողոցներ, ուր յաճախ անհետացած էր ոստիկաններու հալածանքէն խուսափելու համար։ Միակ փրկութիւնը այդ կողմն էր, եթէ կարենար կտրել լայն փողոցը եւ ոտք դնել միւս մայթին վրայ, զինք հալածողները անակնկալի բերելով։

Երկվայրկեանները համրուած էին։

Ցորհելու առենը չէր։ Անմիջապէս նետուեցաւ առաջ։ Կարեց փողոցը եւ սկսաւ վազել մայթին երկայնքն ի վեր դէպի ոտքերի նեղ փողոցը։ Առաջին գնդակը սուլեց երբ քանի մը քայլ մնացած էր փողոցին հասնելու, և քովի պատէն քարի պզտիկ կտոր մը ինկաւ ոտքերուն տակ։ Երկրորդ գնդակը սուլեց երբ կը դառնար փողոցին անկիւնը։ Թեթեւ հրպում զգաց կռնակին, ձախ ուսին վարը։

Հիմա փրկարար ծուռ ու մուռ փողոցին նեղ մայթին վրայ կը վազէր։ Կրնար անհետանալ ուզած պահուն, դառնալ ոչ կամ ձախ այս պզտիկ լաբիւրինդոսին մէջ։ Կատու մը փախաւ իր առջեւէն. շուն մը հաչեց պատի մը ետեւէն։ Նեղ հրապարակի մը վրայ խումբ մը պզտիկներ աշխուժով կը խաղային։ Անոնցմէ մէկը, որ պահուըտած էր իր ճամբուն վրայ, պոռաց յանկարծ.

— Գաբո՛ն. ձեր ուսին տակը արիւն կայ...

Շարունակեց վազել։ Ուսին տակ ըզդաց պզտիկ ցաւ մը որ երթալով կը սաստկանար։ Գաղջ բան մը կը հոսէր կռնակն ի վար։ Շեղեցաւ դէպի աջ, մըտաւ աւելի լայն փողոց մը եւ յանկարծ դտնուեցաւ պարապութեան մը առջեւ։ Ճանչցաւ Սանթա Ինէզ պողոտան։

Անցաւ դիմացի մայթը ու դանդաղեցուց ընթացքը։ Հոս ծառերը չատ խոշոր չէին, սակայն կարելի էր պատըսպարուիլ անոնց երիտասարդ բունին ետեւը։ Քանի մը մեթր քալելէ ետք կանգ առաւ։

Շատ չսպասեց։ Ձիշդ իր ելած փողոցէն յայտնուեցան Տերէք եւ երկու անծանօթները։ Մանչէզ եւ Ֆրէտ չատ հեռու ըլլալու չէին։ Գահը վճռական էր։ Բեռրօ ատրճանակը հանեց նէրսի գրպանէն ու կրակեց։ Առաջին գնդակին՝ Տերէք ձեռքը կուրծքին տարաւ ու կրծքնեցաւ պատին. երկրորդ գնդակին, անծանօթներէն մէկը գետին փռուեցաւ. իսկ երկրորդը անհետացաւ փողոցին մէջ եւ պատին ետեւէն սկսաւ իր կողմը կրակել։

Բեռրօ չարունակեց քալել։ Աբեւը մարը մոռած էր եւ իր հետ տարած՝ կիրակիին կարմրութիւնը։ Վերջալոյսին մէջ ամէն բան տակաւին յստակ էր. զանդուածներուն ստուերական կեցուածքը քիչ մը մեղմացած էր։ Արիւնը սկըսած էր հոսիլ աւելի առատ եւ կաթիլ կաթիլ կ'իյնար մայթին վրայ։ Շունչը սկսած էր տկարանալ եւ տեսողութեան առջեւ թեթեւ շղարշ մը կը տարածուէր։ Բաւական քալելէ ետք ետին դարձաւ։ Երեք կերպարանքներ կը վազէին դէպի իր կողմը, իսկ Տերէք, հակառակ իր վէրքին, միշտ ձախ ձեռքը կուրծքին՝ փողոցը կտրելով, կը հետեւէր անոնց հեռուէն։ Եթէ այդքան հեռու չըլլար, Բեռրօ կրնար թուչունի մը պէս գետին փռել. սակայն հիմա միւսներով ըզբաղելու առենը չէր։ Գնդակները բան մը չէին կրնար փոխել պատահելիքէն։ Եղածը եղած էր։ Միայն, զինք հալածողները իրմէ հեռու պահելու համար, սկսաւ կրակել անոնց ուղղութեամբ... եւ չարունակեց անվերջանալի ճամբան։

Ցանկարծ կանգ առաւ։ Պողոտային միւս կողմը կանգնած էր իր փնտռածը, Հայոց Եկեղեցին։ Դուռը բաց էր, եւ մոմեր կը պլպլային խորանին երկու կողմերը։ Իրիկուան ժամերգութիւնը վերջացած ըլլալու էր. ներսէն ո՛չ աղօթքի եւ ո՛չ ալ շարականի ձայն կուգար։

— Ինչո՞ւ արդեօք մոմերը չեն մարած, ըսաւ Բեռրօ ինքնիրեն։ Ներսը ամայի է. ո՛չ քահանայ կայ, ո՛չ զպիր... Անպայման տակաւին մէկը կը սպասեն... կարեւոր մէկը... Դուռը բաց ձգած են որպէսզի ուշացած անառակը ներս մտնէ։ Անառակը ես եմ... Ուրեմն Հայրը ինծի կը սպասէ, որպէսզի իմամ իր ոտքերուն եւ ներողութիւն խնդրեմ եւ ինք ինծի բանայ իր թեւերը...

Անվախօրէն կտրեց պողոտան գընդակներու տարափին տակ. բարձրացաւ երեք աստիճան եւ ինկաւ ծունկին վրայ. երկրորդ գնդակ մը եկած էր ծակել իր տանջուած մարմինը։

Կրկին ոտքի կանգնեցաւ եւ ծունկերուն վրայ ինկաւ դաւթիկին մէջ. եւ այդպէս հասաւ մինչեւ դուռը. սակայն սեմին վրայ դայթելով, երեսն ի վար փռուեցաւ եկեղեցիի մուտքի սալայատակին վրայ։

. Դուրսէն կը լսուէին ոտնաձայներ։ Քանի մը երկվայրկեանէն իր գլխուն վերեւ պիտի ունենար երեք կամ չորս ատրճանակներու փողերը, պիտի լսէր անոնց պայթիւնը եւ այս պիտի ըլլար իր մահուան աղօթքը։ Ոտքի ձայները դադրեցան յանկարծ եւ լսուեցան մարդկային ձայներ։ Դուրսը կը վիճաբանէին։ Ցանկարծ բարձրացաւ Սանչէզի հնչեղ ու վճռական ձայնը.

– Ո՛չ, Ֆրէտ, կը պոռար Մէքսիքացին, թոյլ չեմ տար որ մեզմէ ոեւէ մէկը փորձէ հաչիւ մաքրել Աստուծոյ տան մէջ... Թոյլ չեմ տար որ Աստուածամօր սուրբ նայուածքին առջեւ մարդու արիւն հոսի... Եթէ կ'ուզէք Բետրօն սպաննել, հոս կը սպաննէք...

❖

Զաւկի մը պէս որ կը համբուրէ մօրը քաղցր դէմքը, Բետրօ շրթները դրաւ պաղ եւ մաքուր քարին վրայ։ Տեղէն շարժելու ուժը չունէր, արիւնը կը լճանար իր մարմնին շուրջ. սակայն անբացատրելի խաղաղութիւն մը իջած էր իր հոգւոյն մութ խորշերուն մէջ։ Սուրբ վայրին մթնոլորտը, հոն արտասանուած աղօթքներուն եւ երգուած շարականներուն արձագանգը, կերոններուն մէջտ պլպլացող լոյսը, իր շուրջը կը կազմէին անտեսանելի զրահ մը թշնամիներուն եւ չարին դէմ։

Բայց պէտք էր մօտենար սուրբ խարանին. պէտք էր դանուէր Մօրը գրկին մէջ. պէտք էր զգար շունչը Խաչեալին, զոր լքած էր, նեղուելու համար Երկրի Իշխանին հրամանատարութեան տակ, հուրով եւ սուրով նուաճելու համար աշխարհին հաստութիւնն ու փառքը...

...զի ամենեքեան որ առնուցուն՝ սրով անկանեցին...

Ցիշեց մանկութիւնը, երբ ամէն Կիրակի հօրը ձեռքէն բռնած կը մտնէր իրենց թաղին աղքատիկ եկեղեցին եւ հոն կը մոռնար դուրսի գժուարութիւնները, տան աղքատութիւնը։ Կ'աղօթէր իր մաքուր եւ անկեղծ շրթներով. կը խօսէր Աստուծոյ հետ, կը ժպտէր հրեշտակներուն, որ կը թեւածէին խորանին վերեւ, երբ քահանան սկիհը կը բարձրացնէր։ Հոն կը դանէր նաեւ ժպիտը երկնային Մօր, որ ունէր ճիշդ իր մեռած մօր ժըպիտը։ Երջանիկ էր Աստուծոյ տան մէջ։

Կը յիշէր Մագիսդարդի կիրակիները, երբ ձիթենիի ճիւղ մը ձեռքը՝ կը վերադառնար տուն, եւ անկէ տերեւներ կը բաժնէր դրացիներուն։ Եւ ամբողջ օրը կ'ապրէր աղօթքներու եւ շարականներու տպաւորութեան տակ։

Եւ Զատկուան հրաշափառ եւ սքրբութեամբ լեցուն կիրակիները, երբ Փրկչին Յարութիւնը պատշաճօրէն տօնելու համար կը հետեւէր Անոր հրահանգին.— Առէ՛ք եւ կերէ՛ք... Իր անմեղ շրթներուն վրայ կը ստանար Մարմինը եւ Արիւնը եւ հոգին կը վերանար, կ'արբենար այս սնունդին քաղցրութեան տակ որ զինք կը դարձնէր նմանը հրեշտակներուն եւ սուրբերուն։

Բետրօ վերջին ջանք մըն ալ ըրաւ մօտենալու խորանին։ Կ'ուզէր մեռնիլ հոն, քիչ մը աւելի մօտ Խաչին թեւերուն պաշտպանութեան։ Փորձեց ծունկի գալ եւ այդպէսով, երբեմնի հաւատացեալներուն պէս, խոնարհութեամբ կատարել իր վերջին ուխտաւորութիւնը, թողութիւն խնդրել իր գործած մեղքերուն համար, խնդրել Երկնաւոր Հօրմէն, որ կրկին զինք ընդունի իր Տան մէջ։ Եկեղեցին մեղաւորներու տունն էր, եւ Փրկիչը եկած էր փրկելու իրեն պէս կորսուած ոչխարները։

Նստարաններուն կռթնելով յաջողեցաւ քիչ մը յառաջանալ։ Հիմա, արիւնը կը հոսէր առատօրէն, իր ուժը տանելով հետը. այլեւս անկարելի էր մնալ այսպէս։ Բոլոր ծանրութեամբ կռթնեցաւ քովի նստարանին։ Հաւասարակշռութիւ-

նը կորնչուց եւ դեռին ինկաւ աղմուկով։

Այն ատեն աւանդատան դուռը բացուեցաւ եւ կերպարանք մը մօտեցաւ իրեն։ Վարդապետ մըն էր։ Վերջապէս եբոյդը պիտի իրականանար։ Պիտի խոստովանէր իր մեղքերը, ինչպէս ըսած էր մանկութեան տարիներուն, Թողութիւն պիտի խնդրէր, պիտի հաղորդուէր, եւ հաշտուած Աստուծոյ հետ, հոգին պիտի աւանդէր այս սուրբ վայրին մէջ։

Այսպէս երազած էր մեռնիլ, հին եկեղեցիի մը մէջ, սրբազարդուած հաւատացեալներու աղօթքներով, իրիկնամային, երբ մեռնող արեւը կը բացուառէ դժբէթը եւ զանգակատունը։ Պիտի մեռնէր արեւին հետ, շրջապատուած Աստուածամօր մայրական ժպիտով, գործաւորի մը պէս որ յոգնած իր աշխատանքէն կը ննջէ իր արդար քունը։

Եւ յանկարծ, երկու թեւեր շրջապատեցին մարմինը, եւ ձայն մը, ծանօթ եւ ընտանի, կարծես իր իսկ ձայնն ըլլար, շշնջաց.

— Ախ, Մեսրոպ, եղբայրս, այս ի՞նչ վիճակ է...

Բեսրօ աչքերը բացաւ, մինչ նոյն ձայնը կը կրկնէր.

— Ես եմ, եղբայրդ՝ Կորիւնը, ի՞նչ ունիս, ի՞նչ պատահեցաւ։

— Կ'ուզեմ խոստովանիլ, հայր սուրբ, ըսաւ Բեսրօ։ Նախ փրկէ հոգիս։ Փրկէ հոգիս, հայր սուրբ...

Շունչը կը հատնէր. մարմնին բոլոր արիւնը հիմա կը գանուէր եկեղեցւոյ սալայատակին վրայ, խորանին առջեւ...

— Մօտերս բժիշկ մը ըլլալու է, վայրկեան մը համբերէ՛, երթամ կանչեմ։ Հիմա որ քեզ գտայ, չե՛մ ձգեր որ մեռնիս...

— Նախ հոգիս պէտք է բուժուի, եւ հոգիիս բժիշկը դուն ես, հայր սուրբ։ Եթէ ժամանակ մնայ, այն ատեն կը կանչես բժիշկը, այն ատեն կ'ըլլաս եղբայրս ու կը մտածես մարմինս բուժելու...։

— Հոգի՛դ, հոգի՛դ... Գիտեմ որքա՞ն դժբախտ եղար, գիտեմ որքա՞ն տառապեցար կեանքիդ մէջ։ Ձեմ ուզեր դատել ընթացքդ. եղբօր մը պաշտօնը չէ դատելը. եղբօր մը պաշտօնն է զոհուիլ. հոս է մարդ էակին գերագոյն արարքը։ Ես կը գուշակէի ընտրած ճամբադ, եւ վարդապետ ձեռնադրուեցայ որպէսզի կարենամ քաւել մեղքերդ. հաղայ սեւ ոգիմը, նուիրուեցայ Աստուծոյ որպէսզի աւելի մօտէն աղօթեմ քու փրկութեանդ համար։ Այսահով եղի՛ր, մի՛ վախնար ապրելէ. ես ուսերուս վրայ պիտի առնեմ մեղքերուդ բեռը, եւ ամէն օր պիտի աղօթեմ քեզի համար...

— Ուրեմն հանդիստ սրտով կրնամ ներկայանալ Աստուծոյ ատեանին առջեւ. դուն կ'ըլլաս իմ պաշտպան փաստաբանս։ Սակայն կը կարծեմ որ չի՛ բաւեր միայն Թողութիւն խնդրել. մեղքը միշտ մեղք կը մնայ եթէ չփորձենք մեր կարողութեան սահմանին մէջ գարմանել անոր հետեւանքները։ Հա՛յր սուրբ, բաւական չարագործութիւններ ըրած եմ, սակայն երբեք չեմ ուզած վնասել աղքատին, տկարին։

— Առաքլորութիւնը միայն չի՛ բաւեր, արարքը շատ աւելի կարեւոր է։ Մենք զմեզ պէտք չէ միւս մարդերէն աւելի անմեղ հռչակենք։ Հիմա միասին արտասանենք.— Հաւատամք ի մի Աստուած...

— Հայր սուրբ, հիմա ունիմ կարեւոր պարտականութիւն մը... ահաւասիկ...

Գրպանէն հանեց հաստ պահարանը, արեան լայն բիծեր կային դեղին թուղթին վրայ...

— Այստեղ կայ մեծ գումար մը... գործած մեղքերուս պտուղը։ Պահարանին մէջ կը գտնես նաեւ անուններու ցանկ մը եւ իւրաքանչիւրին դիմաց՝ թըւանշան մը, այդ իւրաքանչիւրին դարձրնելիք գումարին քանակութիւնն է... մնացեալը կը բաժնես աղքատներուն, մանաւանդ պանդուխտ աղքատներուն...

— Ըսածդ կը կատարեմ...

— Հիմա, հայր սուրբ Թողութիւն տո՛ւր մեղքերուս. եղբա՛յր ներէ բոլոր

յանցանքներս...

Բեսրօ գլուխը դրաւ Կորիւն եղբօրը կրծքին ու կամաց կամաց փակեց աչքերը յաւիտեանս։

Կորիւն վարդապետ դայն պատկեցուց խորանին առջեւ եւ ինք ծունկի դալով եղբօրը արիւնլուայ դիակին առջեւ, սկսաւ աղօթել... Երկար մնաց այդպէս, երբ ուրի եկաւ, դիշերը առած էր ամէն կողմ։ Երբ դրան մօտեցաւ, հոն նշմարեց մէկը որ ծունկի եկած՝ կ'աղօթէր։

– Ես կը կոչուիմ Սանչէզ, ըսաւ անծանօթը վարդապետին, ինչպէ՞ս է Լ'Արմէնոն։

Կորիւն վարդապետ առանց պատասխանելու խորանին կողմը ցոյց տուաւ...

– Եթէ դուք ուզէք դործ ունիք, դացէ՛ք, ես կը հսկեմ Բեսրոյին վրայ. մեռել մը պէտք չէ երբեք առանձին մնայ։

– Եղբայրս է, ըսաւ վարդապետը, Երթամ բժիշկ մը կանչեմ...

Սանչէզ ծունկի եկաւ իր ընկերոջ դիակին առջեւ։ Միտքը հանդիստ էր, ինք չէր կրակած Բեսրոյի վրայ։ Գետինը նշմարեց արիւնլուայ պահարանը, գիտէր թէ ինչ կը պարունակէր, սակայն աչքերը հեռացուց այդ փորձիչ առարկայէն... Սանչէզ կը հաւատար Աստուծոյ...

Երբ Կորիւն վարդապետ վերադարձաւ բժիշկի մը հետ, Սանչէզ միշտ նոյն տեղն էր...

Երբ ամէն ինչ վերջացաւ բժիշկին մեկնելէն ետք, Սանչէզ մօտեցաւ Կորիւն Վարդապետին.

– Փատրէ՛, ըսաւ, Լ'Արմէնոն եղբօրս պէս էր. սիրտը բարի էր, բայց միայնակ մնալով այս օտար քաղաքի մոլուցքին մէջ, սահած էր դէպի կորուստի ճամբան։ Դուք չտ՞ս բան կրնաք ընել իր հոգւոյն համար, ես տակաւին մեղաւոր մըն եմ...

Սանչէզ ձեռքը տարաւ դրպանը ու հանեց տրցակ մը թղթադրամ.

– Ահաւասիկ, Փատրէ՛, այս դրամէն բաժնեցէք աղքատներուն, ձեր ազգի աղքատներուն եւ ամէն կիրակի մոմ մը վառեցէք Աստուածամօր պատկերին առջեւ, իմ սիրելի Բեսրոյի հոգւոյն համար։

Ն. Զ.

Պէյրութ, Նոյեմբեր 1962

ՄԻՔԱՅԷԼ ԹԱՀԻՐԻԱՆՆ

ԽՕՍՔ՝ Սերմանություն

Ա՛լ չեմ հաւատար քու վարքիդ երբեք,
Սուտ ու սնապարծ ո՛վ արդարութիւն.
Ա՛լ բաւ է ըլլաս գիտակցութեանս դեկ
Եւ օրօրես զիս անվերջ, ապարդիւն.
Ա՛լ բաւ է կեղծես, ստե՞ս յարաժամ,
Եւ խօսքիդ, պո՛ռնիկ, բաւ է հաւատամ:
Զի տեսայ ես քեզ քանի՞ քանի՞ հեղ,
Գրկին մէջ մարդոց՝ կե՛ղծ-ազնուական,
Որոնք լոյսին տակ ձեւացան անմեղ,
Այլ մեղքերու խոր գիշեր մը եղան.
Որոնք օձի պէս փոխեցին շապիկ,
Դիմափոխութեամբ լի՛ըր ու գեղեցիկ.
Որոնք ծախեցին քեզ նիւթի փոխան
Ինչպէս Յիսուսը՝ Յուդան դրուժան,
Տիրանալու յակ փառքի զազրելի,
Ինչպիսիք են կի՛ն, բա՛գ, գահ ու ոսկի:

Ինչ որ ազնիւ է ու նախամեծար՝
Քան այս աշխարհին գանձե՛ր բոլոր,
Քան տիեզերքի գահե՛ր անհամար,
Քան հարիւնեւրու ծոցե՛ր բոսոր՝
Այդ արժանիքն է Մարդուն հոգեկան,
Զոր սոսկ ուրացաւ Նոր մարդը սակայն:
Լպիրշ էգի մը համբոյրին համար,
Բանակներ ոսոխ փնացան խպառ:
Իսկ տիրանալու համար գահերու,
Մղուեցան մարտեր քիրտ ու ահարկու:
Քանի՞ արքաներ եղան հայրասպան
Որպէսզի իրենց հօր գահը գրաւեն.
Այսպէս փառքերու հասնելու համար,

Ինչպիսի՞ դաւեր լարուեցան վատթար:
Օ՜ չե՛ն մեծարեր այլեւս մարդուն
Իր արժանիքին համար հոգիկան,
Եւ պարկեշտութիւնն ա՛լ արժէք չունի,
Նիւթն է գերազանց, ի՞նչը աշխարհի:
Ա՛ն որ վեհանձն է ազնիւ ու բարի՝
Նոր ըմբոնումով վախկոտ կը կոչուի:

❖

Բարի էի ես, անմե՛ղ ու ազնիւ
Ծաղիկի մը պէս··· ու բացուած հազի՛ւ
Մարդ–մեղուները խուժեցին յայնժամ,
Ջանացին ծծել հիւթս բաղցրահամ,
Ջանացին խլե՛լ ու տանիլ, – մարդի՛կ –,
Ինչ որ ունէի բաղցր ու գեղեցիկ·
Եւ դարձուցին զիս այսպէս չա՛ր, անգո՛ւթ,
Նա որ հեզ էի, անմե՛ղ, բարեգո՛ւթ:
Ա՛լ չունի հոգիս երկինքներ լազուրթ
Եւ երջանկութեան շողեր երփներանգ,
Զարացայ եւ ես ու դարձայ անգութ,
Խաւարը վշտի եղաւ ինձ պատանք·
Ցանախ չար մարդոց եղայ անմեղ զոհ,
Որսացի զոհեր եւ ես իմ կարգիս,
Ու վատթա՛ր օրէն եղայ ինքնագոհ
Խելագարի պէս ու իբր Նարգիս:

Իսկ դուն պարտուած ո՛վ արդարութիւն՝
Նեխեցար սատկած շան դիակի պէս,
Ա՛լ չե՛մ հաւատար երբեք ես մարդուն,
Ա՛լ չեմ հաւատար լպիրշ ոչ իսկ քեզ՝
Զի վանառուեցար դուն պոռնիկի պէս:
Թէպէտ քրիստոնեայ եմ դաւանանքով,
Բայց գործնականով ե՛մ հակասական,
Նենգ դաւերու դէմ խիստ վրիժառու
Իսկ չարիքի դէմ միշտ ակն ընդ ական:
Ես Նազովրեցի սուրբ Յիսուս մը չեմ
Որ հալածանքներ սիրով ընկալեմ,
Բա՛ւ է իմ ազգս եղաւ մարտիրոս
Ի սէր հաւատքիդ նահատակ Մեսիա,
Քանի՞ տարիներ ու հազարամեայ:
Եւ բա՛ւ է ըլլանք հոգիով ստրուկ,
Ինչպէս անցեալին,
Դաժան պահերու ճգնաժամային,
Զէնքի՛ փոխարէն խաչը մեր ձեռքին,
Երկիւղի աղօթք մեր չոր շրթունքին՝
Իջա՞նք ռազմադաշտ···
Լոկ ապաւինած

Սուրբերու թոռ պատգամներուն սին:
Ո՞վ արդարութիւն, դուն իմ ազգիս դէմ
Եղար դրուժան ու եղար դժխեմ:
Եւ ճակատագիրն իմ հայրենիքիս
Զիս կոփեց այսպէս,
Որ չհաւատա՛մ սուրբերու խօսքին,
Եւ չհաւատամ պի՛ղծ արդարութիւն
Կոչուող պռանիկին,
Հաւատամ դե՛ռ
Ոսոխ Աստուծո՛յն այդ կաշառակեր:
Արդ աջ երեսս հարուածող մարդոց
Ձեմ հրամցներ ես երեսս ձախ,
Ինչպէս պատգամեց սուրբ Նազովրեցին, —
Երբ անոնց սիրտը բոյն է կարիճի:
Նե՛նգ գազանին դէմ ելլալ մարդկայի՞ն՝
Այդ գաղափարին
Ես կը վճարեմ յիմարութեան գին:
Պատմութիւնը իր դիակին վրայ
Ունի վէրքերու
Պիղծ ու զզրելի շարան մը հսկայ,
Որոնք հետքերն են մարդ-գազանների՝
Սուլթան-խաներու:

Զո՞ւր ես յուսացի, ո՞վ արդարութիւն,
Տեսնել քեզ անբիծ, անաղա՞ղտ, յստա՞կ,
Տեսնել քեզ յաւերժ յաղթական, արքուն,
Զարմանքները ներքանների տակ,
Տեսնել քեզ անարգ վատերուն գլխուն
Որպէս վրիժառու ու ռաստռզ փայլակ,
Տեսնել քեզ յաւերժ ո՞վ արդարութիւն
Երազներուս պէս կոյս ու անապակ:
Բայց ցզմուեցան բարիները ընդմիշտ,
Ներքանները տակ մարդոց ամբարիշտ,
Ցանախ չարն իշխեց այս երկրին վրայ,
Ու հալածուեցաւ տկարն անխնայ:
Զե՛մ հաւատար քեզ ո՛վ արդարութիւն,
Զի դուն բացակա՞յ եղար յարաժամ,
Զի քեզ դիեցնող Ցիսուսն իմաստուն
Նոյնպէս զոհ եղաւ ոճիրին դաժան:
Եւ մեծագոյններն ոճրագործներուն,
Եղան մարդիկն այն որոնք մանաւանդ
Երդուընցան անվերջ քու սուրբ անունիդ.
Արդ թո՛ղ որ զոչեմ.— քեզ՝ եմ ճակտիդ
Ո՞վ արդարութիւն՝ հինաւուրց հիւանդ:

Ա. Թ.

Հայրենասիրական ՀԱՍԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

(ՎԷՊ)

●

Գրեց՝ ԲԻՒԶԱՆԴ ԿՌԱՆԵԱՆ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

Ցաշորդ առաւօտ, հապա թէ Լեւոնն ու Թագուհին մեկնած էին, Նազիկը՝ սուրճին ափսէն ու գաւաթները ձեռքին՝ մտաւ Լեւոնին մօտ։

– Բարի լոյս, Մարիամ Խաթուն, – ըսաւ ու ներս մտաւ։ – Ի՞նչ կ'ընես, գործերդ չա՞տ են... եկայ միասին սուրճ խմելու... Լեւոնը ի՞նչպէս է, շատ գրաղած կ'երեւի... Ըսել կ'ուզեմ, խելքը գլուխը չ'երեւիր... Ի՞նչ է արդեօք պատճառը...

Մարիամ Խաթուն մտածեց. «Նորէն բան մը կայ լեզուին տակ։ Առտուն կանուխ եկած է բամբասելու»։

– Գիտե՞ս, Մարիամ Գանի, դուն չատ միամիտ ես... Սիրտդ մաքուր է եւ կը կարծես, որ ամէն մարդ քեզի պէս է...

«Ահա թէ ի՛նչ, մտածեց Մարիամ Խաթուն, ահա թէ ի՛նչ։ Թակարդին մէջ մուկ մը իկած է անպատճառ»։

– Ազնիւ է միշտ լաւը տեսնել, ըսաւ։

– Հարկաւ, ատիկա շատ ճիշդ է, ես ալ կը հաւատամ ատոր եւ, Աստուած վկայ, մարդոց թերութիւնները բնաւ չեմ տեսներ, ուրիշներու գործին չեմ խառնուիր բնաւ... աչքերս քոռնան...

«Ստախօս կին, Աստուած հոգիիդ աչքերը բանայ», ըսաւ պառաւը մտովի։ Երբ Նազիկ ոսկէր երդումներու շարքը, բացայայտ էր, որ լեզուին տակ բամբասանքը ծուարած էր։

– Հաւատա, ես ալ քեզի պէս միամիտ կողմ մը ունիմ, սիրտս այնքան մաքուր է, որ աչքերուս առջեւ կատարուածն անդամ չեմ տեսներ, Աստուած վկայ... Այդքան ալ միամտութիւն կ'ըլլա՞յ... Սակայն, մարդ ըսածդ մարդով կ'ըլլայ... Բաներ կան, որ չես կրնար չտեսնել եւ... չես կրնար չլսել... Արեւդ վկայ, գաւակներուս մեռնիլը տեսնեմ...

– Մեղք է, աղջիկս, մի երդուիր գաւակներուդ վրայ։

– Իրաւունք ունիս, Մարիամ Գանիս, իրաւունք ունիս, ջահիլութիւն է, բայց աչքս քոռնայ... Հիմա, խնդիրը սա է... երբ երէկ գիշեր

դուն, վեր, Ովսաննա Պաճըին եկած էիր... Ոտքերս կոտրուէին եւ տեղէս չշարժէի... աչքերս քոռնային եւ չտեսնէի...

– Ըսելիքդ ըսէ, աղջիկս։

– Կը պատրաստուէի ես ալ վեր դալու պահ մը... Փողոցին դուռը հազիւ պիտի բանայի, երբ ձեր սենեակէն խօսակցութեան ձայն մ'առի... Կարծեցի որ դուն դարձեր ես եւ Լեւոնին հետ կը խօսիս... Մօտեցայ, գըլխս դռնէն հազիւ երկարեցի...

Մէկէն ձեռքով բերանը փակեց։

Պառաւը անհաճոյ հոտ մը առաւ։

– Ի՞նչ տեսնամ... Երանի աչքս քոռնար ու չտեսնէի... Ի՞նչ տեսնամ... Լեւոնդ եւ այդ... վոթկած աղջիկը... Թագուհի ըսուածը... Ես քեզի չէի՞ ըսեր...

Պառաւը դադրեցուց աչխատանքը եւ ուղիղ ու խիստ՝ Նազիկին աչքերուն մէջ նայելով՝

– Ի՞նչ տեսար։

– Ի՞նչ կ'ուզէիր որ տեսնէի... տուէ աւելին... Նստած էին քով քովի։ Քիչ մնացեր էր իրարու կիրկը նստէին... Ցիսուս վկայ...

– Ա՞յդ է եկածը, – ըսաւ պառաւը եւ շարունակեց կարը։

– Չէ՛, չէ՛, տահա աւելին կայ... Տղաղ... ըսել կ'ուզեմ Թագուհի ըսուած վհուկը... չի ալ ամչնար... խայտառակ աղջիկը... բռնած էր Լեւոնիդ ձեռքը...

– Ի՞նչ կ'ըլլայ, – ըսաւ մայրը, առանց գլուխը դարձնելու։

– Ի՞նչ կ'ըլլայ... Մեղայ Աստծոյ... դեռ աւելի ի՞նչ կ'ուզէիր որ ընէին... Այտեղ, քու տանդ մէջ, քու բացակայութեանդ... Աւելի ի՞նչ կ'ուզէիր...

– Ամօթ է, աղջիկս, սիրող մաքրէ, դաւակներ ունիս, չի վայլեր... Այդ աղջիկը լուրջ, պատուաւոր աղջիկ է, մեղք է ուրիշը մրոտելը... Թող ամէն մարդ իր դործին խառնուի...

– Վա՛յ, ահա թէ ինչ, դուն հիմա անո՞ր կողմը կը բռնես, ան ալ իմ տեսածէս յետոյ... Եթէ աչքովդ տեսնէիր ձեւերնին, այդպէս ալ պիտի չխօսէիր...

– Ալ կը բաւէ, մոռցի՛ր, – ըսաւ Մարիամ Խաթուն հրամայական չեչտով։ Դէմքին եւ ձայնին մէջ ոչնչի տիրական չեչտ մը կար, որ Նազիկ չկրցաւ բերանը բանալ այլեւս։

Լռութիւն տիրեց։ Պառաւը հանդարտօրէն կը կարէր, ինք իր մէջ ամփոփուած, կարծես մինակ ըլլար։ Նազիկ զդաց, որ իր ներկայութիւնը անբաղձալի էր։ Կամաց մը, առանց բառ մը արտասանելու, ելաւ սենեակէն, անցաւ դաւիթը, մտաւ իրենց սենեակը եւ դուռը ահագին աղմուկով փակեց։

Երեկոյեան, երբ Թագուհին իրենց սենեակը մտաւ, մայրը սիրալիր կերպով ընդունեց աղջիկը, ըստ սովորականին։ Լեւոնը, գործէն դառնալէն ի վեր, ամէն պահ սպասած էր, որ մայրը ակնարկութիւն մը ընէր։ Զարմանալիօրէն, մայրը անտարբեր ձեւացած էր։ Լեւոն լաւ գիտէր, վըստահ էր, որ նոյն առաւօտն իսկ, Նազիկ կոչուած մսակոյտը, իր խոշոր կոնքերն ու կուրծքերը երերցնելէն, եկած եւ պատմած էր դէպքը, առասպելական ընդլայնումներով։ Կը զգար, որ մայրը տեղեակ էր։ Զէր ըմբռներ ինչո՛ւ լռութիւն կը պահէր այդ մասին։

– Հասկցայ ինչ որ կրցայ, ըսաւ Թաղուհի, – ըսել կ'ուզեմ՝ Ամերիկայի պայմաններուն մասին։ Կ'ըսեն, թէ այնտեղ, շատ մը ուսանողներ կ'աշխատին ու կը կարդան։ Դպրոցէն վերջ, զանազան գործեր կը ճարեն ու իրենց ծախսերը կը հոգան, ինչպէս՝ պնակ լուալ, ապակի մաքրել, դառարան մաքրել եւայլն։ Լեւոնը փայլուն տղայ է, կրնայ շուտով ուսանողական յատկացում մը ձեռք բերել։ Կարեւորը իր ոտքը Ամերիկա դնելն է, ատկէ վերջ Աստուած մեծ է...

Աղջիկը, անշուշտ, այս բոլորը թուրքերէն ըսաւ, որ մայրը հասկընայ։

Մայրը գլուխը օրօրեց.

– Ատիկա իմ չոր գլխուն չպատկեցաւ։

– Մայրիկ ջան, – յարեց մեղմօրէն Թաղուհի, – տղուդ համար հոս ապագայ չկայ, շատ շատ դերձակ մը պիտի դառնայ... Արտասովոր ընդունակութիւններով օժտուած երիտասարդ մըն է, եթէ ուսումը շարունակէ, վստահ եմ, մեծ մարդ մը պիտի ըլլայ... Մեղք կ'ըլլայ, եթէ զլացուի իրեն այդ առիթը...

– Կարճ խօսքով, – ըսաւ մայրը, – տղա՛ս, հոն հասնելուդ պէս գլխուդ ճարին պիտի նայիս։

– Ճիշդ այդպէս, – հաստատեց աղջիկը։

Մայրը դարձաւ տղուն։

– Լաւ կ'ըմբռնե՞ս, զաւակս։

Տղան բացակայ էր, կորսուած մտքերու մէջ։

– Առաջին դարիպութիւնդ պիտի ըլլայ, պիտի կրնա՞ս ուղիղ գըտնել։

– Դժուար պիտի ըլլայ, – ըսաւ աղջիկը, – մինչ կողմէ՝ միակ ազգին է, մէյ մը նետէ ինքզինքը Ամերիկա, նոր երկիր է, ձեռքէն բռնող մը կ'ըլլայ... Ինչ տղաք դացին եւ փրոֆէսօրներ դարձան... ձեռքէն բռնող մը կ'ըլլայ... Ազգականներ ալ ունիք...

– Եթէ եղունգ ունիս, գլուխդ քերէ, կ'ըսէր հայրս, – ըսաւ մայրը։

– Ի հարկէ, ես խառնուելու ալ իրաւունք չունիմ... Ձեր որոշելիքն է... Աւելի լաւ է երթամ...

– Ձէ, աղջիկս, նստէ, քու խորհուրդներուդ պէտք ունինք... Ոգի ըլլաս... Գեղմէ մօտիկ մէկը չունինք...

– Ձէ, մայրիկ, կարծեմ մայր ու տղայ դուք առանձինն խօսիք աւելի լաւ է... Եթէ ինծի պէտք ունենաք, հոս եմ... Գիշեր բարի...

Աղջիկը կ'ուզէր, որ Լեւոն մեկնէր։ Իր ապաղան այդ կը պահանջէր։ Ուղղամիտ ըլլալու իր ճիգը դինք շատ առոջ տարած էր, – մտածեց մէկէն։ Իր միակ երջանկութեան դէմ կը դաւէր ակամայ, անոր մեկնումը դիւրացնելով։ Տղան կորսնցնելու մտքը դաշոյնի հարուածի պէս խոցեց սիրտը։

Լեւոն բացակայ էր դեռ։ Լսեց ու չիմացաւ վերջին խօսքերը եւ աղջկան մեկնիլն իսկ չնկատեց կարծես։

– Էհ, տղաս, ի՞նչ կը մտածես, բան մը չըսիր։

Տղան վերադարձաւ ներկային.

– Ձեմ գիտեր, մա՛յր, չեմ գիտեր։

– Աստծոյ ձգէնք, տեսնենք ինչ ճամբայ ցոյց կու տայ... Աղօթենք... Եթէ երբ նեղը մնամ, Աստծոյ կ'ապաւինիմ... Դուն ալ նոյնը ըրէ... Մեծ է իր զօրութիւնը...

Տղան չհամոզուեցաւ։ Այստեղ աստուածային բան չկար։ Որոշում մը տալ պէտք էր եւ այդ որոշումը իրենք պիտի տային։ Աստուածային բան չկար։

Անշուշտ, կ'ուզէր մեկնիլ։ Մեկնիլ բառը ինքնին կախարդանք մըն էր։ Մեկնիլը հրաշալի էր։ Մեկնիլ առօրեայէն, ներկայէն, հոգերէն, շրջապատէն։ Անծանօթ հեռանկարներու ակնկալութեամբ։ Մեկնիլը հաւասար էր նորին, խորհրդաւորին, անյայտին։ Դեռ չ'ապրուած զգայնութիւններու, նոր հանդիպումներու, արկածներու։

Միակ ելքն էր։ Միշտ ուզած էր ուսումը շարունակել։ Թափանցել իրերու եւ երեւոյթներու խորհուրդին։ Նոր գնդեցիութիւններ եւ հոբիզոններ նուաճել։ Անձը լիացնել եւ պարտադրել կեանքին։

Ու մէկէն աչքերը սեւեռեցան մօրը եւ զգաց, որ ժամանակը քիչ է, ժամանակը իրենց դէմ է։ Պարտականութիւններն ու երդումը՝ իրարու թշնամի, միշտ անհաշտ։

Զգաց, որ կաշկանդուած էր։ Կրիայի մը նման բանտարկուած էր իր պատեանին մէջ եւ երբեք, երբեք պիտի չկարենար ձերբազատուիլ։ Անձը տենդաբար կ'ուզէր թռիլ անկաշկանդ, բայց պատեանը դայն կը քաշէր վար, գերի՝ իր սահմաններուն նախորոշ։

Օդն ալ սկսաւ պակսիլ։ Քարիւղի լամբին բոցը հազիւ իր շուրջը կը լուսաւորէր։ Իրերը դեղին, մաշած եւ անիրական, կը տարբալուծուէին քանի հեռանային կեդրոնէն։

– Քիչ մը ակումբ երթամ, ըսաւ։

– Լաւ կ'ընես, տղաս...

Մայրը գիտէր, որ լոյսն ու խաւարը պայքարի էին մտեր եւ Ցաւոբ, առաւօտեան դէմ, կը կռուէր հրեշտակին հետ...

Վանեցի Մայրիկը ամբողջ օրը չէր երեւցեր։ Դուռը առտուընէ ի վեր, բացուած չէր բնաւ։ Նազիկ քանի անգամ ականջը փակցուցեր էր դոց դրան եւ սպասէր։ Ոչ մէկ ծպտուն։ Բանալիի նեղ ծակէն դիտեր էր ներսը։– Աղքատի սենեակին թշուառութիւնը պարզեր էր իր մերկութիւնը։ Կոտրած աթոռ, անտաշ փայտէ սնտուկը, խսիրը գետնին։ Ուրիշ ոչինչ։ Անկողինը կը մնար իր տխրութեան ծիրին դուրս։ Աջ աչքը լայն լայն բացած, շարժեր էր բանալիի ծակին շուրջ, – առանց արդիւնքի։

Երբ Լեւոն երեկոյեան գործէն դարձաւ, Նազիկ խոշոր յետոյքը տնկած, պատուհին դրան առջեւ կկզած էր։ Տղան՝ մէկ կողմէ ծիծաղեցաւ անճոռնի դիրքին վրայ, միւս կողմէ՝ դարշանք զգաց։ Այս կիներ ամօթխածութեան նշոյլն իսկ չունէր եւ անպատկառօրէն քիթը կը խոթէր ամէնուն կեանքին ու ինչքին մէջ։

Նազիկ շակուեցաւ եւ Լեւոնը իր եղբն կանգնած տեսնելով, բնաւ չխղնեցաւ։

– Ձայն ձուն չկայ... առտուընէ ի վեր դուռը չբացաւ... Աստուած բարին ընէ...

– Թերեւս տունը չէ։

– Ինչ կ'ըսես տղաս, առանց իմ գիտակցութեան մարդ չի մտներ ելլեր այս տունէն։ Իմ աչքերէս ճանճ չի փախիր։

Այս ըսելով, խորհրդաւոր կերպով նայեցաւ Լեւոնին աչքերուն խորը։ Տղան նայուածքը փախցուց։

– Մէյ մը դուռը զարկ, – թելադրեց։

– Քանի անգամ զարկի։

Մեղմօրէն զարկաւ։ Աւելի ուժգին զարկաւ, կանչեց «Մայրի՛կ, մայրի՛կ», – ոչ մէկ պատասխան։

Դէմքերը մռայլեցան։ Արդեօք հիւա՞նդ էր։ Նաղիկ դարձուց գրան բանալիքը եւ հրեց. դուռը ընդդիմացաւ. ներսէն կղպուած էր։

– Աստուած բարին ընէ, – ըսաւ Մարիամ Խաթուն։

Ամենապէսն ու ամենակարգն Նաղիկը չուարած, դարձաւ անոր.

– Ի՞նչ պիտի ընենք։

Մայրը փորձառու կին էր։ Ցօնքերը կիտեց, աչքերը յառեց անդունդը, ըսաւ մեղմօրէն։

– Տղաս, գնա գռնապանը կանչէ, դուն ալ քիչ մը ակումբ գնա, ընկերներուդ հետ ժամանակ անցուր։ Ժամը ուրիշն անգին չմնաս։

Տղան կռահեց, որ լուրջ, ծանր բան մը պատահած էր։ Մինոլորտը արդէն ընկճուած էր անտեսանելի էակներով։ Մտքէն անցաւ այն՝ ինչ որ բոլորին մտքէն անցած էր։ Ըմբռնեց մօրը զգուշութիւնը։ Դեռ չատ երիտասարդ էր մահուան դէմքին նայելու։

Գռնապանը վեր գրկեց։ Երբ փողոց ելաւ, զգաց որ Եսին բան մը թողուց, որուն երբեք պիտի չմիանար։

Ուշ ատեն երբ տուն դարձաւ, կիներ հաւաքուած էին մայրիկին սենեակը, որուն դռները առաջին անգամ ըլլալով լայնօրէն բացուած էին։ Դիմացը, մէջտեղը, նստած էր քահանան, խունկին ծուխը բռնած էր տունը։ Լացի ձայներ կը խառնէին լռութիւնը։

Լեւոն չուարած կեցաւ։ Ալ աչքը կծկած, բերնին ալ անկիւնը ծամծռած, ողբերգական երեւոյթով մը։ Մարին մէջ տեղի կ՚ունենար պատահածին գիտակցութիւնը, իսկ մեքենաբար կը ղնէր այս ընդմիշտ փակ սենեակին պարունակութիւնը։

Գորշ սպիտակ պատեր, խսիր մը, գոյնը նետած ու պատառոտած տիւան մը, խարխլած աթոռ եւ երկաթապատ սնտուկ մը։ Ուրիշ ոչինչ։ Աչքերը գամուեցան սնտուկին վրայ։ Այդ փակ սնտուկը գաղտնիք մը կը պահէր։ Ցիշեց սնտուկները հեքիաթներուն, որոնց մէջ առասպելական գանձեր կը պահուէին։ Ասիկա, բացայայտօրէն, գանձ չէր պարունակեր։ Խորհուրդ մը կար հոն թագնուած։ Ուրիշներուն չվերաբերող, եզակի, անձնական։

Մայրը ձեռքով նշան կ՚ընէր իրեն։ Մտաւ սենեակ։ Մօրը թեւադրանքին անսալով, համբուրեց քահանային ձեռքը եւ գլուխը կախ, ետ ետ երթալով, նստաւ պարապ աթոռի մը վրայ։ Նկատեց, որ իրենց աթոռն էր։ Գլուխը չդարձուց, բայց տեսաւ, որ իր քով նստած էր Օր. Թագուհին։

Ո՞ւր տեսած էր այդ քահանային դէմքը։ Որո՞ւ կը նմանէր։ Ի հարկէ կը ճանչնար Տէր Գարեգինը, իրենց տաներէցն էր։ Սեւ ու ճերմակ մօրուքով, կարմիր այտերով, խոշոր արծուեքիթ եւ մարած, թախծոտ աչքեր։

Ո՞ւր տեսած էր այդ դէմքը։ Սեւ, լաւ գծուած յօնքերն ու աչքերը։

– Աստուած լուսաւորէ հոգին... Միացաւ իրեններուն...

– Կեանքը կեանք չէր, – ըսաւ մէկ ուրիշը, – այս աշխարհէն չէր, հոս չէր ապրեր... Ողջերուն հետ չէր... կ՚ապրէր մեռածներուն հետ...

Լեւոնին գիտակցութիւնը բռնեց վերջին խօսքերը, զանոնք մեկուսացուց եւ փարեցաւ անոնց իմաստին։

«Ողջերուն հետ չէր... կ'ապրէր մեռածներուն հետ...»

Խորունկ խօսքեր, որոնք հարազատ էին իր ներքին յոյզերուն։ Բառերը երբեմն այնպէս խոր ու համապարփակ իմաստներ ունէին։

Ողջերը զինք չէին հետաքրքրեր հիմա։ Ո՞վ էին մեռելները։ Ողջերը անցուորդ էին, միւսնե՞րը։— միշտ ներկայ, յաւիտենական։ Մայրիկը հոս էր, իր սենեակին մէջ, որուն մերկութիւնն ու տխրութիւնը բացուած էին աշխարհին հիմա։

Նազիկին հետաքրքրութիւնը մասամբ գոհացած էր։

Մէկէն լոյս մը ծագեցաւ մտքին մէջ։ Դիտէր, թէ ինչեր պահած էր մայրիկը երկոթապատ, կզգուած սնտուկին մէջ։ Իր կորսուած, մորթուած հարազատներուն նկարները, զգեստները, մազերու խուրձ մը թերեւս, յիշատակներ, յիշատակներ։ Սովորական իրեր, որոնք նշխարներ դարձեր էին։ Խորհրդանիշը բացակներուն, մեռածներուն, որոնք ապրող գոյութիւններ դարձեր էին հիմա։

Խեղճ Մայրիկ, այս աշխարհի վրայ կորսնցուցեր էր ամէն ինչ, ապրեր էր բացակներուն հետ։ Հիմա, այլեւս, միացած էր անոնց։

«Քահանան ո՞ւր տեսած եմ», կրկնեց իւրովի։

Այդ սեւ աչքերն ու սեւ յօնքերը։ Թախծոտ նայուածքը։

— Հոգ էր, հոգ դարձաւ... Անունը եւ գործը մնացին, — արտասանեց քահանան։

Անուն եւ գործ։ Անունն իսկ ծանօթ չէր ոեւէ մէկու։ Գործե՞ր — Աստուած գիտէր միայն։ Ի՞նչ մնաց Մայրիկէն։ Որեւէ վնաս չհասցուց ուրիշին։ Կ'ապրէր իր գոյութիւնը, ուրիշներու գործին չէր խառնուեր։

Ի՞նչ մնաց Մայրիկէն։ Իր զաւակներն իսկ, իրմէ առաջ, մեկներ էին։ Մէկէն հարցում մը ցցուեցաւ.

— Թուրքերը։ Ներե՞ց Թուրքին։

Հիմա որ ձայնը խզուած էր, չէր կրնար անիծել, այլեւս մեղաւորը տարբալուծուած էր, հիմա՛, ներա՞ծ էր Թուրքին։

Աչքերը յառեց քահանային։ Քահանան Աւետարանին մէջ կախած էր դէմքը։ Մօրը դարձաւ. աչքերուն խոշոր արցունքներ կը գողային։ Օր. Թագուհի՞ն։— կը նայէր իր աչքերուն, ուղիղ, խիստ մինչեւ իսկ։ Կարծես կուահած էր իր խորհրդը եւ պինք կը սասէր վարժուհին։

Ոտքի ելան։ Ցիրոյ խօսքը հնչեց սենեակին մէջ, ծանրութիւնը ինկաւ սրտերէն։ Ցրուեցան սգաւորները։

Նազիկին աչքերը ուռած ու կարմրած էին արտասուքէն։

Ցաջորդ օր, մէկ տէրտէր ու լուսարար, քանի մը սգաւոր կիներ, թաղեցին Մայրիկը, Աղեքսանդրիոյ հայոց գերեզմանատան ձրիներու կողմը։

Ամէնէն շատ ու բարձր լացողը եղաւ Նազիկը։

Ո՞վ կ'ըսէր, որ այդ շատախօս ու հետաքրքիր կինը այդքան բուխ սիրտ մը ունէր։

Նոյն կէսօրէ վերջ, Առաքնորդարանի կողմէ պարոն մը եկաւ եւ բացին սնտուկը։ Ոչ ոք չունէր Մայրիկը աշխարհի վրայ։

Նազիկ յուզուած էր. սու

ն ու կսկիծը մոռցած կրկին անձնատուր էր եղեր իր բնածին հետաքրքրութեան։ Փէշերը հաւաքած, աչքերը լայն բացած, հեւ ի հեւ կը սպասէր կղզանքին բացուելուն։ Դուռն բանալին վերջապէս եւ բացին։

Լեւոնին գուշակութիւնը հիշեց էր։ Քանի մը կտոր զգեստեղէն, դեղնած լուսանկարներ, նամակներ, երեք օսմանեան կարմիր ոսկի եւ... Նազիկ գոյնը նետեց, քիչ մնաց նուազէր...

Լաթերու մէջ փաթթուած... ոսկորներ... մարդկային ոսկորներ... հոգի հոտ մը տարածուեցաւ սենեակին մէջ։

Առաջնորդարանի պաշտօնեան եւս դունատեցաւ, Լեւոնին մայրը խաչակնքեց «Տէր Ողորմեա» դոշելով։ Նազիկ հիւանդ զգաց, աթոռի մը վրայ փլաւ։

Տէր Զօրէն բերուած ոսկորներ էին։ Կասկած չկար այդ մասին։ Աճիւնները սիրելիի մը։ Զաւկին հաւանօրէն։ Գանկը չափահասի գանկ չէր։

Աչքերուն պարապ փոսը, քթին խոռոչը, ցաւագին բերանը – ահռելի էին։ Գանկին ետեւի մասը ճզմուած էր։ Հաւանաբար, քարով մը կամ լախտով մը։

Ահռելի էր։

Տէր Զօրէն ինամով բերած էր հետը, դոնէ անոր ոսկորներուն հետ ըլլալու համար։

– Մեր ժողովուրդի քաշածը, – հառաչեց Նազիկ։

– Անցեալը մոռնալու է, – յարեց Առաջնորդարանի պաշտօնեան, – այս ազգը մոռնալ սորվելու է։

– Բաներ կան, որ չեն մոռցուիր, որդի, – ըսաւ Լեւոնին մայրը։

– Գիտեմ, դժուար է, անմարդկային գուցէ, բայց պէտք է մոռնալ։ Հերիք է որքան լացինք։ Ապրելու ենք ողջերուն համար, տակաւ եւ տեւելու համար։ Լալով տեղ չենք հասնիր։ Օրինակ, այս պառաւը... այս ոսկորները... Լաւ չէ, լաւ չէ... Ինչպիսի ողբերգութիւն ապրած ըլլալու է... Ի՞նչ է օգուտը... Մե՛ղք, մե՛ղք...

– Իրաւունք ունիս, որդի, – ըսաւ Լեւոնին մայրը։

– Հարկաւ իրաւունք ունի, – մէջ մտաւ Նազիկ, – Ի՞նչպէս կարելի է ապրիլ սիրածիդ ոսկորներուն հետ...

– Այդ ոսկորները, աղջիկս, այդքան ալ ահռելի չէին իրեն համար... Ընտելացած էր անոնց... Իր ոսկորներն էին, իր սեփական մարմնէն... Դժուար է պոկել, նետել այն՝ ինչ որ մասն է էութեանդ... կամ թողուլ ետին, լքել ու հեռանալ... Թէկուզ անկենդան աճիւններ ըլլան... Դժուար է լքել ու հեռանալ... Ես ձգեցի, դուկիս համար, զայն փրկելու համար... Բայց ամէն գիշեր երազիս մէջ կու գան ինծի... Խօսելու օգուտն ի՞նչ է... շատ խօսքի մէջ ցաւ կայ...

Այդ պահուն, Լեւոն գործէն վերադարձաւ տուն։ Բարեւեց եւ իրենց սենեակը մտաւ։ Խուսափեցաւ պառաւին սենեակը մտնելէ։

– Վերցնենք ասոնք, – փսփսաց մայրը, – մեղք է, թող չտեսնէ, այդ տարիքին...

Բոլորը համաձայնեցան։ Իրերը տեղաւորեցին սնտուկին մէջ եւ կղպեցին։

– Վաղը բեռնակիր մը կ'ուղարկեմ ու կը վերցնենք սնտուկը։ Աղքատի մը կու տանք, ինչ որ բանի կը ծառայէ, – ըսաւ պաշտօնեան ու մեկնեցաւ։

Քարիւղի լամբը մարեցին ու դռները փակեցին։

– Ես այս գիշեր կը վախնամ, – ըսաւ Նազիկ, – այս ոսկորները աչքիս առջեւէն չեն երթար...

– Դուն ամուսին ունիս, – յարեց պառաւը, – ան քեզի ուժ կու տայ...

Օր. Թագուհին երբ առն հասաւ, կարծես տունը պարպուած էր։ Բոլորին դռները փակ էին եւ ձայն չէր ելլեր։ Նաղիկին երկու սառանի ձաղերն իսկ լուռ էին այդ երեկոյ։

– Ի՞նչ է, տղաս, այսօր շատ յոգնած ես։

– Ամբողջ օրը ոսգին անդին վազվզեցի, մէկ յաճախորդէն միւսը։ Մայրիկ ջան, իմ գործս չէ։

– Գիտեմ, զաւակս, գիտեմ։

– Ես ո՛ւր, դերձակութիւնը ո՛ւր։ Յետոյ, մարդուկը գիս ծառայի տեղ կը դնէ... Այլ զգուեցայ... Օրն ի բուն կը կրկնէ. վեր մինչեւ այս վիճակիս հասնիլս, ինչե՞ր քաշեցի... Օղլում, հիմա մէկ օրէն միւսը վարպետ կ'ուզեն ըլլալ... Գէտք է արհեստին ամենավարի սանդուխէն սկսիլ... հիմա կ'ուզեն վերէն սկսիլ... Ք'ըլլար, օղո՛ւլ, չ'ըլլար... Դուն դեռ շատ պանիր հաց կ'ուզես... Աչքդ բաց... Նայէ՛, սորվէ... վազէ՛, աշխատէ... Դեռ չա՞տ հաց... Հոմը մէկ օրէն չչինուեցաւ...

– Համբերէ, զաւակս, վերջը լաւ կ'ըլլայ, Աստուած ուրիշ դուռ մը կը բանայ... Ձյուսացած քարդ գլուխ կը պատռէ...

Տղան փոխեց նիւթը.

– Այդ խե՛ղճ Մայրիկը...

Մայրը գիտէր, որ տղան շատ ազդուած էր մահէն։

Ցառակը պառկոզ խոռվքները մակերես էին բարձրացեր։

– Ազատեցաւ խեղճը։ Ի՞նչ կեանք էր։ Բոլորը մեռած էին, ինք մնացեր էր միայն։ Որո՞ւն համար ապրէր։ Ի՞նչ բանի համար։ Աստուած ազատեց զինք։

Համոզիչ էր, բայց եւ այնպէս...

Առջի օր դեռ կ'ապրէր, կը շարժէր, կը խօսէր։ Հիմա, չկար այլեւս։ Հոգին տակ պառկած էր։ Չէր կրնար հաշտուիլ, չէր կրնար ըմբռնել։ Յետոյ, Մայրիկին տառապանքը, անոր ճակատագրին դաժանութիւնը, իր անդամահատուած եւ յօշոտուած էութիւնը՝ կը ցոլանային իր մատաղ հոգիին պայծառութեանը վրայ եւ զինք եւս կ'առնէին օղակին մէջ։ Չէր կրնար թօթուել ողբերգութիւնը վրայէն, ըսելով— Իմս չէ, ինծի ի՞նչ։ Ի՞նչպէս թէ իրեն ինչ։ Այդ անողոք իրականութեան ինք եւս կապուած էր, իրեն եւս կը վերաբերէր։

– Այս իրիկուն, Առաջնորդարանի պաշտօնեան եկաւ, ցուցակագրեց պառաւին իրերը, բացաւ սնտուկը...

– Ի՞նչ կար սնտուկին մէջ, – ընդմիջեց տղան։

– Հագուստները, լուսանկարներ, նամակներ եւ...

– Ե՞ւ, – պնդեց տղան։

Մայրը դժուարացաւ։ Կը ճանչնար որդին. զգայուն էր եւ շուտ ոգեւորուող։ Կը զգար տղուն հոգիէն անցած դարձածը։

– Լաթերու մէջ փաթթուած... ոսկորներ...

– Ոսկորներ... Ի՞նչ ոսկորներ...

– Իր սպաննուած զաւկին ոսկորները, այդպէս ըլլալու է։

Տղան չտկուեցաւ պառկած տեղէն.

– Ըսել կ'ուզես, իր սեփական զաւկին ոսկորները... Ի՞նչ սարսա-

փելի բան... Սարսափելի պարզապէս... Ուրկէ՞ էր բերեր ոսկորները։

– Տէր Զօրէն անչուշտ։ Ես այդ ալ չկրցայ ընել... Քեզ գրկած էի... Ուրիշ բան աչքիս չէր երեւեր։ Ազատել քեզ, օճախիս միակ յոյսը... Ինձմ պառաւը այդ ալ չէր կրցեր փրկել եւ բերեր էր ոսկորները...

Մայրը այլեւս մոռցած էր տղուն մասին, տարուած էր յորձանքէն։

Տղուն հոգին եւս փոթորկած էր։ Դէպքը մոլեգին տպաւորութիւն գործած էր՝ արդէն իսկ զգայուն հոգիին։ Ինչ վայրի բան էր, մեռած զաւակին ոսկորները հեռը պոտցնել, գուրգուրալ, ապրիլ անոր հետ։ Սարսափելի էր... Կոկորդին մէջ գունտ մը ուռած ու թխմուած էր։ Սենեակին պատերը նեղցան, սեղմեցին զինք, կարծես կենդանի թաղուած էր եւ հեռը ղեհեռ օդը կը պակսէր։

Կմախքը, մէկէն, աչքին առջեւ ցցուեցաւ։ Գարապ, անհունօրէն խորացող աչքերը իրեն յառած։ Քիթը ղղուելի էր, միսերը փտեր, ինկեր էին վրայէն եւ խոռոչ մրն էր մնացեր։ Բերանը կարծես կը քրքջար կամ ցաւի ազիոզորմ ճիչ մը արձակելու ճիգին մէջ քարացած էր։ Թեւերն ու ոտքերը օդին մէջ կը ճօճէին յուսահատ շարժումով։ Ի՞նչ ողորմելի էր մարդ արարածը։

Ցանկարծ քունին մէջ ճչաց ու նստաւ անկողնին մէջ։

Մայրը ցատկեց տեղէն, լամբը վառեց։

– Ի՞նչ ունիս, տղա։

Զեռքերը սահեցան տղուն ճակտին վրայէն. ջուրերու մէջ էր։ Աչքերը կարմիր ու վայրագօրէն չոած։ Պառաւը պիտէր, թէ ինչ տեղի կ'ունենար, բայց կեանքն էր, պիտի վարժուէր, պիտի գտնէր իր ուղին։ Պիտի խմէր դառնութեան բաժակն, այդ էր կեանքի ընթացքը։ Ոչ մէկ բացառութիւն։

Գիշերը անտանելիօրէն երկար տեւեց։ Երբ արշալոյսը կտուրներուն վրայ դեղնեցաւ եւ լոյսը թափանցեց սենեակին մթութեան մէջ, չար ոգիները փախան՝ իրենց աւերներուն վրայ...

Պաղ օդը կազդուրեց զինք։

Եգիպտական սրճարաններու սեղաններն ու աթոռները գրաւած էին մայթերն իսկ։ Ցերեկուայ տապէն ետք, ջրուած հողը զով շունչ մը կը հեւար։ Կեանքը թափուած էր դուրսը։ Կախուած օդային կազի լամբերուն շուրջ մժեղներն ու թիթեռները խօլ պար կը դառնային։ Մարդիկ, օրուան աշխատանքէն ետք, կոզդուրուած նստեր էին կոչտ սեղաններուն շուրջ ու հանգարտօրէն կը քաշէին կիկլակները։ Փողոցը երեխաներով կը վխտար։ Անապատային դարձդարձիկ ու միայար երգ մը բռնած էր մթնոլորտը։

Շատախօս Արեւելքը։ Մինչեւ կէս գիշեր կը պոռայ, կը հայհոյէ, կը ոիճի, կը կռուի։ Երբ մարդ արարածը քուն մտնէ, դուրս կու գան հնամենի ոգիները, հիները, կախարդները։ Արեւելքը կը լրջանայ, կը խորանայ, կ'ազնուանայ։ Խորհուրդներ եւ խորհրդանշաններ կը հիւսէ։ Իր լռութիւնը լդի է։

Մժեղները կը զարնուէին Լեւոնի դէմքին, կը բզզային ականջներուն։ Երբեմն ափով կը խփէր ինք իր ծոծրակին կամ երեսին։ Սուրճին բոյրը բռնած էր փողոցը։ Շրջուն վաճառորդներ շարուած էին փողոցին երկու կողմը։ Արեւելեան ծաղկեալ լեզուով կ'երդէին իրենց ապրանքին գովքը։

Ժխորին մէջ մարդ կը վերստանայ առանձնութիւնը։ Աչքը կը հեռուի արտաքին աշխարհին, բայց անձը կը վերադառնէ իր կշռոյթը։

Կիներ՝ գլուխներնուն վրայ ծանր բեռներ, երեխաները ետին ձգած, թեւերը օրօրելէն՝ կը դառնային տուն։ Միշտ սեւ հագած, սլացիկ, ցրցուած ծիծերով, արձանային ու մեհենական բան մը ունէին։ Հին Եգիպտոսը մեռած չէր։

Լեւոն կը քալէր արագ, անապատի երգն ականջին։ Հազիւ հեռացած մէկ սրճարանի տուջեւէն, արդէն յաջորդ սրճարանէն կը տարածուէր նոյն երգը, այնպէս որ երգը ամէն տեղ էր, անդադրում, ոլորուն ալիքներով, կոկորդային խաղերով, տաք ու հեշտուտ։

Լեւոն ակումբ չէր երթար։ Մարդերէ կ'ուզէր հեռու ըլլալ։ Կ'ուզէր ճամբան գտնել առանձինն։ Կարեւոր որոշում մը պէտք էր առնէր։

Հասած էր Սատա Զաղլուլ պողոտան, ազմուկը դադրած էր։ Եւրոպական թաղամասն էր, սրճարաններու փոխարէն շքեղ խանութներ, ֆրանսերէն եւ արաբերէն վերտառութեամբ։ Գունաւոր նէոն յուցանակներ առասպելական շքեղութիւն մը կու տային գիշերուան։

Դարձաւ ձախ եւ, ուհա, աղի ու թաց հով մը դիմաւորեց զինք։ Ծո՛վը, ծո՛վը։ Ծովուն բոյրը լեցուց թոքերը, մտրակեց ջիղերը։ Միշտ, երբ յուզուած էր, կ'երթար ծովափ։ Ծովը կը հանդարտեցնէր զինք։ Քաղաքը հետզհետէ կը պայծառանար։ Մինչեւ իսկ երբ ծովը ինք յուզուած էր, նորէն կը նորոգէր, կը թարմացնէր։ Կարծես ներքին ընդհարումը կը փոխանցուէր տարերքին եւ անձը կը տարածուէր դէպի տիեզերքը։ Եւ տիեզերքին մէջ միշտ հաւասարակշռութիւն եւ կարգ կը տիրեն։

Ծո՛վը, ծո՛վը։

Զկնորսի նաւակներուն ջահերը կը կոբսուէին ու կը քթթէին ալիքներուն հետ։ Նստաւ ժայռին վրայ եւ գրկեց ծունգերը։ Հովը մտաւ մարմնին մէջ։ Ցերմակ, ցերմակ կը քակուէր ծովը ոտքերուն։ Երկինքը այնքան պայծառ էր, որ հորիզոնը կը զանազանուէր թափանցիկորէն։

Քանի անգամ եկած էր այս ափը։ Նայուածքը հետեւեր էր հեռուէն անցնող նաւերուն եւ մեկնած էր անոնց հետ։ Եւ ահա, թերեւս եկած էր պահը, որ ինք եւս մեկնէր հեռու, հեռու։ Առանց գիտնալու թէ ուր, միայն թէ մեկնէր։ Տենդը կը վառէր երակները։ Իր անձը ընդլայնելու, տարածուելու, ինքնադիտակցելու վրայ էր եւ պէտք ունէր կենսատարածքի։ Պէտք էր մեկնէր, եւ կարելիութիւնը հոն էր, ափին մէջ։

Որոշումը տուած էր։

Բ. Կ.

(Շար. 2)

ԱՐՍԷՆ ԵՐԿԱՖ

ԳԱՀԱԺԱՌԱՆԳԸ

Ժողովուրդիս դիմաց երբոր կանգնիմ, ձեռքիս
Մականը, թագն իմ գլխուս վրայ, ծիրանիով
Պատմությանուած, պիտի գիտնամ որ իմ հոգիս
Տիեզերքի մը խորհուրդն է բազմահոլով :

Փառքը չէ որ պիտ' արքեցնէ զիս, այլ միայն
Լուսակայլակ գիհին՝ զոր սոսկ մատռուակել
Պիտի հանի խոնարհ Աստուածը բարութեան՝
Որուն շաղէն պիտ' ընթանամ ես անարգել:

Պիտի երբեք չխուսափիմ խոր նայուածքէս
Որբին արցունքն եւ տառապանքը տանջկին,
Որբեւայրի կնոջ երազն աղօթակէզ,

Որպէսզի մահն երբոր իջնէ մութ երկինքէն,
Ժողովուրդիս ծոցէն բխած հեծեծագին
Սուգի ձայներ թագաւորին սէրը երգեն...

ՍՊԱՐԱՊԵՏԸ

Ոսոխին դէմ հայոց բանակն արեւագեղ,
Պողպատաձոյլ պատուարի պէս պիտի կանգնի,
Ամէն անգամ, որ լեռներուն մէջ հայրենի,
Փոթորկաձայն հնչէ մարտի շեփորն ահեղ:

Զինուորներուս հոգին ցոլքն է ճառագայթին՝
Որ դարաւոր ցեղի մը փառքը ցոլացուց,
Հաւերժափայլ թիւրեղներուն մէջէն վաղուց,
Արիւնավառ գեղեցկութեամբ կախարդագին:

Անոնց ազգը լայնալեռ, անոնց վահանն
Իրենց ոյժին մէջ պահեցին ոյժը մահուան՝
Որ դաշտին վրայ հնձեց անթիւ կեանքի հասկեր:

Հայոց բանակն արդարօրէն պիտի շահի
Մեծ յաղթանակը փառապսանծ ապագայի,
Երբ բարձրագոռ հնչէ շեփորն աւետաբեր...

ԱՌԱՋԻՆ ՎԿԱՆ

Կը փողփոդէր արեւն հայոց լեռներուն վրայ,
Երբ մահարեր նետ մը խոցեց սիրտըս՝ որուն
Արիւնն ահա՛ ծիրանի վարդն է քարերուն.
Ցաղթանակի ես առաջին վկան եղայ:

Հեռուեցան ինձի շատեր եւ զոհեցին
Իրենց կանանչ արիւններուն բոցն, որպէսզի
Կեանքի ջլվէժն հեղեղ ըլլայ եւ միշտ հոսի
Անդնդախոր շառաչներով մրրկածին:

Հայոց արեւը գիշերին ծոցը կ'իջնէր,
Երբ վերստին շեփորն հնչեց մարտահրաւէր.
Խորքոքեցաւ ոստիկ հրդեհն անտառային,

Տեսայ գունդեր որ բարձրացան գիշերն ի բուն
Քանդակելու համար կոչին մէջ լեռներուն
Պատգամը սուրբ Ազատութեան գաղափարին...

●

Ա. ԵՐԱՋԵՆՆԻ

ԱՅԼԵՒՍ ԵՐԲ ԻՄՍ ՉԵՍ...

Այնքա՜ն ազուոր ես հիմա՝ այլեւս երբ իմս չես,
Այնքա՜ն կարօտդ կը զգամ երբ կը յիշեմ քեզ հեռուէն,
Ու կը կարծեմ որ դո՛ւն ես առաջին կիրն ու վերջին՝
Երբ կը մնամ ես այսպէս մինակ ու լուռ՝ առանց քեզ:

Երէկ իշխանն էի ես մատաղաշունչ քու սիրոյդ,
Մարմինդ բոյր կը ծփար համբուրին մէջ թեւերուս,
Այսօր դարձած եմ ահա ոտնածայնիդ խնկարկուն՝
Հեռանալէ վերջ քեզմէ քայլերով խենթ ու անփայլ:

Ինձի հետ ես դուն հիմա, ամէն տեղ, ամէն տեղ,
Թռչուններու երգին մէջ կը կարծեմ կանչդ լսել,
Հովերն ինձի կը բերեն կաթնարոյր շունչ մը քեզմէ,
Ու ծաղիկներն ինձ կու տան շրթներուդ բոյրը անմեղ:

Այնքա՜ն ազուոր ես հիմա՝ այլեւս երբ իմս չես...

Հալէպ

ՄԵԼԳՈՆ ԷՊԼԻՂԱԹԵԱՆ

ԱԼՃԵՐԻԱ 1962

Մելգոն Էպլիղաթեան գրական շեշտուած հակումով երիտասարդ բժիշկ մըն է Պէյրութի մէջ. գրական էջերու տակ իր ստորագրութեան շատ մի՛չ հանդիպած են ցարդ: Մեզի գրկած իր «Ալճերիա–1962» պատմուածքը զոր կը հրատարակենք ստորեւ, գեղեցիկ *չորթ սթորի* մըն է, արուեստի արդիական յղացքով ու իրագործմամբ: Այդ պատմուածքը՝ միչ բառերով շատ բան ըսելու արուեստը կը բերէ իր հետ, այնքան անհրաժեշտ՝ մեր օրերու ոգիին ու մտայնութեան:

Պատմուածքը պատուհան մը կը բանայ հիւանդանոցներու աշխարհին բարդ հոգեբանութեան մէկ երեսին վրայ եւ, ապա կը ձգտի անցնիլ հիւանդանոցային սահմանէն անդին, այս անգամ ամբողջ երկրի մը ճակատագրական մէկ վիճակէն *ապսիրտի* ապրում մը սեւեռելու համար: Ամէն թերեւս՝ հաղորդական ոչ մէկ բառ բովանդակող այս պատմուածքին խաղարական բնոյթ ենթադրել տալ խորագիրը՝ – «Ալճերիա–1962»:

– Խնդրե՛մ, Նինա...

Նեղանալ սկսաւ: Կէսօրուայ մօտերը մի՛չտ այսպէս է: Յոգնած, քրտնած, ջըղասպառ: Ձերմակ դիմակը դէմքը կը ծածկէ, բայց կը տեսնեմ աչքերը: Զանոնք եկերող ակօսները աւելի խորունկացած են: Ինչո՞ւ է, մէկու մը դէմ պիտի դանդատի: Եւ ես կամ, չէ՞: Մի՛չտ պատրաստ:

Շատ չեմ ազդուիր: Նախ՝ վարժըւած եմ: Չորս տարի գործողութեան այս սրահին մէջ, կամաց կամաց, խաւ առ խաւ՝ անտարբերութեան կեղեւ մը կը դոյացնեն վրադ: Իմս, արդէն վահանի մը չափ հաստ է: Առանց պզտիկ դիտողութիւններ չեն կրնար կեղեւէս թափանցել: Եթէ ամէն անհաճոյ պատահարի հոգ ընէի...

Ցեռոյ՝ իրաւունք ունի յոգնած ըլլալու: Օրուան չորրորդ գործողութիւնն է: Եւ ի՞նչ հեղնանք, այսօր «գործողութեան օր» ալ չէ: Հիւանդներու այցելութիւն, քննութիւններ, վիրափոխումներ եւ նման պզտիկ բաներու վերապահուած օր մըն է, ի՛սրբ թէ: Տեսակ մը հանդիստ:

Հանգի՞ստ: Զգա՛նք: Բառեր՝ որոնք Ազգային վիճակահանութեան մեծ պարգեւին նմանող գաղափար մը կ'արթնցընեն մէջս: Ձիլդ չո՛րս տարիէ ի վեր: Աւելի ճիշդը, ա՛յն օրէն ի վեր որ այս գործողութեան սրահին կապուեցայ՝ որպէս վիրաբոյժի օգնական հիւանդապահուհի:

Մեծաւորը ծերացաւ: Ազ–պզպեղ քունքերը աւելի համոյատեսէ՞լ կ'ըլլան: Անիմա՛ստ խօսք:

Կը յիշեմ երբ եկաւ: Երիտասարդ վիրաբոյժ, Փարիզի հիւանդանոցներու նախկին էնթէրն, յուսական արժանի դի-

մակիծ, սլացիկ հասակ։ Հիւանդապահուհիները ինչե՞ր չըրին անոր ուշադրութիւնը գրաւելու համար։

Նո՛յնիսկ այդ մինչեւս տիկին Ժիլէն։ Նոյնիսկ ես։ Անշո՛ւշտ, ես ալ կին չե՞մ։

Այո, բաւական՝ ծերացաւ։ Երեք տարի սարսափարհակ աշխատանք, ինչպէ՞ս կ՚ուզէք որ չ՚ազդուի։ Անդամատումները, գնդակներով ծակծկուած փոքրիկ, ճեղքուած գլուխներ, կտրուած քիթեր, արեան վրայ ծփացող փայտաղի կտորներ։ Եւ արի՛ւն, արի՛ւն, մի՛շտ արիւն։ Սեւ, կարմիր, կաթիլ-կաթիլ կամ ցայտ առ ցայտ։ Եւ արեան անտանելի հոտը որ կը կոչի ռունկերուդ, որ փոսցին մէջ ալ կը հետեւի քայլերուդ, որ գիշերը կ՚արթնցնէ...

– Նինա՛, առաձիգ ուներիները տուր։ Բարակ ադիքին այս մասը պիտի կըտրեմ։ Կարծեմ թէ գնդակի բոլոր վէրքերը կարելը վտանգաւոր կ՚ըլլայ։ Նախընտրելի է կտրել-հանել։ Ի՞նչ կը խորհիս, ժանիէր։

Զեւակերպութիւն։ Ժանիէրը «Այո՛, պարոն բժիշկ» պիտի ըսէ։ Ուսանող է եւ տակաւին կարծիք չունի։ Ա՜ղճը։ Եթէ գիտնար թէ այս հիւանդանոցը ինչ դժոխք է, անշուշտ չէր դար։ Երեք ամիսէ ի վեր մեծաւորին կ՚օգնէ եւ ժամանակ չէ ունեցած կեղեւ կապելու։

Թիւ մէկ ճերմակ բամպակ թելերը կը պատրաստեմ. հիմա՝

– Երեսուն սանթիմէթր երկարութեամբ թելեր կ՚ուզեմ։ Ո՛չ աւելի, ո՛չ պակաս, պիտի ըսէ մեծաւորը։ Գո՞ց գիտեմ...

Ինչ տա՛ք է այսօր։

– Ամա՛ռը։

Տիկին Ժիլէն կը յառաջանայ եւ ամանը կ՚երկարէ։ Ժպտին, զայն փոած պանակի կը նմանցնէ. որքա՜ն իրաւունք ունի։ Մեծաւորը ամանին մէջ կը ձգէ հանած բարակ ադիքը։ Կարծես վհուկ մըն է որ կ՚ընդունի իր ամէնօրեայ մարդկային միսի բաժնեչափը։ Ո՛չ, չեմ սիրեր տիկին Ժիլէն։

Տաք է, մանաւո՛րապէս հսկայ լուսամփոփին ճառագայթներուն տակ։ Կըրցածիս չափ կը հեռանամ եւ կ՚ապաստանիմ գործիքներու սեղանիս ետեւը։

– Մեծաւո՛ր, հիւանդը լաւ չէ։ Գործըդ երկար կը տեւէ՞, կը լաւի զգայազրկիչին բարակ ձայնը։

– Լրացուցի։ Որովայնը պիտի գոցեմ. քառորդ ժամ։ Ի՞նչ կայ։

– Շատ արիւն կորսնցուց։ Մէկ լիտրը արիւն տուի, բայց երակային ցնցումը չի բարձրանար։

Մեր զգայազրկիչը, բժիշկ Ռիյմոն Լէվին, մեծաւորէն շատ տարիքոտ չէ, բայց ի՞նչ հակապատկեր։ Զիստերուն վրայ ինկած գորտային փոր մը և պուտուտայական դէմք մը։ Հանդարտ, պաղարիւն։ Եւ շատ ալ կարող զգայազրկիչ մը։ Խորքին մէջ, ինծի համար երկմարդ չէ. մի՛միայն զգայազրկիչ մը։ Նոյնիսկ, անմարդանակ կղզիի մը վրայ եթէ երկուքս միայնակ ըլլայինք...

– Հիւանդը աւելի լա՞ւ է։

Դէջ նշան։ Երբ աղէտի մը հաւանականութիւնը կայ, մեծաւորը «հիւանդդ» կ՚ըսէ զգայազրկիչին, ան ալ «հիւանդդ», կ՚ըսէ մեծաւորին։

– Ո՛չ։ Մտահոգ եմ։ Ճնշման առաւելը եօթը չ՚անցնիր։ Սակայն շարունակէ։

– Ինչո՞ւ ճնշումը չի բարձրանար։ Արիւնահոսութիւնը դադրեցաւ։ Այնպէս չէ՞, ժանիէր։

Այո՛, գիտեմ այդ երգին բառերը։ «Շատ գեղեցիկ եւ յաջող գործողութիւն մըն էր, բայց հիւանդը...»։

Կարծեմ ես ալ սկսայ շաբ լեզու ըլլալ։ Մեծաւորը կարելին կ՚ընէ։ Անշուշտ չի կրնար բոլոր վիրաւորներն ալ ապրեցնել։ Այս մէկն ալ «չուողներու» ցանկին վրայ կ՚արձանագրենք, պարզապէս։

– Ո՞վ է վիրաւորը։

Շատ գէշ նշան։ Երբ մեծաւորը կը հարցնէ թէ ո՞վ է վիրաւորը, ըսել է թէ փրկութեան յոյս չկայ։

– Ահմէտ Պէնասին է, պարոն բժիշկ, կը ճանչնամ, ձեր ցպարավանառը։

– Չէ՞: Ինչպէ՞ս եղաւ:

Մեր վհուկը միշտ լաւատեղեակ է: Մա՛նաւանդ երբ խնդիրը կը կայանայ բռնաբարումի, զողութեան, մարդասպանութեան չուրջ: Կարծես տեսակ մը հաճոյքով կը տեղեկացնէ՝

– Քանի մը օր առաջ սպառնացած էին: Այս առաւօտ, խանութը բանալու ատեն...

Ես ալ կը ճանչնամ Ահմէտ Պէնաթին: Ցած ու նեղ խանութը մտնելուդ միշտ կը վախնայիր որ լակոտի մը վրայ կոխես: Այնքա՛ն շատ կային: Գետինը, աթոռին վրայ, հաշուեսեղանին ետեւ, պարկ մը ալիւրի եւ չաքարի միջեւ: Մայրերնին, հսկայ ծաթման, հոս մեռաւ, քանի մը ամիս առաջ: Արդեօք Ահմէտ վերամուսնացա՞ւ: Թերեւս ժամանակ չունեցաւ: Ի՞նչ պիտի ըլլան այդ լակոտները եթէ հայրերնին ալ մեռնի: Անկասկած մեծ մայր մը կամ ծեր հօրաքոյր մը ունին: Այս օրերը, քանի մը որը պակաս, քանի մը որը աւելի...

Զղայաղրկիչը երկու ափերուն մէջ թթուածինի պալոնը կը ճնշէ եւ կը ձգէ, հետեւելով իր անձնական ընտրութեան կշռոյթին: Մեծդի փորն ալ կ'ելեւէջէ միւնոյն կշռոյթով:

Ցաղնած եմ, ի՛սպէս: Որքա՞ն պիսի տեւէ տակաւին այս խաշելութիւնը: Ըսէ՛, Ահմէտ, պիտի չու�Ք պիտի մնաս: Որոշումդ տո՛ւր, բայց շուտ ըրէ:

Կը հարցնէք թէ ինչո՛ւ սրունքներուս վրայ սեւերակներ ունիմ: Անպատկառնե՛ր, դուք ալ ամիսներով ու տարիներով օրական տասնըչորս ժամ ոտքի մնացէք եւ կը տեսնէք, սեւերակ կ'ունենա՞ք թէ ոչ:

– Կարծես աւելի լաւ է: Ճնշումը դանդաղօրէն կը բարձրանայ:

– Նիլոն հաստ թել, ուռվայնի մը կանոնները համար: Թիւ երեք, հիւսուած: Խնդրե՛մ, Նինա՛, անապարէ՛:

Տիկին Ժիլէն ներս կը մտնէ: Աչքերուն մէջ փայլող լոյսը հաւանաբար դէչ լուր մը նշանակէ: Ձեմ սիալած.

– Պարոն բժիշկ, երեք վիրաւորներ ընդունեցինք: Երկուքը թեթեւ են, բայց երրորդը գանկի բաց ոսկրաբեկում մը ունի:

– Ըսէ՛ք Տիպուային որ անոնցմով զբաղի: Գանկէն վիրաւորը գործողութեան երկրորդ սրահը կը փոխադրէք:

– Շատ լաւ, պարոն բժիշկ:

– Տիկին Ժիլէ, տունը հեռաձայնեցէք եւ ըսէք թէ պիտի ուշանամ:

Պիտի ուշանա՞յ:

Պիտի ուշանա՞մ:

Ամէ՛նքս ալ պիտի ուշանանք: Ի՞նչ կայ այսօր, երեք-երեք հիւանդանոց կը վազեն: Չէ՞ կրնար մէկ-մէկ գալ: Ամէն օր մէ՛կ վիրաւոր, արդար է:

Վէ՛րջապէս Ահմէտին գործողութիւնը լրացաւ: Մեծաւորը ճերմակ դիմակը կը վերցնէ: Ի՞նչ գունատ է:

– Ինչպէ՞ս է, Ռէյմոն:

– Աւելի լաւ: Շնչառութիւնը սակայն ինչ մը մակերեսային է:

Լա՛ւ, լա՛ւ, հասկցանք, պիտի ազատի: Ես ալ ուրախ եմ, որովհետեւ Ահմէտ՝ բարի, խեղճուկրակ մարդ մըն է: Եւ պարկեշտ: Այն ալ ըսեմ որ Ալճէրիացիները եւ մենք պարկեշտութիւնը միեւնոյն ձեւով չենք ըմբռներ: Ինչ որ է:

Կը սկսիմ վիրաբուժական գործիքները հաւաքել: Տիկին Ժիլէն կը վերցնէ վիրաւորին ոտքերը ծածկող սաւանը: Ոտքերը կապուցած են: Այո՛, աղտոտ՝ բայց այս կապոյտը աղտոտութեան արդիւնք չէ:

Ամէնքս հասկցանք եւ երկվայրկեան մը կանգ առինք, բացի զղայաղրկիչէն:

– Հագուկի զօրաւոր պրկում մըն է եւ չեմ կրնար թթուածինի խողովակը անցընել: Պէտք է անմիջապէս նեղթել:

Այսօր բախտը չօգնեց: Գոնէ կարենայի երկու գործողութեանց մէջ հինգ վայրկեան նստիլ:

Այդ պարագային համար միշտ պատրաստ գործիքներու տուփը կը բանամ եւ մեծաւորին կու տամ, որ ջղային մէկ-երկու շարժումով կը ճեղքէ խուչափողը եւ կը ներմուծէ թթուածինի խո-

ղովակը։ Քանի մը վայրկեանէն վիրաւորեալին մատները կը վերստանան բնական դոյնը։ Մենք ալ լայն չունչ մը կ'առնենք։ Է՜օֆ։ Իրաւունք չունի սրիկան մեզի այսքան յուզում պատճառելու, մանաւանդ ծանրաբեռնուած օր մը։

Ցաջորդին համար – գանկի բաց ոսկրաբեկում, աւետեց տիկին Ժիլէն։ Այսինքն առ նուազն մէկ ժամուայ գործողութիւն։ Պատրաստութեան համար կորսուած ժամանակն ալ հաշուելով, դուն ըսէ երկու ժամ։ Է՛, իրակա՛ն աւետիս...

Ինչո՞ւ կը տրտնջաս աղջիկ, դուն չէ՞ր այս կեանքը ընտրողը։

Եթէ գիտնայի՞ր։

Շատ ալ լաւ գիտէիր։

Ասիկա կեանք չէ, լա՛ւ, համաձայն եմ, կեանք չէ։ Զգէ՛, անցիր։

Ձե՞ս կրնար։ Ինչո՛ւ։ Կը կարծես անփոխարինելի՞ ըլլալ։ Կը կարծես անհրաժե՛շտօրէն զոհուիլ «հայրենիքի եւ մարդկութեան համար»։ Մեծ բառերու ետեւ մի՛ պահուիր, քեզ լաւ կը ճանչնամ։ Ո՞վ կը խաբուի այսօր այդ բառերէն։

Մի՛ տրտնջար, մի՛ լար։ «Երաշնեբուզ իշխանը» օր մը կու գայ եւ քեզ կ'ազատէ այս մղձաւանջէն։

«Երաշնեբու իշխա՞նը»։ Բայց հո՛ս է անիկա, հո՛ս։ Ամէ՛ն օր քովդ է։

Հո՛ս է, բայց ամուսնացած ուրիշի հետ եւ անտարբեր...

– Վերցուցէք հիւանդը, լա՛ւ է։ Ծանրիէռ, կը հսկես եւ քովէն չես հեռանար։

Մեծաւորը հիմա սրիկարէթ կը ծխէ երկու գործողութեան սրահները բաժնող անցքին մէջ։ Որքա՜ն կ'ուզէի հատ մըն ալ ես ծխել։ Բայց մենք, պրոլետարներս, իրաւունք չունինք դադարելու։ Այո՛, բժիշկները մեր աշխարհին ազնուականներն են։ Մեծաւորը, ամէն գործողութենէ հոգ սու�ճ կը խմէ։ Բժիշկ Լէվին՝ կաթ։ Նոյնիսկ ծանրիէռ կը պահանջէ իր սառած լիմոնատը։ Մի՛ կարծէք թէ ասիկա անկարեւոր է, ընդհակառակն։ Դադարը, նո՛յնիսկ փոքր՝ աշխատանքի ժամերը նուազ հատ չերտերու կը բաժնէ, քեռը տանելի կ'ըլլայ։

Այո՛, կը նախանձիմ այդ պարոններուն, որովհետեւ մենք, հիւանդապահուհիներս, երկու գործողութեանց միջեւ ստիպուած ենք յաջորդ զոհը պատրաստել։

Նորեկին մազերը կը կտրեմ։ Մեւ են, գռուզ եւ արիւնով կարծրացած։ Օտարական կ'երեւի, արծուաքիթ, նիհար եւ բարձրահասակ։ Աչ քունքը հսկայ վէրք մըն է։ Գանկը ամբողջութեամբ կ'ածիլեմ։ Հիւանդանոցը ալխատելէս ի վեր ածելիի նշանաւոր վարպետ դարձայ։

Ահա՛։ Ածիլուած, մաքրուած, քընացած եւ ապանեխուած սաւաններով ծածկուած, վիրաւորը կը սպասէ փրկիչին։ Արեան կաթիլներ կը հոսին քունքէն, կը ցատկեն վիզին վրայ, եւ թըփթըփ, կ'իյնան տիկին Ժիլէի հերմակ դոյլին մէջ։

Կը վերսկսինք։

– Խնդրե՛մ, Նինա, մի՛ քնանար...

– Նինա՛, թիւ երկու քաթկիւթ թէլ։

– Լա՛ւ կտրող ճշդրակ մը։

– Ի՞նչ են այս ասեղները· թանգարա՛ն զրկեցէք...

Նինա՛, Նինա՛, մի՛չտ Նինա։

Թել կու տամ, ասեղ կու տամ, նըշդրակ կու տամ, մկրատ կու տամ, ունելի կու տամ... Ամէ՛ն ժամ, ամէ՛ն օր եւ այսպէս, չորս տարիէ ի վեր։ Ձեմ պատասխաներ։

Եւ ըսել թէ կը նայի բայց չի տեսներ պիս։ Ըսել թէ դիս անունո՛վս ալ չի կոչեր։ Ի՛նքն ալ, ամէ՛ն մարդ ալ պիտէ թէ հիւանդն կը կոչուիմ։ Ինչո՞ւ Նինա կը կանչէ։ Ո՞վ է արդեօք իր մտքին մէջ եղած այդ Նինան որուն անունը կու տայ ինծի։ Ձեմ կրցած հասկնալ։ Ամէն անգամ որ Նինա ըսէ՛, կը զգայ թէ ինչքան կը վիրաւորուիմ։ Կեղեւս չի դիմանար հարուածին։

Ա՜խ, կռնա՛կս։ Իրապէս, կարգ մը օրեր պէտք է հանդչիլ։ Արդէն ժամը երեք է։ Կարծեմ այս օրուան գործը վերջացաւ – անշուշտ եթէ նոր վիրաւորներ չըլլան։

Գործը վերջացաւ, որովհետեւ հի-

ւանդնիս մեռնելու վրայ է։ Նշաններ կան որ չեն խաբեր։ Ցետոյ, վճիռը իրենց աչքերուն մէջ կը կարդամ։ Մեր Գուտոայ-զվայազրկիչը ա՛նքան տխուր է որ խնդալս կու գայ։ Տխուր Գուտոայ մը տեսա՞ծ էք։ Ժանրիէոը միայն պատրանք ունի, հակառակ որ իր հարցումները անպատասխան կը մնան։ Իսկ տիկին Ժիլէն արդէն հագած է պարագաներուն պատշաճ լուրջ դէմք մը։ Անկասկած, ներքնապէս կը պատրաստէ պարագաներուն պատշաճ լո՛ւրջ նախադասութիւն մը – սա ձեւով՝

– Ձեր կարելին ըրիք, պարոն բը-ժիշկ, բայց...

Որքա՜ն որ վարժուած ըլլանք, դորձողութեան սկզանին վրայ մեռնող հիւանդ մը խղճի խայթ կու տայ։ Եթէ այսպէ՛ս ըրած ըլլայինք, եթէ այնպէ՛ս ըրած չըլլայինք, արդեօք աւելի լաւ չէ՞ր ըլլար։ Արդեօք յանցանք մը գործեցի՞նք։ Անպատասխան հարցումներ, որոնք միտքը կը կծեն։ Կը վանեն, սակայն ուրիշ ձեւի տակ կը վերադառնան։ Մեծաւորը, աւելի պատասխանատու՝ անշուշտ ինձմէ աւելի կ'ազդուի։

Հեռուն՝ քանի մը հրազէնի պայթիւններ։ Շատ կարեւորութիւն չեմ տար։ Ամէնօրեայ եղաւ։ Գնդացիր մը կը հազայ հիւանդանոցին աւելի մօտ։ Նորէ՛ն կատղած են։

Լմնցաւ։

Տղաքը կու գան դիակը տանելու։ Այսօր որքա՜ն պիտի ուզէի ունենալ անոնց փիլիսոփայութիւնը։ Գիտի ըսեն, պա՛րզապէս

– Ճակատագիրն էր...

Ատուած տնօրինած է։ Մարդիկ ի՞նչ կրնան ընել։

Պայթիւններ, հեռագհեռ աւելի մօտ, հիւանդանոցին ապակիները կը կոտրեն։ Բայց հիւանդանոցին մէ՛ջն է կռիւը։

Ինքնին վրայ բացուող դուռը կը հրեմ եւ կ'իյնամ դժոխքին մէջ։ Գետինը, տապլտկող հիւանդներ։ Ուրիշներ կ'իյնան փախչելու ատեն։ Վայնասուն, լաց, հայհոյանք եւ պայթիւնները, որոնք ուզեղը կը սարսռեն։ Բացուած վէրքեր եւ հոսող արիւն։ Ցարդ խնայած էին հիւանդանոցին, անշուշտ այդ կացութիւնը չէր կրնար յարատեւել։ Մեր կարգն ալ եկաւ։

Մեքենական քայլերով կը վազեմ, չեմ գիտեր ո՞ւր, ցատկելով գետինը պառկած հիւանդներուն վրայէն։ Կը բանամ դուռ մը եւ ներս կը նետուիմ։ Կը գոցեմ աչքերս, անկիւն մը կծկուած։ Վախը չորցուցած է կոկորդս եւ ծանր շոքած կուրծքիս վրայ։

Վայրկեաններ, ժամեր, չեմ գիտեր որքան ժամանակ մնացի, հալածուած եւ իր որջին մէջ պահուըտած անասունի մը պէս։

Հիմա, ամէն կողմ լռութիւն։ Իրիկնամուտ է, բայց կը տեսնե՛մ, շատ լա՛ւ կը տեսնեմ, եւ արցունքները այտերէս դար կը գլորին։ Մարդիկ ի՞նչ ապուշ են, ինչ ապուշ...

Ահմէտ Գէնասին հրկնցած է տախտակամածին վրայ, վէրքը բաց, աղիքները դուրս թափած եւ նորէն դնդակի սեւ ծակերով կէսկիտուած։ Մեծաւորին կարած աղիքն ալ գետինն է, վրան արիւն ու փոշի։

Սրիկանե՛ր, մեր աղուո՛ր աշխատանքը պարապի տուին, մեր այսքա՜ն աղուոր աշխատանքը պարապի տուին...

Մ. Ի.

ԱՌԱԿ

Վագրն արնախում
Կը լեցրնէր ունկն առիւծին խայծ անդադրում.
– Արքա՛յ հրզօր,
Թոյլ տուր մընամ հս մինչեւ մահ
Քու պալատիդ կառավարիչ ու կնքապահ,
Իսկ մահէս ետք՝ գանձն իմ բոլոր,
Եղիր վստահ՝
Կը կտակեմ ազգատներուն ու որբերուն»:
Կը հաւատար արքան վագրին երդումներուն,
Կը կարգէր զայն այս խորհուրդին ատենապետ,
Այն միւս գործին՝ միակ վարպետ:
Եթէ գործ մը, պալատին մէջ, երբեմն ձախող՝
Ա՛յլ գազան մ'էր տրխմար ու գող,
Խո՞զ մը լափէր վագրը հում-հում՝
Խո՛զն էր ազատ՝, անխե՛լք դրդում:
Վագրը բնա՛ւ չունէր յանցանք,
Ինչ փոյթ թէ միշտ դառնար փորձանք
Շուրջիններուն:
Միւս գազաններն ի տես բռնին այս խայտառակ՝
Կը դիմէին ծեր արքային խումբ-խումբ, հատ-հատ,
Ընելու մերթ բողոք, գանգատ.
Կար արքային դէմքին ժըպիտ մը բարեմոյն
– Ձէ՞ որ վագրը ունէր կըտակ...
Ու խոստումովն իր ապառիկ
Կը վայելէր, գազանն անկուշտ, դիրք ու բարիք:

Եւ վերջապէս
Եկաւ օրը... Գտան ճամբան
Վագրը ինկած՝ լուռ, անկենդան:
Հրամանով արքայական
Ըրին թաղում, սրգահանդէս,
Ապա որպէս կըտակառու
Գացին վագրին որջն ահարկու:
Գանձը հոն էր... Գանկ ու կըմախ,
Ոսկերոտիքն իր որսերուն:
Արքան ցասկոտ ու դէմքը կախ՝
Հրամայեց՝
«Հոգ չէ՛, ըրէք շո՛ւտ մորթազերծ,
Վագրի կաշին
Գանձ է ինքնին»:
Մորթն ալ սակայն էր վիրապուտ,
Կապած էր քոս, ալ անօգո՛ւտ...

ԳԱՑԼ ՎԱՀԱՆ

ՏԱՐՕՐԻՆԱԿ ՎԱՐԴԵՐ

Վարդերը կարմիր են.
Վարդերը համբուրէն
Արիւն են ու հուր են,
Կրակ են - կ'այրեն.
Վարդերը այս գարնան,
Այս տարօրինակ,
Այս շքեղ առտուան
Կրակ են, կայծակ:

Եթէ կրնաս սիրել,
Սիրել այնքան ուժգին
Որ կարենաս յաղթել
Տառապանքին, մահին.
Եթէ կրնաս սիրել
Կեանքը՝ խորհուրդն այս վառ,
Սիրել ինչ որ անել
Ինչ որ մեծ է, դժուար.
Ինչ որ կրակ է, հուր,
Ու բոցեղէն փրփուր,
Արնաբաղախ, խելառ
Ինչ որ թափ է, պայքար.
Եթէ կրնաս սիրել
Ինչ որ լոյս է ու խոր,
Ինչ խնդութիւն բոսոր...
Շնչէ վարդերն այս նոր,
Այս զարմանալի,
Որ նոր կեանքի նո՛ր գոյն
Նոր երգ բերեն ֆեզի:

Վարդերը համակ բոյր են,
Համակ կեանք, արիւն են,
Համբոյր են ու թոյն են,
Կրակ են, կ'այրեն,
Վարդերը այս գարնան,
Այս զարմանալի,
Այս շքեղ առտուան
Կրակ են, կայծակ:

Փետր. - 1962

Ռ. ԳԱԶԱՆՃԵԱՆ



ՆՇԽԱՐՆԵՐ՝ Ն. ԱՂԲԱԼԵԱՆԷՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅԵԱՑՔ ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Ցասել հայերի մասին՝ նշանակում է խօսել մի գաւառական ժողովուրդի մասին. Հայաստանը միշտ եղած է մի գաւառ, իսկ հայը՝ գաւառացի։ Գաւառ է եղել Հայաստանը Տիգրանի եւ Սպահանի համար, գաւառ է եղել Հռոմի, Կոստանդինուպոլսի եւ Բիւզանդիոնի համար, գաւառ է եղել Բաղդադի համար եւ այսօր գաւառ է Պետերբուրգի, Պոլսի եւ Թիֆլիսի համար։

Այս լեռնոտ գաւառը՝ մայրաքաղաքներից հեռու ընկած՝ ազդուել է միշտ չրջապատի մեծ քաղաքակրթութիւններից. հայ թագաւորն ու ազատին, հայ դիտունն ու հայ վանականը օտար ազդեցութեան ներմուծողներն եղան, երբ Հայաստանի աղգարնակութիւնը մեծագոյն չափով հայերից էր կազմուած։ Հեռագայում հայ կեանքի վրայ ազդեցին տարբեր ցեղի պատկանող ժողովուրդներ, որոնք հաստատուեցին մեր երկրում։

Զարմանալի չէ, որ հայ գրականութեան պատմութիւնը դրողներից մէկը՝ Հ. Յ. Գաթրճեան՝ ազդեցութեանց տեսակն է հիմք առնում մեր գրականութեան չրջանները որոշելու համար։ Արուեստն ու դիտութիւնը զարդանում էին Հայաստանից հեռու. հայերն ընդօրինակում կամ հետեւում էին վարպետներին։ Բայց այդ հետեւողութեան ընթացքում նրանք չէին ստրկանում օտարի մտքին ու զգացումին, այլ փորձում եւ շատ անգամ յաջողում էին ազգային ոգու ինքնատիպ դրոշմը դնել իրենց ստեղծագործութեան եւ վաստակների վրայ։

Հայոց գրականութիւնը թարգմանութեամբ սկսուեց. նա պատուաստում էր հայ կեանքին եւ չէր ծագում ազգային ոգուց։ Ժողովրդական ստեղծագործութիւնը անտես առնուեց եւ չդարձաւ հիմք ազգային գրականութեան։ Մտաւորական դասը հոգեւորական էր եւ համոզուած քրիստոնեայ, իսկ ժողովուրդի ստեղծագործութիւնը անարուեստ էր եւ հեթանոսական։ Մէկի կործանումով կարող էր կանգնել միւսը. քրիստոնէութիւնը յաղթանակեց եւ աշխարհիկ տարրը վտարուեց գրականութեան չէմքից։

Քրիստոնէութիւն ընդունելով՝ հայերը դէմքերն Արեւելքից Արեւմուտք եւ Հարաւ դարձրին. յոյնը եւ ասորին դը-

բաւեցին պարսկի տէրը. նրանց մտաւորականութիւնը դարձաւ հայ մտաւորականի վիճակի եւ լուսաւորութեան ազդիւրը։

Բաբիլիոնաբար դեռ չէր ստեղծուած յոյն գրականութեան բիւզանդական շրջանը եւ դասական երկերի լեզուն ու ոճը դեռ չէր հանգել լիովին, երբ հայերը յոյներին դիմեցին գիտութիւն ուսանելու։ Հաղորդակից դառնալով յոյն մտքին՝ հայը մտնում էր քրիստոնէական գիտութեան եւ իմաստութեան աշխատանոցը եւ քաղաքական կախումին աւելանում էր կրթական կախումը։ Հայ մտաւորականը ազդում էր հրկական, յունական եւ ասորական մտքից։

Բայց շատ քիչ էր կրթուած հայերի թիւը. եկեղեցում հնչում էր յոյն եւ ասորի լեզուն եւ հոգեւորական դասը մեծ մասամբ օտարազգիներ էին։ Բնիկ ժողովուրդը խորշում էր եկեղեցուց, որի պաշտօնեան հայ թէ օտար՝ միշտ ազօթում ու պաշտում էր Աստծուն անծանօթ լեզուով։

Հինգերորդ դարի սկզբում վտանգուում է հայոց քաղաքական իշխանութիւնը. նա արդէն բաժանուած էր երկուսի «ի նմանութիւն հնացեալ ձորձոյ»։ Վրատանգուում էր եւ եկեղեցին. պարսկին աշխատում էր հայերին զարձնել իրենց հայրերի հաւատին եւ նրանց աչքը դէպի Տիզբոն ուղղել։ Ինքնապաշտպանութեան բնազդական հիզով հայը փորձում է փրկել իր ինքնութիւնը։ Տէրութիւնը փրկելու համար պէտք էր ըմբռնել ազգային պետութեան մեծ արժէքը, որ ժամանակի աւատական իշխանները չկարողացան. եկեղեցին փրկելու համար պէտք էր քրիստոնէութեան արժէքը հասկացնել ժողովուրդին, որ կարողացան անել ժամանակի մտաւորականները։ Դրա համար պէտք էր մատչելի դարձնել քրիստոնէական պաշտամունքն ու աշխարհայեացքը հանրութեան, այսինքն խօսել հայի զգացումին ու մտքին հայերէն։ Գրերի գիւտը լուծեց այդ խնդիրը եւ միանգամից ստեղծեց մի նոր շաղախ համազգային գոյութեան՝ անհետացող քաղաքական իշխանութեան փոխարէն։ Ազգային եկեղեցին բռնեց ազգային պետութեան տեղը եւ հայերին ընդմիշտ եւ վիճակցաբար անջատեց Արեւելքից։

Փորձութեան տարիները, որ շուտով վրայ հասան, պայծառօրէն ցոյց տուին, թէ ազգային ինքնապաշտպանութեան նոր դէնքը՝ վիրն ու գրութիւնը՝ պիտանի են ազգի ինքնութիւնն ապահովելու համար։ Վարդանանց դիմադրութիւնը եւ բարոյական յաղթանակը գրերի դիւտի անմիջական հետեւանքն էին։

Գրական առաջին շարժումը հեղեղի յորդութեամբ, ուժով եւ արագութեամբ կատարուեց։ Մի քանի տասնեակ տարիների ընթացքում արդէն ստեղծուած էր մի հարուստ, ազնիւ ու ճկուն գրական լեզու եւ մի բազմահատոր գրականութիւն։ Լեզուն կաղապարուեց Ս. Գրքի յունական ընտիր թարգմանութեան եւ յոյն եկեղեցական նշանաւոր հայրերի վատատեսների վրայ։

Նոր գաղափարների եւ պատկերների մի յորձանք ողողեց հայ դեռահաս սերունդի գլուխը եւ խթանեց նրա ստեղծագործական ուժերը։ Թարգմանական գրականութեան կողքին բուսաւ ինքնուրոյնը. Ագաթանգեղոսի պատմութեան հեղինակը յետնորդ սերունդներին կտակեց հայոց պատմութեան մեծագոյն դիպուածի՝ դարձի պատմութիւնը. «Բիւզանդարան»-ի հեղինակը ձեռք դարկեց հայ ազգի պատմութիւնը գրելուն. Եղնիկը դէնքեր տուեց հայի ձեռքը կռուելու համար զրադաշտական կրօնի եւ քրիստոնէական հերձուածների դէմ. կրօնական մտքի եւ սրտի զեղումները մտան եկեղեցի եւ հնչեցին հանրութեան բերանում՝ լուսագոյն միջոցը հանդիսանալով քրիստոնէական գաղափարների եւ զգացումների տարածման։ Կորիւնը դրեց ժամանակի ամենամեծ մարգու՝ Մեսրոպի կենսագրութիւնը։

Գրական գործիչների երկրորդ սերունդը աւելի մեծ պատրաստութեամբ սապարէզ իջաւ, իր հետ բերելով ոչ

միայն յոյն աստուածաբանութիւնը, այլ եւ յոյն գիտութիւնն ու իմաստասիրութիւնը։ Այս սերունդը դրի առաւ ժամանակի մեծագոյն պայքարը հայ ու պարսիկ աշխարհների միջեւ։ Եղիշէն գրեց Վարդանանց նահատակութեան պատմութիւնը. Փարպեցին դրան կցեց Վահանի կռիւները. Խորենացին պրպտեց հայութեան անցեալը եւ անյայտութեան մութից հանեց մեծագործ նախնիների ըստուերները՝ ազգային վերածնութեան մի մշտական ուղղան պատրաստելով հետագայ սերունդների համար։

Այս անմահ հեղինակների ջանքերով հայութիւնը եկաւ ազգային եւ կրօնական ինքնագիտակցութեան. դիտակ եղաւ իր ինքնութեան եւ ուրոյն ազգային կերպարանքին։ Գիրն ու դպրութիւնը պատուար դարձան ազգայնացման դէմ ու թէեւ չկարողացան նպաստել հայրենիքի քաղաքական իշխանութեան պահպանումին, բայց ապահովեցին հայի հոգեկան անկախութիւնը։ Լաւագոյն եկեղեցական մտածողների երկերը թարգմանելով՝ նրանք հետագայ սերունդներին թողին մի հարուստ ժառանգութիւն, որ երկար դարեր սնունդ տուեց հայ մտքին։

Հինգերորդ դարի դրականութիւնը կրօնական է՝ առանց աղանդաւորութեան եւ պատմական՝ առանց կրօնականութեան։ Քրիստոնէութիւն եւ քաղաքակրթութիւն դեռ նոյնանիշ գաղափարներ էին. ժողովուրդ ու եկեղեցի նոյնացած էին իրար։ Եկեղեցականն անծանօթ չէ աշխարհին. նա մտնում է պալատ, տեսնում է իշխանների հետ, մասնակից է քաղաքական անցուդարձին։ Դրոյցը կտրուած չէ աշխարհից եւ փակուած վանքի խուցերում. այնտեղ ուսանում են ամենքը։ Կեանք ու գրականութիւն կապուած են իրար։ Գրական լեզուն մատչելի է ամենքին եւ նրա մշակած ու թարգմանած նիւթերը հետաքրքրական են ամենքի համար։

Այս պատճառով Ոսկեդարի գրականութիւնը կենդանութեան շունչ ունի իր մէջ. կենդանի մարդկանց կենդանի գործ է նա։ Չէ զգացւում այնտեղ անաւիւն հմտութեան մեռցնող ոգին. զեղում ու թաւալում է նա ինչպէս մի աղբիւր կանաչ մարգի մէջ։ Պատմագրանը կամ միամիտ հայրենասիրութեամբ գովում է իր հերոսներին, կամ կենցաղագէտի եւ քաղաքագէտի աչքով դիտում դէպքերը, կամ արթուն մտքով հետազօտում անցեալը։ Բայց ամէնքն էլ երեւոյթների պատճառը համարում են անհատական կամ քաղաքական եւ բնաւ՝ դերբնական։ Անծանօթ չէ նրանց հաստատման վարդապետութիւնը, բայց երկրորդական տեղ է բռնում երեւոյթների մեկնութեան մէջ։

Ամէն կողմից զգում ես, որ այս գրականութիւնն ստեղծել է մի թարմ մտաւորականութիւն, որ ապրում է սեփական երկրում, հայրենի իշխանութեան տակ եւ վայելում է երկրի ոգերի հովանաւորութիւնը։ Բնորոշ է, որ կրտսեր թարգմանիչներն հալածում է հոգեւոր դասը եւ պաշտպանում է աշխարհականը։ Այս հանգամանքը բաւական է ցոյց տալու, որ հինգերորդ դարի մտաւորականները, թէեւ մեծ մասամբ հոգեւորական՝ բայց կատարում էին համազգային մի գործ, որ շահադրգռում էր աշխարհականին աւելի, քան հոգեւորականին։

Հինգերորդ դարի դրական շարժումը մեր երկրի հեղեղների նման թէեւ յորդ եկաւ, բայց արագ անցաւ, պարարտ սրնունդ թողնելով դրական դաշտի հետագայ մշակութեան համար։ Բայց մեր գրականութիւնը այլեւս չունեցաւ մի կենսաբեր գարուն, մի նոր ձիւնհալ եւ դրական նոր հեղեղ։

Շատ ուրիշ ազգերի գրականութիւն սկսում է համեստ չափերով եւ զարգանում ժամանակի ընթացքում. մեր գրականութեան ընթացքը հակառակն եղաւ։ Իր սկիզբը շատ էր հարուստ ու բեղուն եւ չարունակութիւնը աղքատ ու ստերջ։ Գրականութեան սկիզբը նրա բարձրագոյն կէտն եղաւ միանգամայն եւ Ոսկեդարից նա գնալով ընկնում է ազգի վիճակի հետ զուգահեռ մինչեւ ԺԷ դարի

զոհեհկութիւնը։

Ոսկեդարից յետոյ ամէն անգամ երբ հայ միտքը անմիջական շփում է ունենում յոյն գրականութեան հետ՝ ստանում է նոր դրդում եւ արտադրում է վաստակներ՝ արժանի ուշադրութեան նաեւ գրական տեսակէտով։ Սիւնեաց դպրոցը Է–Ը դարում եւ Կիլիկեան գրական շարժումը ԺԱ–ԺԴ դարում դրա ապացոյցն են։

Երբ եկեղեցական կամ քաղաքական պատճառներով հայ միտքը դադարում է տնմիջական շփում ունենալ յոյն մատենագրութեան հետ՝ հայոց գրական վաստակների արժէքն իջնում է գրական տեսակէտով, թէեւ ներքին բովանդակութեամբ նա դառնում է շատ աւելի ինքնուրոյն։ Բայց նոյնիսկ այդ շրջաններում հայ մատուռականը սնուում է յոյն գրականութեան վաստակներով՝ նախնեաց թարգմանութեամբ։ Նա չդիտէ յունարէն կամ սակաւ գիտէ. յոյն ատուածաբանին ու մեկնիչին նա կարդում է հայ թարգմանութեամբ։ Այսպիսով հայ գրականութիւնը մինչեւ ԺԴ դարը գտնուում է յոյն մատենագրութեան անմիջական կամ միջնորդական ազդեցութեան տակ։

Ուշադրութեան արժանի է այն զուգահեռ ընթացքը որ մենք նկատում ենք հայ գրականութիւնը եւ հայի քաղաքական վիճակն առաջդրելով։ Ամէն անգամ երբ հայութիւնն ստեղծել է մի անկախ կամ կիսանկախ քաղաքական իշխանութիւն՝ գրականութիւնը ծաղկել է աւելի կամ նուազ չափով։ Ոսկեդարը զուգադիպում է Արշակունեաց թագաւորութեան վերջալուսին, Թ եւ Ժ դարերը Բագրատունեաց թագաւորութեան, իսկ Կիլիկեան շարժումը Ռուբինեան հարստութեան։

Նկատի առնենք մի կէտ եւս։ Մինչեւ ԺԴ դարի վերջերը հայերն իրենց ամբողջ երկրի կամ նրա մեծագոյն մասի տէրերն են։ Ունին թագաւորութիւն թէ չունին, բայց միշտ կայ հայոց իշխանութիւն, հայ զօրք, հայ նախարարներ, հայ աւագանի։ Որքան էլ ենթակայ շրջապատի մեծ քաղաքական միութիւններին՝ բայց հայի անմիջական իշխանաւորը հայ է գիւղերում, գաւառներում, նահանգներում, յաճախ նոյնիսկ երկրամասերում։ Երկիրն ու ժողովուրդը տէր ու պաշտպան ունին, որ պատկանում է նոյն ցեղին եւ դաւանում է նոյն կրօնը։ Տարբեր են դասակարգերի փոխադարձ յարաբերութիւնն ու կշիռն իրար հանդէպ, բայց տարբեր չէ մատուռ-բարոյական աշխարհայեացքը, բարքն ու լեզուն։ Հայն իր տանն է, իր բնիկ տէրերի հովանու տակ, թէկուզ եւ այդ տէրերն անկախ չեն, այլ հարկատու օտարների։

(Շար.) Ն. Ա.

ՍԹԷՅՆՊԷՔԵԱՆ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ

Հազիւ արթնացած Նոպէլեան մրցանակին, թղթակիցներու կողմէ շրջապատուած էր արդէն Ճ. Սթէյնպէք, որուն վրայ կը տեղար զանազան հարցումներու տարափ մը։ Կու տանք հոս հարցումներէն քանի մը հատը։

– Ի՞նչ եղաւ ձեր առաջին տպաւորութիւնը, երբ տեղեկացաք թէ գրականութեան Նոպէլի մրցանակը ձեզի յատկացուած է։

– Զուարճացի։

– Ցնծա՞ք։

– Ցնծայ երկրորդ բաժակ մը սուրճ ուզեցի։

– Արդի վիպասանները ընկերային արդարութեան հարցերով կը զբաղի՞ն, կը մըտահոգուի՞ն։

– Ձեմ գիտեր, սակայն պէ՛տք է զբաղին։

– Ի՞նչ կը գրէք այս բոպէին։

– Երէկ ըսեմ ձեզի, այլեւս պիտի չկարենամ գրել։

Կ. ՓՕԼԱՏԵԱՆ

ԶՐՈՅՑ՝
ԲԱՆԱՍՏԵՂԾ Ն. ՍԱՐԱՖԵԱՆԻ ՀԵՏ

Արձակագիրներով աւելի հարուստ Սփիւռքի մեր գրականութեան ամէնէն ինքնատիպ եւ ամէնէն վաւերական բանաստեղծն է Նիկողոս Սարաֆեան։

Ծնած է Գուլկարիոյ Վառնա քաղաքին մէջ 1902, Ապրիլ 14–ին, զատկի օր մը։

Այս տարի իր ծննդեան վաթսունամեակն է ուրեմն։ Քառասնամեակը նաեւ իր գրական գործունէութեան։ Արդարեւ, իր առաջին քերթուածները լոյս տեսած են 1922–ին, Վահան Թէքէեանի «Ժողովուրդի Ձայն»ին մէջ, Պոլիս։

Այս յիշեցումները ո՛չ մէկ հրաւէր կամ առաջարկ կը ներկայացնեն, մեծարանքի կամ այդ կարգի ցուցական որեւէ տարբի։

Ոչ մէկ մտածում աւելի խորթ է այս ինքնատիպ ու ինքնաբաւ, ամբոխէն հեռու ապրող բանաստեղծին։

Այս թուականները յիշեցի պարզապէս աւելի՛ չեչտելու համար ա՛յն բացառիկ պարագան, որ կը ներկայացնէ բանաստեղծ Նիկողոս Սարաֆեանը, Սփիւռքի բանաստեղծութեամբ հեռաքրքրուող գրուցագրին համար, որ ես եմ։

Ըսել կ՚ուզեմ, որ չէի կրնար աւելի տրակաւոր ներկայացուցիչ ընտրել, խօսելու համար Սփիւռքի բանաստեղծութեան մասին։

Քանի մը տարի առաջ, «Ո՞ւր է Սփիւռքի բանաստեղծութիւնը» ընդհանուր խորագրին տակ, այս մասին հարցումներ ուղղած և պատասխաններ արձանագրած էի Ահարոնի, Կ. Զարեանի, Բ. Թօփալեանի, Գ. Ճիզմէճեանի, Յ. Կոստանդեանի եւ ուրիշներու հետ։ Խոստացած նաեւ, մեր գրականութեան համար կենսական նշանակութիւն ունեցող այս հարցին ուսումնասիրութիւնը շարունակել Նիկողոս Սարաֆեանով։ Կը յարգեմ՝ ահա՛ խոստումս։ Ա՛յնքան աւելի մեծ ուրախութեամբ, որ ան տեղի կ՚ունենայ «Բագին»ի մէջ։

Այս մասին քիչ յետոյ, բանաստեղծին հետ, դէմ դիմաց։

Ինչո՞ւ բացառիկ պարագայ մը կոչեցի Նիկողոս Սարաֆեանը։

Սփիւռքի գրականութեան տառամը որոշեաեւ, իր ամենալայն եւ ամենասուր հանգամանքներովը, գոյութիւն ունի Սարաֆեանի մէջ։ Մարդկայինը, ազգայինը, իմացականը։

Մեզի կը թուի թէ Վ. Շուշանեանի եւ Շ. Շահնուրի հետ՝ Սարաֆեան աւելի խորապէս ապրեցաւ այդ ողբերգութիւնը։

Մեր սերունդին միւս երէց անդամները, բոլորն ալ տաղանդաւոր, մասնակից ու դերակատար ըլլալով հանդերձ, մինչեւ իրենց կոկորդը մխրճուած ըլլալով հանդերձ այդ նոյն տառամին մէջ, տարբեր կեցուածք ունեցան։ Տարբեր եղան անոնց հակազդեցութիւնները։ Անոնցմէ իւրաքանչիւրը մօտեցաւ ողբերգութեան, ըստ իր աշխարհայեացքին, իր նկարագրին։ Համաստեղ՝ իր հանդարտ բարութեամբ, Նարդունի՝ իր սկեպտիկ ժպիտով յաճախ, Բ. Թօփալեան՝ փիլիսոփայօրէն, Գէշիկեաշլեան եւ Արամ Հայկազ՝ իրենց ծիծաղով։ Մէկն իր

բարձրաձայն, միւսն իր նուրբ, մելանուշ ժպիտով։ Եւ դեռ ուրիշներ՝ ուրիշ վահաններով պաշտպանուած, մէկն իր եսասիրութեան, միւսները, մեծամտութեան եաին։

Անոնք նոյն «խենթութեամբ» չնեռուեցան կրկէս, ուստի եւ նուազ վէրք ստացան։

Ամենաձանր վիրաւորները հանդիսացան Շուշանեանն ու Շահնուրը, անկասկած։ Ու նաեւ Ն. Սարաֆեանը։

Մինչ առաջին երկուքը հեռացած են արդէն բեմէն, Շուշանեան իր վաղաժամ մահով, Շահնուր՝ անողոք հիւանդութեան մը, ու նաեւ, թերեւս աւելի դժբուար բացատրելի պատճառներով, Սարաֆեան կը շարունակէ։

Պատնէշին վրայ է միշտ, ամուր կանգնած։ Տոմին ամէնէն տկուն հերոսը կը թուի ըլլալ ան, կառուցուած ըմբիշի մը պէս։ Վաթսունին կը շարունակէ ցուցադրել քառասունի եռանդ եւ ուժ։ Եւ ա՛յս, թէ ֆիզիքական եւ թէ բանաստեղծագործական մարզերուն մէջ հաւասարապէս։

Տարօրինակը սակայն, ու նոյն ատեն զմայլելին ա՛յն է, որ այս հուժկու մարմնին մէջ կ'ապրի գերզգայուն էակ մը։ Ամէնէն գերզգայունը, որուն երբեւիցէ հանդիպած եմ եւ ամբողջ կեանքիս ընթացքին։ Վհիտ ու բարդ, կասկածամիտ ու սիրտը բաց միանդամայն։ Երբեք խորամանկ, միշտ խորաթափանց, ու երբեմն, զինաթափ ընելու ատելիան պարզամտորէն բարի։ Հաւանաբար չէ ստեղծուած արտաքին աշխարհին համար, կ'ապրի ինքն իր մէջ։ Անոր մէջ իմացական ներքին պայքարը հասած է զօրաւորագոյն չափերու։

Քառասուն տարի է ան ինքզինք կը վերլուծէ, ինքզինքը կը պեղէ։

Եւ ան, այդպէս, ինքն իրմէ միշտ դժգոհ, բարդոյթներէ տառապող, չէյքսպիրեան մռայլ հերոսի մը կը նմանի, բայց որ կը յառաջանայ անյողդողդ, գլուխը բարձր բռնած։ Մռայլ հերոսի մը, որ գիտէ թէ ո՛ւր կ'երթայ, ի՛նչ կը փնտռէ, ի՛նչ կ'ուզէ։

Ստեղծագործութեան տենդը, իր ներքին սատանան (սօն տէմօն տը լա քրէասիոն) կը շարշարէ զինք գիշեր ցերեկ, կը կրծէ սիրտը, կ'արիւնէ ուղեղը, թոյլ չտալով որ ան ապրի խաղաղ, ըլլայ ուրախ, երջանիկ, ուրիշ մարդոց նման։

Ստեղծագործական խտէալ հոդեվիճակ մը, պիտի ըսուի, բացառիկ խառնուածք մը, տաղանդ եւ ընելիք ունեցող արուեստագէտի մը համար։ Ճիշդ է։ Ճիշդ է ու նաեւ ահռելի։ Սպառիչ՝ այդ մշտատեւ մենամարտը, իր շուրջ եւ իր մէջ թաւալող մթին, ամէհի ուժերուն դէմ։

Իրաւ է որ ճշմարիտ բանաստեղծութիւն մը միշտ ալ հազուադիւտ իմացական պտուղն է ներքին այդ ահաւոր պայքարին։

Սարաֆեան իրաւ բանաստեղծը մեղի կ'ընծայաբերէ այդ եզակի պտուղը։ Հայ քերթողութեան ամէնէն աչքառու յաղթանակներէն մէկը, շահուած օտար հողի վրայ, ամէնէն դժուարին պայմաններու տակ։

Ատով իսկ աւելի արժէքաւոր։

Իր առաջին քերթուածները ամփոփուած են «Անգրպետի մը գրաւումը» հատորին մէջ, լոյս տեսած միայն 1928-ին։ Անոնց մեծամասնութիւնը սակայն գրուած է աւելի կանուխ, 1922-1926 թուականներուն։

Սարաֆեանի գործը ուստի Սփիւռքի առաջին կարեւոր քերթողական մասեանն է։

Ու չէ՞ք կարծեր որ այդ խորագիրը ինքնին աւելի քան թելադրական է։

Բոլորովին նոր բանաստեղծութեան մը ծնունդը կ'աւետէ ան, նոր «Անգրպետի մը գրաւումը», ի նպաստ եւ ի շահ Հայ քերթողութեան։

Եւ ա՛յս, Սփիւռքի կազմաւորման տարիներուն խէ։

Հատորները, որոնք յաջորդեցին այս առաջինին, «14»-ը (1933) «Տեղատուութիւն եւ մակընթացութիւն»ը (1939),

«Միջնաբերդ»ը (1946), եւ անկէ ի վեր գրուած բազմաթիւ քերթուածներ, որոնք հատորներու չեն վերածուած տակաւին, կու գան վճռապէս հաստատելու թէ 1922-ին սկսուած թոիչքը պսակուած է յաղթանակով։ Նոր բարձունքներու ի խնդիր ճամբայ ելած «Սաւառնոդ»ը, ինչպէս կը սիրէր կոչել դայն Օշական, հասած է իր նպատակակէտին, աւարտած՝ նախատեսուած այդ «անջրպետին գրաւումը»։

Ու այսօր, հրճուանք եւ հպարտութիւն է մեզի դիտել հայ քերթողութեան դրօշը, որ կը ծածանի ահա՛ նոր բարձունքի մը վրայ։ Հայ մտքին այդ յաղթական դրօշը, բազմաձայն ու բազմազոյն, ծփածանուած մարդկային հոգիին բոլոր նրբերանգներովը։

Իմ մտքիս մէջ այս «գրոյց»ը երկու գլխաւոր նպատակ ունի։ Առաջին՝ պատմել բանաստեղծին այդ խռովայոյզ, հերոսական թռիչքը։ Երկրորդ՝ մօտէն ծանօթանալ այդ նոր «անջրպետ»ին, բանաստեղծ Սարաֆեանի մէջոցով՝ հայ քերթողութեան «ազգայնացուցած» այդ հրաշալի կալուածը։

⁂

Նախ քան այդ, հարկ է թերեւս ակնարկ մը նետել բանաստեղծին կեանքին վրայ։ Միշտ ալ հետաքրքրական է այդ։

Ուստի առաջին հարցումս.

– Սիրելի Սարաֆեան, ըսիր որ ծընած եա Վառնա, 1902-ին։ Ո՞ւր եւ ի՞նչպէս անցուցած եա մանկութիւնդ, պատանեկութիւնդ։ Ի՞նչպէս տեղի ունեցած է մտաւորական կազմութիւնդ։ Ի՞նչ աղբիւրներ կրած եա եւ ի՞նչ յիշատակներ կը պահես այդ հեռաւոր տարիներէն։

– Մինչեւ տասներկու տարեկանս մնացած եմ ծնողաց մօտ, որոնք Գուլկարիա հաստատուած էին։ Հայրս հացագործ էր։ Ունէր շատ մը ձիեր, որոնցմով իր եփած հացը կը բաժնուէր շրջակայ բնակչութեան։ Ընդարձակ կալուած մը էր մեր ունեցածը։ Անկէ մանողն ու եկողը յայտնի չէր։ Տարօրինակ մարդիկ էին ծիապանները։ Մանկութիւնս անցած է այդ քիչ մը առասպելական միջավայրին մէջ։ Բնական է դպրոց կ'երթայի։ Բայց յաճախ կը տեսնէին զիս ձիու մը քամակին։ Խոլ արշաւներ պուլկարական բնութեան մէջ։

– Կը սկսիմ հասկնալ թէ ինչո՛ւ...

– Այո՛, քաջառողջ մանուկ մը, շընչոտ լեռներու մաքուր օդը։ 1914-ին զիս դրկեցին մեծ եղբօրս քով, որ Ռուսաստան հաստատուած էր։ Երկու տարի մը-նացի Օտեսա, Ռուսերով։

– Հոն դպրոց դացի՞ր։

– Ո՛չ, երկու տարի կօշկակարի աշակերտ եղայ, մինչեւ տասներկուս տարեկանս։

– Կօշկակարութի՞ւն, բայց ինչո՞ւ...

– Ցեղայ վերադարձայ Վառնա, ծընողքիս մօտ։ Պատերազմը շղթայազերծուած էր արդէն երկու տարիէ ի վեր։ Ամէն կողմ կրակ։ Կ'այրէ՛ր աշխարհը։ Ծնողքս զիս դարձեալ դպրոց դրին, Ֆրէրներու մօտ։

– Ֆրանսերէնդ ուրեմն հո՞ն սորվեցար։

– Այո՛, ու դասարանին առաջինը հանդիսանալով միշտ։ Բաւական ֆրանսերէն եւ հայերէն գիտէի արդէն, երբ զինադադարին ընտանեօք փոխադրուեցանք Գուլիս։ Սկսայ յաճախել կեդրոնական։

– Թէքէեանը հո՞ն ճանչցար։

– Այո՛, իրրեւ ուսուցիչ։ Առաջին ոտանաւորներս ան տեսած է, քաջալերած, հրատարակած։ Միշտ ալ արթուն աչակերտ մը եղած եմ, եւ բոլոր դասերուս մէջ։ Սիրուած՝ ուսուցիչներէս, ընկերներէս։ Խելօք, բարի ուսանող մը, եղբայրներու մէջ կորսուած յաճախ։ Շատեր օգտագործած են այդ բարութիւնս, զիս յաճախ միամիտի մը տեղ դրած։ Նոյնիսկ աւելի ուշ, դրական ընկերներս շարունակած են զիս նկատել...

– Ձէ՞ս ուզեր որ այդ մասին խօսինք քիչ մը յետոյ...։ Կեդրոնականը աւարտեցի՞ր։

– Ո՛չ բոլորովին։ Վեց ամիս մնացած էր, բայց մեզ վկայականի արժանի դասեցին ու տուին։ Ամէն ինչ տակն ու վրայ եղած էր արդէն ու անգամ մը եւս մեր չունչը գալքանները առինք։ Բախտը ունեցայ 1923–ի գարունն ու ամառը անցընելու դարձեալ Թէքէեանի հետ։ Գիշեր ցերեկ միասին էինք, բանաստեղծութիւն հոլովելով։

Ապա Ֆրանսա, 1923–ի աշնան։ Շուտով քառասուն տարի պիտի ընէ։

– Բանաստեղծի կոչումդ ուրեմն կը պարտիս Թէքէեանին։

– Թերեւս, եթէ կ'ուզես։ Թէքէեանը չճանչցած սկսած էի գրել արդէն։

– Ձե՞ս կարծեր որ որոշ ազդեցութիւններ կրած ես գէշերէն մինչեւ արշալոյսի հեղինակէն։

– Հա՞...

– Միայն լեզուի տեսակէտով։ Երկուքիդ ալ գործածածը նոյն հայերէնն է, մաքուր, գուտ, գիտական ճշգրտութեամբ յանախ, նոյնիսկ քիչ մը չոր։ Բայց չունիք նոյն ոճը, չէք կրեր մանաւանդ նոյն հոգին։ Սիրոյ բանաստեղծն է Թէքէեան առաւելապէս։ Կինն է առանցքը անոր քերթուածներուն, որոշ տեսակի կին մը, ա՛ն որ չի կենար, կու գայ ու կ'անցնի, շոյանք ու վէրք տալով...։ Դուն գրեթէ չես մօտեցած այդ նիւթին։ Իմացական է քու բանաստեղծութիւնդ։

– Այո՛, կը մտածեմ թէ ճիշդ է բնութագրումդ, Փօլատեան։

– Ունիս առանձնայատուկ ոճ մը ու յետոյ տարբեր են տագնապներդ, կեանքդ, ամէն ինչ...

– Այո՛, այո՛, ամէն ինչ տարբեր։

– Ի՞նչ կը մտածես գործիդ մասին, Սարաֆեան։

– Ինչպէ՞ս... Ե՞ս...

– Ըստ քեզի ի՞նչ կը բերես հայ բանաստեղծութեան։

– Անսպասելի հարցում մը. չէ՞ս կարծեր որ պէտք է շրջել դայն, ե՛ս ընեմ հարցումը եւ դուն տաս պատասխանը։

– Մեր գրոյցին ընթացքին իմ պատասխանս արձանագրուած է, եւ դեռ ուրիշ առիթ ալ պիտի ներկայանայ, բայց հետաքրքրական է իմանալ քո՛ւ կարծիքդ։

– Ի՞նչ կ'ուզես որ ըսեմ, ի՞նչպէս կրնամ... Քանի մը մտածումներ արտայայտած եմ թերեւս, ուրիշներէն տարբեր ձեւով մը։ Ա՛յսքան, ուրիշ ոչի՛նչ։ Առնուազն մեծամտութիւն է, ըստ իս, շրջելու համար յիմարութիւն, կարծել որ նոր բան մը կը բերենք աշխարհին ու մարդոց։ Ամէն ինչ գտնուած է արդէն, ըսուած։ Արտայայտուած՝ հազար ու մէկ ձեւով, բոլոր լեզուներով, դարերէ ի վեր։ Կեանքի գլխաւոր հարցերուն, եղելութիւններուն դիմաց նոյն հակազդեցութիւնները կ'ունենան մարդիկ։ Սէրը, տառապանքի, մահուան դիմաց՝ իմ եւ քու մտածումները գրեթէ նոյնն են։

– Քեզի համաձայն եմ եւ չե՛մ, սիրելի Սարաֆեան։ Նախ այդ եղելութիւնները երբեք նոյնը չեն, նոյն ձեւով տեղի չեն ունենար։ Կը տարբերին ժամանակաշրջանէ ժամանակաշրջան, ընկերութենէ ընկերութիւն, մարդէ մարդ։ Սէրը, կեանքը, տառապանքը, մահը անլուծելի առեղծուածներ են, ու այդպէս ալ պիտի մնան։ Մարդոց համար անբարոյական նիւթ խորհրդածութեան, վերլուծումի, ապրումի։ Բայց մենք կը զգանք, կ'ապրինք տարբեր ձեւով։ Կ'արտայայտենք մանաւանդ տարբեր եղանակով, ըստ մեր ներքին էութեան։ Արտայայտութեան այս տարբերութիւնն իսկ կը բաւէ, որ մարդիկ զանազանուին իրարմէ, Նարեկացին՝ Շնորհալիէն, Քուչակը՝ Սայաթ–Նովայէն, Վարուժանը՝ Զարենցէն, Սիամանթօն՝ Մեծարենցէն։ Նոյնիսկ Մեծարենցը՝ Վ. Տէրեանէն։ Եւ դեռ ասոնք նոյն աղբիւրէն ջուր կը խըմեն, նոյն լեզուով կը գրեն։ Հապա մը-նացածնե՞րը...։ Ի՛նչ եւ իցէ, ձգենք այս խնդիրը, եթէ կ'ուզես։ Ուրիշ հարցում մը, Սարաֆեան, ինչո՞ւ կը գրես։

– Օ՛, հեւոզհեակ աւելի բարդ... Ին-

չո՞ւ կը գրեմ... ո՞վ կրնայ ըսել թէ ինչո՛ւ կը գրէ։ Նախ ճշդեմ թէ արտաքին աշխարհը զիս չի՛ հետաքրքրեր։ Ներքին աշխարհն է, ներքին յոյզերն ու մտածումներն են, որ զիս իրենց կը քաշեն։ Ու կը մտածեմ թէ քերթուածներուս մէջ կ'ուզեմ սնոնցմէ ոմանք բռնել, հաստատել, բանտարկել, եթէ կը նախընտրես ու յետոյ զանոնք յանձնել...

– Ցաւխենակոնութեան...

– Օ՛, մեծ բառ մըն է յաւխենակոնութիւնը, ըսենք գալիք մարդերուն, մեր յաջորդներուն։ Բայց կը կարծեմ թէ ամէն արուեստագէտի՝ խոստովանուած թէ գաղտնի փափաքը ա՛յդ է։

– Գիտեմ, ու պէտք է որ այդպէս ըլլայ։

– Հաւուր է սակայն ստեղծագործութեան տրամը։ Կը նախանձիմ անոնց, որոնք մտածումի մը մէկ երեսը կը տեսնեն միայն, մի՛ միայն լուսաւոր երեսը։ Ինծի համար ամէն ինչ բազմաթիւ երեսներ ունի։ Քառս մըն է մեր ներաշխարհը։ Պէտք է բարձրանալ լոյսին, խարխափելով, արիւնելով։ Զտուած վիճակի մէջ չենք գտներ երբեք մեր մտածումները։ Մեր զգացումները զորդեան հանգոյցներու կը նմանին յաճախ։ Ինչպէս չենք գտներ հողին մէջ ոսկին՝ զրտուած, կամ ադամանդը՝ տաշուած, վերջնական ձեւի վերածուած։ Այդպէս են մեր մտածումներն ու զգացումները։ Մենք է որ պիտի զտենք, տաշենք, ձեւաւորենք, գեղեցկացնենք։

– Շատ լաւ ձեւով սահմանեցիր բանաստեղծութիւնդ։ Օգտուելով առիթէն, կը փափաքիմ քեզի ուղղելիք հարցումներէս մէկը այստեղ դնեմ։ Բնականօրէն հասանք անոր։

– Ի՞նչ է այդ հարցումը։

– Ի՞նչ եղաւ հակազդեցութիւնդ, երբ յանկարծ դուն դքեղ դաբ Ֆրանսական ծովածաւալ մշակոյթին դիմաց։

– Ա՛յդ հարցումին կը սպասէի։ Սիրով կը պատասխանեմ եւ անմիջապէս։ Առաջնակարգ կարեւորութիւն ունի ան մեր սերունդին գրականութեան հետ, ուստի իմ գրածներուս հետ։ Մեր ազգային դժբախտութեանց կողքին, կատարեալ տրամ մը նաեւ այդ մէկը, իմացական տրամը։ Կը նմանէինք լուղորդներու, որոնք վարժուած են իրենց պարտէզներու փոքր աւազաններուն մէջ լողալ միայն եւ որ յանկարծ կը նետուին հսկայ ովկիանոսի մը փրփրադէզ ալիքներուն մէջ։ Քիչ մնաց խեղդուէինք։

– Խեղդուողներ ալ եղան։

– Անխուսափելի էր։ Բայց պէտք չէ կարծել որ միայն իմացական էր տրամը։ Մարդկայինը, ազգայինը, աշխարհի բոլոր խռովքները թափեցան մեր վրայ։ Սահմռկած էինք, շփոթած։ Տարագիրներ էինք, ջարդերէն ազատած որբեր՝ շատերս։

Նախ կար կեանքը։ Հարկ էր ապրիլ։ Նետուած էինք լաբիւրինթոսի մը մէջ, մինակ, վիրաւոր, վիրաւոր մեր ազգային արժանապատուութեան մէջ։ Գանդուխներ էինք, մեր սիրելիներէն զատուած, տխուր։ Ու մեր շուրջ լոյս էր, ուրախութիւն, վայելք։ Հարկ էր շարաշար աշխատիլ, ապահովելու համար մեր կեանքը, ապրելու համար մարդկօրէն։ Ու քառասուն տարի է կ'աշխատիմ ես, Փօլատեա՛ն, առանց կանգ առնելու, յաճախ օրական տասը տասներեկու ժամ։ Աշխատած եմ ու գրած։ Մինակս շինած եմ բոյնս, հասած որոշ ապահովութեան մը։ Ի՛մ աշխատանքովս, ճակտի քրտինքովս։ Եւ ես հայ բանաստեղծ եմ...։ Ու կեանքը աւա՜ղ, միշտ չժպտեցաւ ինծի, տագնապներ ունեցայ։ Վիշտեր ու ցաւեր անպակաս են կեանքէն։ Ոչ ոք զիս հասկըցաւ, ոչ ոք ինծի ձեռք երկարեց։ Եւ ոչ ոք, կը հասկնա՞ս, ոչ ոք կրնայ խըմել իմ դառնութեան բաժակէս։ Բայց ինչո՞ւ կը պատմեմ այս բոլորը քեզի, քու հետաքրքրութիւնիդ դրականութեան կը վերաբերին։

– Կարելի՞ է բաժնել կեանքը դրականութենէն։

– Ո՛չ, ի հարկէ։ Գալով բանաստեղծութեան...։ Այս մարդին մէջ նոյնքան խոր էր չփոթութիւնը, խղումը։ Անկա-

բելի էր ինձի համար երգել հին ձեւով։ Բոլորովին նոր կեանք մը էր, նոր ըզգայնութիւններ, նոր աշխարհ մը։ Վարուժան, Թէքէեան կ'արձագանգէին դեռ մեր մէջ, հայութիւնը ամբողջական ձեւով ներկայ էր մեր հոգիներուն մէջ։ Բայց կեանքի, արուեստի նոր ըմբռնումներ դրուած էին մեր դիմաց։ Գերիրապաշտները կ'աղմկէին, կը քանդէին ամէն ինչ։ Գոտրլէրը դիս գրաւած էր աբզէն, Մալարմէ՛ն...։ Կարդացի Վալերին։ Նոր արուեստի մը քրմապետներն էին։ Ի՞նչպէս կարելի էր հին ձեւով հայերէն քերթուածներ գրել, զոնոնք կարդալէ ետք։

– Այո՛, դժուար էր։ Եթէ կը յիշես, սիրելի Սարաֆեան, փորձած եմ վերլուծել այդ տոմսը, Փարիզահայ բանաստեղծներուն նուիրուած նախորդ գրոյցի մը մէջ։ 1923–ին երբ Փարիզ հասաք, դո՛ւն, ընկերներդ, դուք բանաստեղծութեան ըմբռնում մը, որ հիմնովին կերպարանափոխուած էր։ Վարուժանի, Թէքէեանի վարպետները, Հիւսկ, Վէրլէն, Սամէն, չատոնց դադրած էին ֆըբանացի բանաստեղծները ներշնչելէ, հրապարակէն քաշուած էին, «գլխատուած»։

Մինչդեռ էր այլեւս զգացումներով յորդուն, երաժշտութեամբ միայն հարուստ քերթուածներ գրել։ Քերթուածի մը յօրինումը կը հպատակէր շատ աւելի բարդ օրէնքներու։ Երգ մը չէր ան այլեւս, ո՛չ մեղեդի եւ ոչ իսկ լոկ մտածում։ Ճարտարապետական բարդ կառոյց մը, որուն յօրինումին կը մասնակցէին մեր բոլոր ուժերը, մեր դիտակցութեան ու նաեւ անգիտակցութեան մէջ պահուած ուժերը։ Ամփոփելու համար ըսենք որ քերթուած մը այլեւս չէր կրնար սրտագնական ըլլալ, այլ միա՛յն հոգեբնական, իմացական։

Եւ դո՛ւն, Սարաֆեան, ըմբնեցիր այս, առաջին օրէն։ Հո՛ս է քու արժէքդ։ Փարիզահայ քու միւս ընկերներուդ հետ, դո՛ւն էիր որ նոր ածու մը բացիր, նոր ակօս, «նոր անջրպետ» հայ քերթողութեան համար։

– Այո՛, թերե՛ւս...

– Վոտահ եմ. վստահ նաեւ որ դո՛ւն ալ վստահ ես...

– Թերե՛ւս, թերեւս նոր բան մը աւելցուցի մեր նախորդ սերունդի ժառանգութեան վրայ։

– Անպայման, սիրելի բանաստեղծ։

Այստեղ ուրիշ հարցում մըն ալ կ'ուզեմ ուղղել քեզի. հարցում, որուն պատասխանը տուիր արդէն։

– Զեմ հասկնար, ի՞նչ ըսել կ'ուզես։ Եւ ո՞րն է այդ հարցումը։

– Փիլ մը առաջ ընդարձակ դրութիւն մը կարդացիր ինձի, արձակ։ Հարցումս ծնաւ անկէ։ Ահաւասիկ.

– Ի՞նչ կը մտածես, Սարաֆեան, Հայութեան մասին, մեր մշակոյթին մասին։ Ուրիշ ձեւով մըն ալ դնեմ հարցը.– Ի՞նչ է հայկական ոգին. ինչո՞վ կը տարբերինք ուրիշներէն։ Նոյն ձեւո՞վ կը տեսնենք աշխարհը թէ ունինք մեզի յատուկ, տարբեր նայուածք մը։

– Հասկցա՞յ, ո՛ր հատուածին կ'ակնարկես. ա՛ռ եւ ընդօրինակէ։

– Շնորհակալ եմ, դուն ալ գի՛ս հասկցար։ Ուրեմն վերոյիշեալ հարցումիս՝ ահա՛ քու պատասխանդ.

– «Մենութիւն՝ աշխարհի մէկ ծայրին վրայ։ Կտրուած կապեր։ Ո՛չ հայրենիք, ոչ ազգ։ Մենութիւն՝ տարիներու ճիգերէ ետք։

Անօգուտ այդ ճիգերն ու վաստակը։ Խլուած՝ ճիգին եւ վաստակին ուրախութիւնն իսկ։

Եւ սակայն, ոչ մէկ կապ կտրուած է իրականին մէջ, ոչ ալ զանոնք կտրելու փափաք։ Ազգութիւնը շատ աւելի զգալի է այս մենութեան մէջ, ծովուն առջեւ։ Օտարութիւնը, կտրուած կապերը շատ աւելի ցայտուն կը դարձնեն ինքնութիւնը։ Եթէ մոռնանք իսկ զայն, մեր երեսին կը զարնեն մեր ինքնութիւնը։

Շատ աւելի ցայտուն է, եւ մեզ՝ իմացական ու զգացական խորութեան տանող զօրութիւն է մեր Հայութիւնը։

Այլ ազգերու գաւակներ կրնան աւե-

լի խելացի, զարգացած եւ խոր ըլլալ, բայց չեն կրնար տեսնել ա՛յն ինչ որ կը տեսնենք մենք՝ աշխարհին նայելով, չեն կրնար տալ ա՛յն, ինչ որ կու տանք մեր հայութեամբ:

Չեն կտրած կապերը եւ ո՛չ մէկ փափաք կտրելու: Այլ զանոնք ուելի եւ աւելի տարածելու կամք:

Ոչ ոք կրնայ արհամարհել աշխարհը՝ մեզի պէս եւ գեղեցիկ ու մարդկային աշխարհի մը կարօտը զգալ նոյն ատեն: Ոչ ոք կրնայ արարչութեան սիրելի նայուածքը մեզի պէս:

Աւելի ընդարձակ են ներքին հորիզոնները: Տեսողութիւնը աւելի մեծ, մինչ մեր բոլոր տեսածները կ'երեւան մեզի՝ խախտուած, փոփոխական եւ մեծ խռովք է մեր մէջ:

Սպառում բայց աճում է նաեւ՝ նոյն ատեն»:

– *Այս իսկապէս գեղեցիկ արձակը դիս փոխադրեց տասնըհինգ տարի ետ: Նոր ծանօթացած էինք իրարու, կը յիշե՞ս, Սարաֆեան: Մեծամտութիւն չըլլա՞ր արդեօք իմ կողմէս, եթէ ըսեմ որ մեւով մը ինծի կը պարտիս դայն:*

– *Ի՞նչ բան քեզի կը պարտիմ... չեմ հասկնար...*

– *Այդ հրաշալի արձակդ:*

– *Կրնայ ըլլալ, բայց դա՛ր ձեալ չեմ հասկնար:*

– *Կը յիշե՞ս որքա՞ն ետեւէդ ինկայ արձակ գրութիւններ առնելու համար քեզմէ, «Արեւմուտք»ի մէջ տպելու, երբ ժամանակ մը կը զբաղէի այդ թերթով: Կը յիշեմ նոյնիսկ որ օր մը բռնեցիր դիս Ռիւ Ռիշէի անկիւնը եւ տարօրինակ դէմքով մը հարցուցիր. «Փոլատեա՛ն, իսկապէս ա՛յդքան կը սիրե՞ս արձակս, որ շարունակ կը պահանջես...»:*

Խանդավառ արտայայտութիւնս թէեւ չփարատեց կասկածդ, բայց բարեբախտաբար, շարունակեցիր նոյն ուղղութեամբ: Կատարեալ արուեստի գործեր են եւ ես շատ բարձր կը գնահատեմ «Վէնեէնի անտառը», «Մանուկ Դուինեանը», «Մեծն Տիգրան կամ Լոյսի Սատանան», ու նաեւ ուրիշներ:

– *Կը կարծե՞ս որ անոնք, Փոլատեա՛ն...*

– *Կրկի՞ն պիտի սկսինք վիճիլ... Բայց դուն իմ պահանջիս գոհացում չտուիր:*

– *Եթէ իսկապէս լաւ են, ա՛յդ պարտադրին միայն կ'ուզեմ պարտական ըլլալ քեզի: Որովհետեւ յիշեցուցիր ճիշդ է, դուն գնդեցիր ամէնէն աւելի:*

– *Որ մը թերեւս դիս յիշեն Հայոց գրականութեան մէջ, ա՛յս խոստովանութեանդ առնչութեամբ...*

– *Զե՞ս կարծեր որ դարձեալ կը յաւելանցես:*

– *Լա՛ւ, այդպէս թող ըլլայ: Ապագան կը ճշդէ: Գրուածքի մը կեանքը, Սարաֆեան, շատ տարօրինակ է: Դուն ալ, ես ալ չենք գիտեր թէ ապագայ սերունդները ի՞նչ պիտի պահեն մեզմէ: Ինծի կը թուի թէ քերթուածներուդ կողքին, արձակդ պիտի մնայ Հայոց գրականութեան մէջ սուրբ գրաւէ տեղ մը, որուն մասին զազափար չունիս ու չես կրնար ունենալ:*

Բայց եթէ կ'ուզես, դարձնենք այս էջն ալ:

– *Դարձնե՛նք, բայց ինչի՞ մասին կ'ուզես շարունակենք խօսիլ տակաւին:*

– *Քո՛ւ մասիդ:*

– *Ի՞մ մասիս... Բայց վերջ ունի՞ այդ, յիսոյ, չի՞ բաւեր: Ի՞նչ կ'ուզես պիտակ ինձմէ, որ դեռ չես գիտեր:*

– *Ի՞նչ է կարծիքդ արդի համաշխարհային գրականութեան մասին: Ո՞ւր հասած ենք: Քառասուն տարուան փորձերը ո՞ւր հասցուցին քեզ: Ինչի՞ կը հաւատաս:*

– *Այո՛, հասկցա՛յ...: Կը հաւատամ յեղաշրջումի մեծ օրէնքին: Յեղաշրջումով նիւթը կը փոխակերպուի լոյսի, իմացականութեան: Տիեզերքի միակ մեծ հրաշքը այս է: Այդ յեղաշրջումին մաս կը կազմեն պայքարն ու տառապանքը: Վայրերի կը կարծէ թէ անգլուխ է տիեզերքը ու ամէն ինչ կ'աճի ինքնաբերաբար, բոյս, կենդանի, մարդ: Համա-*

ձայն չեմ, չեմ կրնար ըմբռնել տիեզերքը այդ ձեւով։ Չեմ կրնար մանաւանդ համաձայն ըլլալ Սարթրիմ, Քամիւիմ։ Անորամարտական, ապսիւրտ կը դրանեն տիեզերքը, մարդը, մարդկային կեանքը։ Աւելի ճիշդ չէ՞ ենթադրել որ մե՛նք հասկնար։ Ո՛չ թէ տիեզերքն է ապսիւրտը, այլ մե՛նք...։ Զենք հասկնար շատ մը բաներ, բարութիւն, չարութիւն։ Նոյն բանն են սակայն, նոյն իրողութեան երկու երեսները։ Ինչպէս են տառապանքն ու ուրախութիւնը։ Մեծ տառապանքներէ միայն կրնանք հասնիլ իրական ուրախութեան։ Հարցուր միսթիֆիներուն։ Հա՛, կը հարցնէիր, Փօլատեան, թէ ո՛ւր եմ հասած ես։ Կը կարծեմ թէ հասած եմ տեղ մը, ուրիշ ամէն ինչ կը դիտեմ ա՛լ, տարբեր աչքերով։ Կը տխրիմ մտածելով թէ ինչո՛ւ յաճախ ըզբաղած եմ երկրորդական խնդիրներով, պզտիկ վէճերով ժամանակ վատնած։ Կ՚ամչնամ շատ մը արարքներէս, ըսածներէս, գրածներէս։ Հաւանաբար այդ տկարութիւններն ալ մաս կը կազմեն կեանքին։ Հարկ է յաճախ տայթաքիլ, պայծառութեան հասնելէ առաջ։ 1950–ին էր որ յանկարծ այդ քառսային վիճակը վերջ գտաւ ու ես հասայ պայծառութեան։

– Ուրախ եմ լսելով այդ լաւատես մտածումներդ։

– Լաւատե՞ս, թերեւս բոլորովին ճիշդ չէ բառը։ Հաստատութեան մը, աշխար(հա)իմացումի մը, որ լաւատեսութիւն չէ՛ անպայման։ Կրցա՞ յ բացատրել արդեօք, ու գոհացուցի՞ քեզ։

– Այո՛։

– Եթէ կ՚ուզես հոս ալ վերջացնենք մեր զրոյցը։

– Զենք կրնար, քանի մը ուրիշ հարցումներ ունիմ տակաւին։ Ի՞նչ կը մտածես արդի գրականութեան մասին, Հայաստան եւ արտասահման։

– Հասկնալի է որ Հայաստանի մէջ գրուած բանաստեղծութիւնը չի գոհացներ զիս։ Չի գոհացներ նաեւ զիս Սփիւռքը։ Չկրցանք անկախ գրականութիւն ստեղծել. իմաստութիւնը չունեցանք հաւաքական աշխատանքի լծուելու։ Բանաստեղծներ, գրողներ ունեցանք, բայց գրականութիւն չստեղծեցինք։

– Քանի որ հոս հասանք, կ՚ուզե՞ս քիչ մը ալ խօսիլ «Ծարդգող»ի, «Մենք»ի շրջանի մասին։ Ինչո՞ւ ա՛յդքան կարճ տեւեց այդ հրաշալի շարժումը։

– Խառնաշփոթ շրջան մըն էր եւ իրարու հետ շաղախուող տարրեր չէինք։ Ամէն մէկս տեսակ մը, Շուշանեանը, Շահնուրը, միւսնե՛րը...։ Նարդունին, դոր կը սիրեմ, կրնար վճռական դեր կատարել, ըլլալ մեր ղեկավարը, բայց չեղաւ։ Չեմ կրնար մեղադրել զինք։ Հակամարտ, զիրար չհանդուրժող ուժեր էին։ Շուշանեանը, կրակ ու բոց կըտրած, ոգի ի բռին նետուեցաւ քաղաքական կրկէս, Շահնուրը հեռացաւ, ուրիշ ձեւով մը։

Ես, քանի մը ուրիշներու հետ, ամէնէն անկեղծն էի, ամէնէն հեղը։ Ոչ ոքի շարութիւն չեմ ըրած, չեմ ցանկացած։ Բայց չատեր ելան դէմս, վիրաւորեցին, դիս միամիտի մը տեղ դնելով։

– Եւ կամ ալ նախանձելով։

– Թերեւ՛ս... Ամէն պարագայի բարութիւն, խոնարհութիւն՝ տկարութիւն չեն նշանակեր։ Ամէն գրող իր ասը ունի։ Ոչ ոքէ պակաս խելացի եմ։ Մելք եւ խորամանկութիւն նոյն բաները չեն։ Իմ մէջս կայ հպարտ մարդ մը ու նաեւ արդարական հոգի մը։ Ամէն ճշմարիտ արուեստագէտ այդպէս է։ Տարբ մը կայ որ դեր կը կատարէ արուեստին մէջ։ Խորամանկ պախալը չի կրնար արուեստագէտ ըլլալ։ Իմ դէմքս պայծառ է, կ՚ուզեմ որ ամէն մարդ դայն տեսնէ։ Ես իմ պայծառ դէմքս կ՚ուզեմ։

– Պայծառ կը տեսնենք դէմքդ, ամէ՛նքս ալ, կրնաս վստահ ըլլալ, Սարաֆեան։

– Շնորհակալ եմ։ Գիտեմ որ դուն ալ ինձի նման ես, անկեղծօրէն բարի, բա՛յց...

– Ձգենք ուրիշները, Մարաֆեան, ինչո՞ւ զբաղինք չարերով, քիչ մը առաջ դուն էիր ըսողը, որ հասած ես տեղ մը, ուրկէ կը դիտես աշխարհը, մարդի՛կ...

– Իրաւունք ունիս: Ուրիշ հարցո՞ւմ:

– Լման չպատասխանեցիր նախորդին: Ըսիր թէ Հայաստանը քեզ չի գոհացներ, ոչ ալ Սփիւռքը...

– Սփիւռքին հետ եմ ես, սիրտս ոչ-կարներուն հետ է: Կը ճգմուի մեր ժողովուրդը: Չեմ կրնար բաժնուիլ անկէ: Տառապած է, ջարդուած, ի՞նչպէս չըլլալ անոր հետ: Կ'ուզես քերթուած մը կարդամ քեզի: Անցեալ ամառ գրեցի ու դեռ անտիպ է: Եթէ կ'ուզես արտադրէ միայն սա չորս տողը, մոռնամս կու տայ.

«Մերթ կը տեսնեմ «խեղդամահ հայրենիքիս աչքին պէս»
Լուսինն՝ ու մերթ հայրենիք մը նոր ու վառ կը յիշեմ:
Հին կարօտներ կը հանեն զիս մերթ ընդ մերթ՝ նորին դէմ,
Ու նորերուն առջեւ՝ զիս հիներով խեղճ կը զգամ ես»:

Աղուոր է եւ շատ յատակ:

«Զրոյցդիս նպատակներէն մէկն էր ներկայացնել դորդդ, բայց կարծեմ թէ շատ տարածուեցանք, եւ դեռ չենք հասած եզրակացութեան: Գիտե՞ս որ ամբողջութեամբ կրկին կարդացի դորդդ:

– Իրա՞ւ, եւ ի՞նչ եղաւ տպաւորութիւնդ:

– Դուն կը կարդա՞ս գրածներդ, Մարաֆեան:

– Ո՛չ, գրեթէ ո՛չ: Բայց չպատասխանեցիր հարցումիս:

– Կարդացի հաճոյքով, յուզումով: Բանաստեղծութիւն մը տասը տարին անգամ մը պէտք է վերստին կարդալ, հաստատելու համար թէ կը հիննա՞յ ան եւ կամ ալ կը փոխուի՞նք արդեօք մենք:

Ո՛չ մէկը, ոչ միւսը այս պարագային: Աւելի մեծ գեղեցկութիւններ գըտայ, զոր չէի տեսած տասը տարի առաջ: Կատարեալ է «Լեռը», ու չեմ կարծեր որ ա՛լ մոռնամ զայն.

«Կարելի չէ բեզ մոռնալ, ո՞վ արիւն...»:
Ան կը հնչէ մեր ականջին, հաւաքական երդումի մը պէս, հաւատամքի մը պէս:

Զիս գրաւեց սակայն ամէնէն աւելի «Մինչեարիդ»ի Հրահաւը: Հրաշալի քերթուածաշարք մըն է, ծայրէ ի ծայր գեղեցիկ: Զէի ըմբռնած ա՛յս հաճոյքով: Ամբողջութեամբ ներկայ ես հոն, Մարաֆեան, մտածումներովդ, ինքնատիպ արուեստովդ:

Մտիկ ըրէ դիս վայրկեան մը.

«Հրէշը մեռաւ:
Հրեշտակ մը փող հնչեցուց:
Եւ այդ հրեշտակը թռչուն մըն էր հսկայական:
Անոր անունն էր Հրահաւ:
Հրէշին արեամբ կազմուեցաւ լիճ մը կարմիր:
Եւ այդ լիճին մէջ կռզի մ'էր թռչունը մեծ,
Կռզի մը՝ որջ ոճիրներու,
Եւ ովասիս նոյն ատեն:
Կը շառայլէր արմատներուդ մը նման:
Եւ նաւ մ'էր ան, ազատութիւն հովերէն
Ուռած փարթամ առագաստով:
Իր անունն էր Մտածում»:

Ու սա քանի մը տողը, բարձունքին հասած մարդուն ազօթքը.

«Ու մարդն յոգնած՝ սարսափահար՝ ոգեղսեց սէր, կանչեց, պոռաց
Անո՛ր, որ տէրն էր ցաւերուն տարածութեան այդ անսահման,
Ուր ան լքուած կը զգար ինքզինք: Պատմեց տանջանքն իր բարձրացման,
Ան խնդրեց զուր ու բարութիւն, ապաղաչեց սրտով մ'այրած:
– Մարդացեալ Տէ՛ր, մարդացո՛ւր զիս, մարդկայի՛ն Լոյս,
Մարդո՛ց Աստուած...

Ու վերջին քերթուածը մանաւանդ, այդ մեծ, իմացական պոեմին վերջաբանը, կատարեա՛լ ամէն տեսակէտով:

Թոյլ տուր կարդամ ու վերջացնեմ.

«Ուզեցի միշտ որ դուն գաս, Գեղեցկութիւն՝ ուղեղէս
Ծընունդ առած, երկնեցի, եւ յուսացի ես ընդման
Անոր որ հոգն աւետեց ծովերէն վերջ անսահման,
Գաս եւ ինձի բերկրութիւն, անդորրութիւն մը բաշխես:

Գաս մահինես քով՝ անմայն, քայլոյն այգի մը վրսեմ,
Զիս հաւատքով, բարութեամբ, գեղեցկութեամբ ոռոգես:
Ըզգամ թէ չեմ խարուած ես նախընտրելով քեզ կեանքէս,
Բերես շնորհներս իմ, որոնց տարիներով կը սպասեմ:

Բայց երբէ դուն, սրբութիւն իրագործման, ինձի՝ իմ
Գոհացումիս հետ պիտի տաս ամբացում մը եւ ես,
Նրման անոր որ հասաւ, պիտի ընդմիշտ գրկեմ իմ
Քենէ, ինէ, ըլլալու քաղցրութենէս, ծարաւէս,
Բիւրեղացած, խաղաղած՝ պիտի փակեմ ապագան,
Լաւ է որ միշտ ուշանաս, ըսդասեմ, զիս խրոովես,
Զըզա՛ս, քանի որ իմ մէջս այդպէս է լոկ որ կաս···:

— Ի՞նչպէս կը դտնես դրածդ, Սարաֆեան:

— Իրաւունք ունիս, ես ալ չէի դիտեր թէ ա՛յդքան գեղեցիկ էր, կը թուի թէ ես չեմ գրած···

— Դո՛ւն ես գրած, ու այսպիսի քերթուածներով է որ կը շարունակես, կը ճոխացնես արեւմտահայ բանաստեղծութիւնը: Արժանաւոր քուրմն ես այն բանիներին, զոր հիմնեցին արեւմտահայ քերթողները, իրենց տաղանդով, իրենց արիւնո՛վ ոռոգեցին զայն: Ու ըրին այնպէ՛ս, որ ան դառնայ հայ բազմածալ ու լուսաշող հանճարին մէկ նոր կոթողը: Դուն, Սարաֆեան, օրինաւոր ժառանգորդն ես, պահապանն ու շարունակողը արեւմտահայ այդ մեծ շարժումին:

Սփիւռքը երկար ատեն մոռցաւ որ տէրն էր այդ գանձին եւ թէ պարտաւոր էր զայն պահել, շարունակել, ճոխացնել:

Ցանկակ տարիներ թափուր մնաց բազինը: Ցանցառ թիւով ուխտաւորներ միայն այցելեցին անոր: Ան չդարձաւ ուխտատեղի, հաւաքական ճիգի, հաւաքական նորընծայման ու ստեղծագործութեան աղբիւր:

Բայց ահա՛, որ նորեր, հայրդիներ, հաւատաւոր ու չքեղ, չքեղ իրենց հայութեամբ, ձեռք կ'առնեն ջահը, կը լուսաւորեն թողլուած քաղինը ու կը կանչեն մեզ դէպ ի ներս, հոգեկան եւ իմացական հարսնիքի:

Պարտաւոր ենք պատասխանել հրաւէրին, բոլորս, անո՛նք որոնք տաղանդ ունին, անոնք որոնք հաւատք ունին, դո՛ւն, ես, բոլորս:

Մեր փրկութիւնն է, մեր կեանքին իմաստը: Գէտք է համախմբուինք: Սփիւռքի բոլոր մեկուսացած, կեդրոնախոյս ուժերը պէտք է համախմբուին, բոլոր գետերն ու գետակները պէտք է հոսին դէպի հո՛ն, դէպի մեր իմացական աւազանը:

Այնպէս չէ՞, սիրելի բանաստեղծ, համաձայն չէ՞ս ինձի:

— Ի՞նչպէս կրնամ համաձայն չըլլալ, ի՞նչպէս կրնամ չհրճուիլ···

— Ուստի սատիճենք մեր թեւերը, մէկդի նետենք տարիներէ ի վեր մեր կըրած յուսահատութեան ցնցոտիները, մերկանանք մեր անիմաստ ու ամուլ վէճերէն եւ վճռաբար նետուինք այդ կենարար ջուրերուն մէջ, լողանք ափէ ափ, իրարու ձեռքէ բռնած, իրարմով երջանիկ:

Ու թոյլ տուր ինձի, սիրելի Սարաֆեան, որ իբրեւ եղրակացութիւն մեր այս «զրոյց»ին, քու եւ իմ կողմէս, ողջունեմ «Բաղին»ի չուրջ հաւաքուած մեր եղբայրները, եւ ըսեմ թէ իրենց հետ ենք մենք, հոգիով, սրտով, թէ արեւմտահայ միտքը, լեզուն, գրականութիւնը մե՛ր ալ «կրօնքն է»:

Ինչով կ'իմաստաւորուի Սփիւռքի մեր հաւաքական կեանքը, անով կ'իմաստաւորուին մեզմէ իւրաքանչիւրին ճիգերն ու վաստակը:

Կ. Փ.

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

Գրեց՝ Լ. ՄԿՐՏՉԵԱՆ

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ԿԵԱՆՔԸ ԵՒ ԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

1936–38 թուականների փոթորկալի տարիներից յետոյ՝ Բակունցի անունը եւ գործը «մոռացուած» ու անտեսուած էին մինչեւ 1954–55 թուականները։ Արգելուած անուն էր այն։ Բայց յետստալինեան մասնակի «վարկափրկումների» հետեւանքով յարութիւն առաւ նաեւ Բակունց։ 1955 թուին հրապարակուեց նրա «ԵՐԿԵՐ» ժողովածուն։ 1956 թուի Հոկտեմբերին Հայաստանի Գրողների Միութեան նախագահութիւնը որոշեց կազմել Բակունցի գրական ժառանգութիւնը հետազօտող եւ հաւաքող յանձնաժողով հետեւեալ կազմով.— Հմայեակ Սիրաս, Ռուբէն Զարեան, Սուրէն Ազաթաբեան, Սարգիս Պայաղատ, Ռուզան Նանումեան։ Հենց դրանք էլ երբեմն հանդէս են գալիս մամուլում իրենց յօդուածներով՝ Բակունցի կեանքի ու գործի մասին։ Մեծ թափ ստացաւ Բակունցի վերաբերեալ արխիւային նիւթեր հաւաքելու գործը։ Բայց, ինչպէս երեւում է, 1936 թուին ոստիկանութիւնը չի բաւականացել Բակունցին քանդարկելով ու մահուան մատնելով, այլ աշխատել է ոչնչացնել կամ թաքցնել նաեւ նրա ձեռագրերը, գրառումները, հաւաքած նիւթերը, որպէսզի հետք չմնայ նրա ստեղծագործութիւնից։ Այդ համոզումն աւելի է ամրանում, երբ կարդում ենք վերոյիշեալ յանձնաժողովի անդամներից մէկի՝ Սուրէն Ազաթաբեանի յօդուածը Բակունցի անաւարտ վէպերի վերաբերեալ.—

«Նրա (Բակունցի) ստեղծագործական խիղճը ենթարկուած էր նրա արթուն բանականութեանը, երեւակայութիւնը համերաշխ էր կամքին՝ ժամանակից շուտ չբացելու առագաստները պատահական հոգմերի հանդէպ։ – Մեզ անյայտ ու անծանօթ է Բակունցի ստեղծագործական լաբարատորիան, չեն պահպանուել նրա գրուածքների ձեռագրերը, նրա գրառումները, դիտողութիւնների ծոցատետրերը։ Մենք չգիտենք Բակունցի երկերի գրութեան կոնկրետ շարժառիթները, չկան դրանց վրայ լոյս սփռող լրացուցիչ կենսագրական նիւթեր, ոռկայն, մի բան ակներեւ է, որ գրականութեան մէջ Բակունց եղել է իսկական աշխատասէր։ Երկուսի ծանրը ցաւերով են ասպարէզ եկել նրա գրուածքները, գրողը ունենալով կայուն ու անբասիր ստեղծագործական վարքագիծ միշտ հաւատարիմ է մնացել բարձր արուեստի կոչմանը»։

1956 թուին Բակունցի յիշատակը յարգելու համար եղան նաեւ այլ նախաձեռնութիւններ։ Այդ տարուայ աշնանը մի խումբ գրողներ, Մոսկուայում կայացած Հայկական արուեստի ու գրականութեան տասնօրեակի արդիւնքները մասսայականացնելու առիթով, եղան Զանգեզուրի Լոր գիւղում, յուշատախտակ զետեղեցին այն տան մօտ, որտեղ 1915 թուին ապրել էր Բակունց, գիւղի 7-ամեայ դպրոցը կոչուեց Բակունցի անունով։ Բակունցի ծննդավայր Գորիսում եւս միջնակարգ դպրոցն ու փողոցներից մէկին անուանուեցին նրա անունով։ Եւ կարծես թէ դրանով ամէն ինչ փակուեց։ Իշխանութիւնը տակաւին զգուշանում է Բակունցի մասին չատ բան հրապարակելուց, որպէսզի ծածկուած մնան 1936–1938 թուականների ոստիկանական հալածանքների մանրամասնութիւնները։

Մի քիչ այլ ձեւով վարուեցին Զարենցի հետ։ 1957 թուի աշնանը մեծ հանդիսաւորութեամբ նշուեց նրա ծննդեան 60-ամեակը (բայց ոչ մահուան 20-ամեակը)։ Դա հասկանալի է։ Զարենց իր արժէքաւոր երկերից բացի, գրել է նաեւ զանազան ձօներ կոմունիզմի, յեղափոխութեան եւ Լենինի մասին, երբ դեռ անփորձ երիտասարդ էր։ Այդ ամէնը կարելի է դարձնում, որպէսզի Զարենց պաշտօնապէս իւրացուի այժմ կոմունիստական իշխանութեան կողմից։ Այդպէս չէ Բակունցը։ Նրա կեանքն ու ստեղծագործութիւնը բիւրեղի պէս միակուռ են եւ հնարաւոր չէ դրանցից որոշ մասեր վերցնել ու հակադրել միւս մասին։

Այս գլուխն ուզում ենք վերջացնել ռուս ժամանակակից գրաքննադատներից մէկի՝ Կորնելի Զելինսկու՝ յօդուածից քաղած մէջբերումով.—

«Բակունցն իր վերջին անուանի վէպը նուիրել է խաչատուր Աբովեանի եբիտասարդ տարիներին։ Աբովեանի վախճանը եղել է ողբերգական ու խորհրդաւորութեամբ պարուրուած։ Մի անգամ, գիշերը, խաչատուրը դուրս է գալիս տնից, որպէսզի այլեւս չվերադառնայ այնտեղ։ Եւ ընդմիշտ անյայտանում է։ Բակունցի վախճանը մի դրուագն էր մի այլ ողբերգութեան։ Մեր կուլտուրայի թշնամիները 1937 թուականին Ակսել Բակունցին տարան իր տանից, եւ նա դիմաւորից իր մահը որպէս կոմունիստ եւ այլեւս չվերադարձաւ տուն։

Ինձ թւում է, թէ սպասելով իր վերջին ժամին՝ նրա մտքում վերակենդանացաւ Բաղդի ծայրամասի այն քարը (ակնարկում է Բակունցի պատմուածքներից մէկին), որտեղ դրուած էր մոռացուած վերարկուն։ Եւ ան մտովի իր հայեացքը յառեց այնտեղ, ցերմօրէն սիրած իր Հայաստանին՝ ցանկալով նշմարել ծագող արեւի ճառագայթները, որ ամէն առաւօտ ողողում են Զանգեզուրի լեռնագագաթները։ Բայց զուցէ եւ այդպէս չէր։

Եւ ահա հիմա, քննարկելով արուեստագէտի երկերը, մենք կարծես նորից ենք զգում եւ այն հողի բոյրը, որ սնուցեց նրա տաղանդը, եւ արուեստի ու մարդկանց հանդէպ տածած նրա սէրը, այն ամէնը, ինչով ապրում էր նա։ Շնորհակալութիւն քեզ այս ամէնի համար, Ակսել Բակունց, իմ տաղանդաւոր ժամանակակից, որին ես չէի ճանաչում»։

Անշուշտ, Բակունցին սպանեցին հայկական եւ առհասարակ մարդկային մշակոյթի թշնամիները, որոնց ժառանգորդները ամէն օր պատրաստ են նոյն բանն անելու, բայց ակնյայտօրէն սխալւում է Զելինսկին, երբ ասում է, թէ Բակունց «դիմաւորեց իր մահը որպէս կոմունիստ», քանի որ այլ բան է վկայում նրա կեանքը իր էութեամբ։

Բակունցի կորուստը միայն ֆիզիկական կորուստ չէր, այլ ստեղծագործական անսպառ կարելիութիւնների բիրտ անէացում։ Սակայն մխիթարական է տրամադրութեան տակ ունենալ նրա թողած գրական ժառանգութիւնը եւ կենդանի գործը։

ԳԼՈՒԽ Ե.
ԲԱԿՈՒՆՑԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԴԻՄԱԳԻԾԸ

Բակունցի ստեղծագործական կենսագրութիւնը ընդգրկում է 1926–36 թուականները, դրա մէջ առնելով նաեւ 1929—32 թուականների ժամանակաւոր դադարը ու մի պահ կանգ առնելը: Եթէ ի մի դումարենք նրա գեղարուեստական երկերը, ակնարկները եւ չարժանկարային սցենարները՝ ապա դրանց գումարը կը հասնի մօտաւորապէս 60-ի, թերեւս մի քիչ աւելի: Անշուշտ, Բակունցի կարողութիւնների համեմատութեամբ դա քիչ է, բայց իր որակով եւ ունեցած նշանակութեամբ խորհրդահայ գրականութեան մէջ աննախընթաց ու անգերազանցելի է: Նրա ծաւալով տարբեր մեծութեան երկերը բոլորն էլ գրուած են ընդհանուր առմամբ նոյն խնամքով, պատասխանատուութեան զգացումով եւ իրենց բիւրեղեայ խտութեամբ ժանդի ենթակայ չեն:

Ի՞նչն է եղել Բակունցի ստեղծագործութեան նիւթը: Անշուշտ բացառութեամբ՝ հայ ժողովրդի կեանքը: Նա իր պատմուածքներից մէկի՝ «Սաթու»ի նիւթը (գրուած 1926 թուին) վերցրել է ապրբէջանցիների կեանքից: «Կարմրաքար» անուարտ վէպում (գրուած 1928 թուին) եւ «Եղբայրութեան ընկուզենիները» պատմուածքում (գրուած 1935 թուին) մասամբ շօշափում է հայ-ադրբէջանական յարաբերութիւնների հարցը: «Մի անգամ Հոկտեմբերի 25-ին» ակնարկը (գրուած 1932 թուին) ներկայացնում է 1917 թուի Ռուսական Հոկտեմբերեան յեղաշրջման նկարագրական պատմութիւնը: Նոյնիսկ «Մուրոյի «զբոյց»ը» յայտնի պատմուածքը (գրուած 1930 թուին), որտեղ հայ հովուի բերանով շարադրւում է մի ժողովրդական մանկամիտ առասպել Լենինի մասին, գարձեալ ուղղակիօրէն վերաբերում է Հայաստանի կեանքին: «Մաշտոցը Աբովեան» անուարտ վէպում (գրուած 1934 թուին)՝ սկզբում հանդէս է գալիս հեռաւոր Էստոնիայի Դորպատ քաղաքի անցեալ դարասկզբի կեանքը: Բակունցի նախախորհրդային ժամանակներին վերաբերող պատմուածքներում հանդէս են գալիս ցարական մանր պաշտօնեաներ, եւ այլքան: Բակունցի ամբողջ գործը, բացառութեամբ վերոյիշեալների, իր մէջ արտացոլում է Հայաստանի ժողովրդի անցեալ ու ներկայ (1920–30-ական թուականների) կեանքը:

Բակունցը սկսել է գրել նրանից, ինչ որ իրեն աւելի է ծանօթ: Քանի որ նրա կենսափորձը անընդհատ հարստանում եւ կեանքի ճանաչողութիւնը խորանում էր, ապա այդ փոփոխութիւնը արտացոլւում էր նաեւ նրա գեղարուեստական ստեղծագործութեան մէջ՝ եւ նիւթերի ընտրութեան, եւ դրանց մշակման առումով: Սկզբում Բակունցը զբաղւում էր միայն նախախորհրդային հայ գիւղով եւ իրեն շրջապատող խորհրդային գիւղի էական տեղաշարժերով: Բայց յետոյ իր ստեղծագործական շրջանծրի մէջ առաւ նաեւ հին ու նոր քաղաքի կեանքը, երեսնական թուականների հայ մարդու ապրումները, երկրի սոցիալական ու տնտեսական կերպարանափոխութիւնը (որքան հնարաւոր էր), իսկ աւելի ուշ տարածուեց դէպի պատմական ու համապարփակ թեմաները: Սկսել էր Զանգեզուրի հեռաւոր ու անշան գիւղերից, արդէն հասնում էր ամբողջ Հայաստանի կեանքի գեղարուեստական ընդգրկմանը եւ մտադիր չէր կանգ առնել դրա վրայ, այլ հետախուզում էր հեռաւոր հորիզոնները, — միշտ հայրենի հողին ամրոցէն յենուած:

Ովքե՞ր են հանդիսանում Բակունցի երկերի հերոսները: Մեծ մասամբ գիւղի պարզ բնակիչներ են դրանք՝ ծերունիներ, մանուկներ, չարքաշ աշխատաւորներ, կեանքի զոհեր, երազող ու ձգտող առնական երիտասարդներ: Ցեղ ունեն նաեւ ցարական պաշտօնեաներ, քաղքե-

նիներ, դրամապաշտներ։ Խորհրդային ժամանակաշրջանում ապրողներից Բակունցի երկերի հերոսներ են հանդիսանում հին յուշերով ապրող ցարական մըՆացորդներ, գեռեւս հին ձեւով ապրող գիւղացիներ, ստատպող մայրեր, պետական պաշտօնեաներ, պապենական հողերից զրկուած հայ գաղթականներ ու վերարնակներ եւ շատ քիչ մտաւորականներ։ Մտաւորական հերոսը Բակունցը գտել է միայն իր պատմական վէպում։ Վերջին տարիների գրուածքներում հերոսները առհասարակ մարմնչող խառնուածք ունեն, որը դրւում է գերազանցապէս աշխատանքային գետնի վրայ։ Պայքարի այլ ուղի չկայ նրանց համար՝ աշխատանքից բացի։ Բակունցը շեշտում է այդ, քանի որ աշխատանքով եւս կարելի է յաղթել։ Արդէն աշխատանքը հենց իր՝ Բակունցի զէնքերից մեծագոյնն էր։

Նախախորհրդային հայ գիւղի պատկերման տեսակէտից ուշագրաւ է Բակունցի «Մթնաձոր» պատմուածքը։ Պատմուածքի բովանդակութեանը ծանօթանալուց առաջ, տեսնենք, թէ ինչպէս է նկարագրուած այն խուլ վայրը, որտեղ կատարւում է գործողութիւնը, որովհետեւ դա ընդհանուր ֆոն է հանդիսանում Բակունցի նոյն բնոյթի միւս պատմուածքների համար։—

«Մթնաձոր տանող միակ արահետն առաջին ձիւնի հետ փակւում է, մինչեւ գարուն ոչ մի մարդ ոտք չի դնում անտառներում։ Սակայն Մթնաձորում այժմ էլ թաւուտ անտառներ կան, ուր ոչ ոք չի եղել։ Մառերն ընկնում են, փրտում, ընկած ծառերի տեղ նորն է ծըլում, աւջերը պար են խաղում, տուլում են չոքաճի պէս, ոռնում են գայլերը, դունչը լուսնակին մեկնած, վարազները ժանիքով փորում են սեւ հողը, աշունքուայ փտած կաղինները ժողովում։

Մի ուրոյն աշխարհ է Մթնաձորը, քիչ է ասել կուսական ու վայրի։ Թւում է, թէ այդ մոռացուած մի անկիւն է այն օրերից, երբ դեռ մարդը չկար, եւ բրածոյ դինոզաւրը նոյնիսկ ազատ էր զգում իրեն, ինչպէս աւրը մեր օրերում։ Գուցէ այդպէս է եղել աշխարհն այն ժամանակ, երբ բարձունքի հսկայ շերտերն են գոյացել եւ շերտերի վրայ պահել վաղուց անհետացած թոյլերի ու սողունների հետքեր։

Հիմա էլ Մթնաձորում մուգ-կանաչ մաշկով խլէզներ կան, մարդու երես չտեսած, մարդուց երկիւղ չունեցող։ Պառկում են քարերի վրայ, արեւի տակ։ Ժամերով կարող էք նայել, թէ ինչպէս է զարկում փորի մաշկը, թոյլ երակի պէս, կարող էք բռնել նրանց։ Խլէզները Մթնաձորում մարդուց չեն փախչում»։

Սակայն նոյնիսկ բնութեան այդ խաղաղ գրկում տիրութիւն էր անում անտառապահ Պանինը, որի մասին՝ «Ասում էին, որ նախկին սպայ է, մարդ է սպանել, նստել էր բանտում, յետոյ անտառ գնացել։ Հիւսիսի անտառներից մէկում նա իր կնոջն էր սպանել որսի մի գիշեր, աւելի ճիշդ՝ շներին հրամայել էր գզգզել կնոջը»։ Պանինը տեղի հայ բնակչութեան սարսափն էր իր ուղեկից վեց կատաղի շներով։ Եւ մի անգամ, երբ փորձուած որսորդ Աւին անյաջող որսից յետոյ մտածում է մի շալակ չոր ցախ տանել տուն, Պանինը բռնում է եւ նրան դիտումով առաջարկում կամ քսան ռուբլի տուգանք վճարել, կամ թէ Մթնաձորում մի արջ սպանել։ Գիւղացու ուժից վեր էր այդքան «տուգանք» վճարելը եւ ստիպուած արջ է փնտռում։ Մթնաձորում սկսւում է մի անհաւասար կռիւ մարդու եւ գազանի միջեւ։ Վիրաւոր արջը կատաղութեամբ վազում է գիւղացու յետեւից եւ, — երբ ծառի փչռատ ճիւղը մարդու փափախը վայր է գցում, — թաթով զարկում գլխին ու մորթը հանում՝ այլանդակելով մարմինը։ Արջը ի վերջոյ սպանւում է։ Պանինը քրքջում է ուրախութիւնից։ Իսկ Աւի՞ն, — «Սովորական մարմնի վրայ դրելի տեղ մարդկային դանկ, ամբողջովին կլպուած, առանց մազի, առանց մորթու։ Նրա դանկի վրայ ողջ են մնացել

միայն ականջները։ Ու չգիտես զայրանում է թէ ժպտում հին որսորդը»։ «Աւելի հիմա էլ ողջ է», – խորհրդաւոր կերպով շեշտում է հեղինակը։

Այս պատմուածքի վրայ համեմատարար կանգ առանք, որովհետեւ ցոյց է տալիս, այն մթնոլորտը, որտեղ կատարւում են Բակունցի պատմուածքների գործողութիւնները։ «Վանդունց Բաղին» պատմուածքում ներկայացւում է «նահապետական վարք ու բարք» ունեցող, «միամիտ ու արդար» Բագու կեանքը, որի որդին՝ Հաբուշը, սակայն, հօր հրահանգութեան փոխարէն ցուցաբերում է ըմբոստ ոգի եւ սպանւում որպէս բոլշեւիկ, բայց ոչինչ դէպի լաւը չի փոխւում Բագու կեանքում, – «իսկ գրսում, առաջուայ պէս Աթանանց մեծ ընկուզենին մեզմօրէն օրօրում է իր ճիւղերը Վանդունց խարխուլ խրճիթի վրայ»։ «Այս սարի լանջին» պատմուածքում հերոսը նոյնպէս միամիտ, ալխատակէր հովիւ է՝ Գեւոն։ Նա կուլիների մէջ անմեղ զոհ է դառնում՝ իր սիրած սարերի լանջին։ «Ծոնարհ ազջիկը» պատմուածքում պատանեկան սիրոյ նկարագրութեան առընթեր՝ պատկերւում են հայ գիւղի բարքերը։

Նախախորհրդային հայ գիւղի կեանքին վերաբերող պատմուածքերից ուշագրաւ տեղ են բռնում տարբեր տարիներում ստեղծուած «Նամակ ռուսաց թագաւորին» (գրուած 1927 թուին), «Սպիտակ ձին» (գրուած 1928 թուին) եւ «Բրուտի տղան» (գրուած 1931 թուին) պատմուածքները։

«Նամակ ռուսաց թագաւորին» պատմուածքում՝ Արթին պապի որդի Ադամով Եղորը ցարական բանակում ընդդիմութիւն ցոյց տալու համար աքսորւում է Սիբիր, որի մասին հայրը ոչ մի լուր չի կարողանում ստանալ։ Մի անգամ պատահմամբ մէկից լսում է, թէ իբր որդին ողջ է եւ գտնւում է մի հեռաւոր քաղաքում։ Եւ տանուտէրի յանձնարարութեամբ գրագիր Միրզա Դաւիթին գրել է տալիս մի խնդրագիր ռուսաց թագաւորին ուղարկելու համար, դրա փոխարէն գրագրին նուէր տալով իր երինջը եւ ունեցած իւղ ու պանիրը։ Նամակն ուղարկում են փոստով եւ ստացականը պահում։ Արթին պապը սպասում է ձրմեռը, գարունը եւ, ի հարկէ, պատասխան չի ստանում, սակայն միամտօրէն միշտ հաւատում է, թէ ցարը իր անմեղ որդուն գտնելու եւ տուն է ուղարկելու։ Փոխւում է գիւղի տանուտէրը, որը Արթին պապի առաքինի արդարամտութիւնը պատժելու եւ իր հին անձնական ոխը հանելու համար՝ բանսարկութեամբ կանչել է տալիս ցարական պրիստաւի մօտ եւ դաժանօրէն ծեծի ենթարկում ծերունուն, ասելով՝ «ես քեզ ցոյց կը տամ, թէ ինչ տեղ է թագաւորին նամակ ուղարկելը»։ Բայց ծերունին միշտ յոյսով է մնում, որ թագաւորը, այնուամենայնիւ, անտես չի առնելու իր արդար խնդրանքը։ Մահուան անկողնու մէջ անգամ պատուիրում է պառաւ կնոջը, – «Նազլու աղջիկ, ես մեռնում եմ։ Հուր յաւիտեան պարտական մնաս, թէ պատասխանն ստանալիս չգաս եւ իմ դերեզմանին խմաց չտաս»։ Մէկ տարի յետոյ կինը եւս մեռնում է ձեռնունայն, իսկ՝ «այդպէս էլ չիմացուեց, թէ ինչ եղաւ Եղոր Ադամովը»։

Ցուեալ զէպքում մենք չենք ուզում երկարացնել եւ պատմել «Սպիտակ ձին» ու «Բրուտի տղան» պատմուածքների բովանդակութիւնը, բայց ուզում ենք անպայման ընդգծել, որ դրանք էլ իրենց հերթին չափազանց յուզիչ ու բովանդակալից երկեր են։

Խորհրդային գրաքննադատները սովորաբար պնդում են, թէ Բակունցի նրկարագրած գիւղական պատկերներից միայն հին վերաբերող պատկերներն են տխուր, ծանր, չարքաշ կեանքի արտացոլումը հանդիսանում։ Դա ճիշդ չէ։ 20-ական թուականների խորհրդահայ գիւղի պատկերը եւս պայծառ չէ։ Բակունցը գոյները չի խտացրել։ Բայց ինքնաբերաբար իրականութիւնը նամանում է հնի վատ պատկերներին։ Այդ ենք տես-

նում «Աքարում», «Նաղլացաւ», «Տիգրանուհին» պատմուածքներում։ Անշուշտ, դրանց կողքին կան առանձին լուսաւոր պատկերներ նոյնիսկ «Մխիթարի «չարքը»», «Ռեւան, Ռեւան» եւ այլ պատմուածքներում։ Բայց դրանք մեծ թիւ չեն կազմում։ Նորի եւ հնի հոգեբանական բախումները ներկայացուած են «Հանավանք», «Գիւլբահարի համար», «Մինա բիբի», «Զորբան», «Իվան բէյը», «Մայրը» պատմուածքներում։

Նախախորհրդային դիւղի բազմակողմանի կոթողային նկարագրութիւնը տեսնում ենք «Կարմրաքար» անաւարտ վէպում։ Դէպքերը վէպում հասցւում են մինչեւ առաջին համաշխարհային պատերազմի առթիւ կատարուած զօրահաւաքը։ Թէ ինչու Բակունցը չշարունակեց այդ վէպը, պարզ չէ։ Դրանից յետոյ տարիներով ուրիշ կարեւոր բան չգրեց, իսկ յետոյ նոր, նոյնիսկ մեծածաւալ երկեր նախաձեռնեց, բայց «Կարմրաքար»-ը մնաց կիսատ։ «Մեծ բեկման տարուց»՝ 1929 թուականից յետոյ Բակունցը չէր կարող վէպում սաղմնաւորուած սոցիալական հարցադրումները իրենց տրամաբանական աւարտմանը հասցնել եւ աւելի պատեհ համարեց լուռութեան տալ երբեմնի ժողովրդական յոյսերը։ Այս է մեր կարծիքը։

1930-ական թուականներից յետոյ գրուած երկերը վերաբերում են եւ նախախորհրդային կեանքին («Եղբայրութեան ընկուզենիները», «Կէօրես», «Բրուտի տղան»), եւ այս կամ այն չափով խորհրդային առօրեային («Մխիթարի փողը», «Սեւ «հացը»», «Գրովինցիայի մայրամուտը», «Սեւ ցեղերի սերմնացանը», «Քեռի Դաւոն» եւայլն)։

«Կէօրես»-ը Բակունցի ծննդավայր Գորիսի նախախորհրդային ժամանակուայ երգիծական ժամանակագրութիւնն է։ Երկը սովորական պիւծէ չունի։ Նրա հաւաքական հերոսը կարծես թէ քաղաքն է իր բազմակողմանի կեանքով, բնակիչներով եւ աճով։ Դա Բակունցի երգիծելու տաղանդի լաւագոյն վկայականն է։ Երգիծական երկի մէջ սկզբից մինչեւ վերջ հանդէս են գալիս բազմաթիւ գործող անձեր, իրար յաջորդելով, ու թէեւ յաճախ անհետանում են կարճատեւ երեւալուց յետոյ, բայց անմոռանալի հետք են թողնում ընթերցողի յիշողութեան ու մտածողութեան մէջ։ Պատմել այդ երկի բովանդակութիւնը՝ նշանակում է մեկնաբանել, երկից մի քանի անգամ աւելի շատ բառեր գործածելով։ «Եղբայրութեան ընկուզենիները» պատմուածքում պատկերւում է 1919-20 թուականների Զանգեզուրի խռովայոյզ վիճակը։ «Բրուտի տղան»՝ գիւղական չքաւոր ընտանիքի զաւակ պատանու կեանքի պատմութիւնն է, որ ճակատագրականօրէն մղւում է դէպի սոցիալական յեղափոխութեան խարուսիկ գիրկը եւ կուռում սպանւում յաղթութեան օրը։ Բակունցը այդ բովանդակալից պատմուածքը աւարտում է այսպէս.—

«Բայց ինչո՞ւ են դողում մատներս այս ծով ուրախութիւնից։ Որ ես ժամանակի խոր ծալքերից իմ թոյլ գրիչով վե՞ր հանեցի իմ մանկութեան ընկեր Անդոյի հերոսական դէմքը։ Ախ, ինչքան նոր Անդոներ կան այս թուխ պատանիների մէջ, որոնք հին քարափի գլխին, իբրեւ անգիր զոյց, թերթում են սկզբի լոյս էջերը։ Ու դեռ միանգամ ուս համայն աշխարհում մեր թնդանօթները հզօրագոյն կը շառաչեն հին խօսքը, — խաղաղութիւն խրճիթներին, պատերազմ պալատներին»։

Խորհրդային անմիջական առօրեային վերաբերող երկերը թուով համեմատաբար քիչ են, բայց բովանդակութեամբ ուշագրաւ։ Նոյնիսկ կարելի է զարմանալ, թէ այն ժամանակուայ պայմաններում ինչպէ՞ս կարելի էր գեղարուեստական լաւ գործ տալ խորհրդային մարդկանց գորշ ու անհրապոյր լարուած կեանքից։ Բայց Բակունցը գրել է։ Նա ընտրութիւն է կատարել եւ իւրայատուկ կերպով բանաստեղծօրէն ոճաւորել։ Օգնութեան է կանչել նաեւ երգիծանքը։

Մենք նկատի ունենք «Գրովինցիայի մայրամուտը», որտեղ երկիծական շեշտով տրուում է Երևանի կեանքը, նրանում կատարուած ներքին եւ արտաքին փոփոխութիւնները: Նկատի ունենք նաեւ 1930 թուականին գրուած «Մեւ հացը», որտեղ այնքան յստակօրէն տրուում են մըտաւորական մակարդակ ունեցող անհատի ներքին հոգեկան ապրումները — շրջապատի փոփոխութեան առնչութեամբ: Բայց ուզում ենք կանգ առնել յատկապէս «Մեւ ցեղերի սերմնացանը» պատմուածքի վրայ, որի բովանդակութեան առնչութիւնն ու հակիրճութիւնը բացատրելի է դառնում քնարական զեղումների եւ բառային գաղափարների արձագանգների շնորհիւ: Բովանդակութիւնն այս է: — Գեղջկուհի Երանի զուակ սերմնացան Սէթը սպանուում է քաղաքացիական կռուում, երբ միացած էր կարմիր ապստամբներին: Տարիներ յետոյ, Հայաստանի խորհրդայնացման ոճնին, գիւղական ակումբի համար քաղաքից երկու երիտասարդ բանուոր այլ նուէրների շարքում բերում են նաեւ մի վարագոյր, որի վրայ՝ «Ամբողջ հասակով նկարուած էր մի վիթխարի սերմնացան, փայտէ կոտը պարանոցից կախ, մինչեւ սրունքները բաց ոտքերով: Լոյսի տակ չողում էին ոսկեդոյն հատիկները, որ աջ ձեռքով նա շաղ էր տալիս արգաւանդ ցեղերի վրայ»: Գիւղացիները վարագոյրի վրայ նկարածը նմանեցնում են իրենց դաշտերին, իսկ սերմնացանին՝ Երանի զոհուած որդի Սէթին:

«Երկու կին, որոնց ազգականն էր պառաւ Երանը եւ նրա նահատակ որդին, ջերմ հաւատով ընդունեցին ամբողջ կարծիքը, որ իրօք վարագոյրի վրայ Երանի Սէթն է: Նրանցից մէկը վեր կացաւ եւ փոքրիկ ձեռքը մօտեցրեց սերմնացանի բոպիկ ոտքերին: Կարծես իր ձեռքի ջերմութիւնն ուզում էր հաղորդել անկենդան պատկերին, իբր ջինջ սիրոյ նշան: Միւսը եւ մի ուրիշ կին մեզմ հառաչեցին ու լաց եղան մեռած սերմնացանի համար:

Այդ գիշեր արցունքը սրբագործեց մի ոսկի առասպել:

Քանի նոյեմբեր անցաւ: Ու դեռ մընում է այն հոգաշէն ակումբը, հզգնեայ կտուրով, եւ ծփում է վարագոյրը, եւ քոց աչքերով մի սերմնացան սեւ հոդերի վրայ առատութեամբ շաղ է տալիս ոսկի հատիկներ: Նրբ ոչ ոք չի լինում ներսը, պառաւ Երանը հանդարտ զուցում է որդու պատկերի հետ: Ցեղոյ մայրը համբուրում է որդու անկենդան ոտքերը»:

Մեզ թւում է, թէ պատմուածքի հանպոյցը դնում է հետեւեալ տողերում, — «Փոդոցի անկիւնում ինձ հանդիպում է իմ ընկեր Աւագը: Ես հարցնում եմ նրան՝ — Մնո՞ւմ է այն վարագոյրը: — Մնում է: —Իսկ մա՞յրը: — Մայրը դեռ հաւատում է: — Լաւ է, որ ոչ ոք չի փչրել այդ առասպելը»: Աւելի պարզ կարելի չէր ասել:

Բակունցի ստեղծագործութեան համար յատկանշական են առանձնապէս «Միրանի փողը» պատմուածքը եւ «Քեռի Դաւոն» ակնարկը: Դրանք դրսեւորում են նրա ինչպէս գրական շնորհները, այնպէս էլ աշխարհայեացքի ժողովրդայնութիւնն ու կեանքի փիլիսոփայութիւնը: Անհրաժեշտ է առանձնապէս շեշտել, որ խորհրդահայ գրականութեան մէջ Բակունցը գրեթէ միակն է որ լրջօրէն գրականութեան նիւթ է դարձրել Խորհրդային Հայաստանում բնակութիւն հաստատած արեւմտահայ աշխատաւոր եւ հայրենաշէն մարդկանց կեանքը: Ճիշդ է, ուրիշները եւս այս կամ այն առիթով դիպուել են հայրենադարձներով (ինչպէս, օրինակ, Մկրտիչ Արմէնի «Քաղաքը բլուրի վրայ» վիպակը), բայց նրանք երբեք հարցը չեն դրել այն ձեւով, ինչպէս Բակունցը, եւ չեն հասել նրա գեղարուեստական բարձրութեան:

Բակունցը դեռեւս շատ առաջ գրել էր մի պատմուածք «Լաւ Մարգար» վերնագրով: Այնտեղ պատմում է, թէ ինչ-

պէս Արեւմտեան Հայաստանում 1915 թուին պատահած դէպքերի հետեւանքով՝ Ծերունի գիւղացի Մարգարը իր կնոջ եւ թոռան՝ Թորոսիկի հետ միասին քշւում է Միջագետքի անապատները եւ դառն ու ծանր կեանքի բեռան տակ, կընոջը այդ աւազուտներում թաղելուց յետոյ, չւում է այլ երկիր իր թոռան ձեռքից բռնած։

– «Երբ վրանները հաւաքեցին, եւ վրանների տակ ծուարած ժողովուրդը ուրիշ երկրների ճամբան բռնեց, Մարգարն էլ շալակեց մնացած կապոցները, Թորոսիկի ձեռքը բռնեց։

Մարգարի շալակին՝ կնոջ աղլուխի մէջ ծիրանի կորիզներ կային։ Գիւղի ծիրանուտում մի ծիրանի կար, պտուղը մեծ ու համեղ։ Պառաւն այդ ծիրանի կորիզներն էր հաւաքել, պահել, որ գալ տարի տնկի տան առաջ։ Ծիրանի կորիզներն էլ պառաւի հետ ճանչան սայլի վրայ շարաթներ էին լուսացրել մինչեւ հեռաւոր աւազուտները։ Երբ վրանները հաւաքեցին եւ հեռացան, Մարգարը երկու միտք ունէր՝ Թորոսիկին պահել եւ ծիրանի կորիզները պահ տալ մի ապահով եզում։ Տարիներ անցան։ Մի տեղ չգտաւ Մարգարը, որ շունչ առնէր։ Հէդեղի բերանն ընկած մրջիւնի պէս վեր ու վար էր անում, մագլցում մի ծղօտի վրայ, բայց հեղեղը ծղօտն էլ էր քշում, մրջիւնին էլ»։

Եւ մի օր էլ Մարգարը վերադառնում է Հայաստան, որի համար «Թորոսիկից ու ծիրանի կորիզներից բացի ուրիշ ոչինչ չունէր ընծայ տանելու»։ Հայաստանի գիւղերից մէկում գիւղացիները Մարգարին գիւղի ջրուոր են կարգում եւ նրա երկար ոտքերը նմանեցնելով ագրագիլի ոտքերին՝ կոչակով անուանում Լաւ-Մարգար։ Լաւ-Մարգարը թէեւ ծանր աշխատանքի գնով, բայց միխթարւում է հայրենի երկրում՝ երկու յոյս փայփայելով – Թորոսիկը եւ ծիրանի ծառերը։ Բակունցը Լաւ-Մարգարին պատկերում է մարդկային աղնիւ դծերով։

«Ծիրանի փողը» պատմուածքում Բակունցը պատմում է, թէ ինչպէս է հանդիպում ինքը հայ գիւղացի Հազրոյին եւ միւսներին Արագածի փէչերի գիւղերից մէկում, Զեանքերդում, որտեղ բնակւում են Արեւմտեան Հայաստանից 1915 թուին եկած սասունցիները։ Գեղարուեստօրէն պատմել է տալիս նրա կեանքը, դրսեւորելով նրա կարօտը նախահայրերի թողած հայրենի վայրերի ու բնական, արդար կեանքի նկատմամբ։ Եւ լուսնեակ երեկոյին Հազրոյի կտուրի վրայ, գիւղական բնակիչներով շրջապատուած, դիտում է լեռնականների խրոխտաշունչ պարը, յուզւում, լսում Հազրոյի ծիրանի փողի մերթ հզօր, մերթ կարօտակէզ նուագը եւ ապա զրուցում նրա հետ։ Այդ զրոյցը գեղարուեստական է եւ ազգային-քաղաքական։ Վերջում Հազրոն՝

«Նորից վերցնում է փողը։ Նուագում է, այս անգամ ոչ թէ լեռնականների կռռվի երգը, որից բորբոքւում է արիւնը, – այլ հովուական պարզ մի երգ։ Կայ եւ թախիծ այդ երգի մէջ, կարծես մէկը մոլորուել է խոր ձորերում եւ տրխուր հեկեկում է, կայ եւ ցինց ուրախութիւն, երբ լեռների վրայ ծագում է արեւը, ելնում է ծուխը, մշակը գնում է աշխատանքի, վերջապէս կան եւ կարօտի հնչիւններ՝ վերադարձի եւ վերջին յոյսի։

– Հազ մի երգամ մըր քարերին, մըր ձորերին, մըր Մարութայ բանձր սարին։ Ես նիմ գիմ ծիրանի փոզ, ժողիմ մարդերու, նստիմ անուշ խոտերու վրեն, հանց գառներ մարդիկ նստեն գիմ չորս բոլոր, երգեմ էնոնց խաղաղութեան գիմ երգեր, մարդիկ հայալ գուլալ ախպրտոց պէս գրկեն գիրար, չեղնի ոչ տէր, ոչ մշակ, ոչ թուր, ոչ բռնութիւն։ Փչեմ գիմ ծիրանի փոզ, էլման ծուխ բարձրանայ երդիկներէն, խըմեմ մըր լուս աղբրներէն, գիմ բրտինք կաթայ մըր քարերու վրեն, մըր Մարութայ բանձր սարի ամպ թոզ լիզայ գիմ սիվտակ ոսկորներ։

– Հազրոյ, իսկ ո՞ւմ կը տաս քո ծիրանի փողը:

– Զիմ փող կիտամ իմ քաջարծիւ թոռնիկին»:

«Քեռի Դաւոն» ակնարկը նուիրուած է չարքային մարդու արժանիքների խանդավառ նկարագրութեանը: Նա եւս տեղացի չէ: Ամէն ինչ կորցնելուց յետոյ հանկարուան է գտնում Հայրենի հողի վրայ, բոխտակից մարդկանց հետ միանում եւ կոլտնտեսութիւն կազմում, ու նուիրուածութեամբ գործի լծւում: Հեղինակը այդ ակնարկի մէջ շատ հեռու է սովորական կազապարուած պետական արտայայտութիւններից: Այստեղ եւս յենւում է մարդկային հոգեբանութեան իրական տուեալների վրայ եւ աւելորդ խօսք չի մսխում: Նոյնիսկ ժլատ է եւ հաւատացնում է, թէ՝ «Երբեւիցէ մի գրիչ կը պատմի քեռի Դաւոյի կեանքը եւ այդ գրիչը շատ կը գտնի հերոսութիւններ նրա կեանքում: Եւ նա կը զարմանայ, թէ ինչպէ՞ս է, որ բոլոր պատուհանների ընթացքում չի անհետացել քեռի Դաւոյի զարմը»: Բակունցը լաւատես է եւ քեռի Դաւոյի յոյսերը եւս կապում է նրա թոռնիկների ապագայի հետ:

Հայրենաշինութեան նիւթը Բակունցին զբաղեցնում էր նաեւ «Ցովնաթան Մարշ» երգիծական վիպակում: Այնտեղ երգիծական եղանակով պատմւում է, թէ ինչպէս Ցովնաթան Մարշը ոմանց յանձնարարութեամբ Բուէնոս-Այրէսից մեկնում է Հայաստան՝ «Նոր Եթովպիա» անունով մի աւան հիմնելու գաղթական հայերի համար: Մարշը Հայաստանում ճամբորդում է, կողմնակիցներ հաւաքում եւ հաւատացած է, թէ պատմական առաքելութիւն է կատարում հայրենիքի համար, չնայած հակազգային իշխանութեան: Հեղինակը մի տեղ գրում է, – «Ցեղափոխութի՞ւն: Սոցիալի՞զմ: Քչիր շոֆֆեր: Ցովնաթան Մարշը այդ համարում է անցողիկ երեւոյթ, նու, որպէս պատմութեան մի գրիպ, մարմնի ժամանակաւոր խանգարում, որից յետոյ մոխրների տակից պիտի յարութիւն առնեն բոլոր մեռած քաղաքները, քանի երկրագնդի անկիւններում Ցովնաթան Մարշի պէս մարդիկ Արմենիա ասելիս աչքերից արցունքներ են գլորում եւ պրկում այդ գաղափարը, որպէս թունդ հարբեցողը վերջին շիշ օղին»: Մարշի առաքելութիւնը ձախողւում է, իսկ երկու տարուց յետոյ՝ «հաւաքուեցէն մչեցիք, սուրմալուցիք, կազդուանցիք եւ խնուսցիք» ու հիմնեցին Նորապատ գիւղը: Վիպակը աւարտւում է այսպէս, – «Աւս բիձա եւ Խալալ խանում: Նորապատի վաթսուն ծխերից մէկը, ծուխ երեք չնչից: Աւս բիձան իր այծերի տակ խոտ է լցնում եւ շոյում հորթուկի մէջքը, որ պիտի մնծանար ու կով դառնար: Խալալ խանումի պրկին կարմրաթուշ մանուկն էր, ծխի երրորդ շունչը: Մի կածան էլ միացել էր լայն ճանապարհին: Ցիշո՞ւմ ես, Ցովնաթան Մարշ: Զարմանում էիր եւ հարցնում, թէ ինչպէ՞ս է, որ չորացած, ագեղ ու կեղտոտ մօր արգանդում սնունդ է առնում եւ ծնւում ոսկեգանգուր մի մանուկ»:

Բակունցը երկրի ապագան կապում է նոր ծնուողների հետ, որոնք ի վիճակի կը լինեն ի կատար ածելու հայրերի ու պապերի վրիպած ձգտումները:

Բակունցի գրիչը համեմատաբար աւելի ազատօրէն շարժուելու հնարաւորութիւն պիտի ստանար «Խաչատուր Աբովեան» անաւարտ պատմական վէպի մէջ, եթէ այն ամբողջացնելու բախտը ունենար: Անցեալ դարի առաջին կէսին Կովկասեան հայութեան մշակութային զարթօնքի մէջ մեծ դեր խաղացած այդ ինքնատիպ անձնաւորութեան կեանքը պատկերող վէպի լոյս տեսած երկու ընդարձակ հատուածները վկայում են, որ առաջնակարգ երկի հետ գործ ունենք: Մէկ հատուածը պատկերում է Աբովեանի կեանքը Դորպատում, որտեղ Համալսարանի ազատ ուսանող էր, իսկ միւսը՝ այն ժամանակը, երբ Աբովեանը Երեւանում գաւառական դպրոցի տեսուչ էր: Այդ վէպի պատրաստման անորոշութեան մասին Սուրէն Աղա-

բաբեանը գրում է.—

«Ստոյգ յայտնի չէ՝ Բակունցը աւարտել-ամբողջացրե՞լ է իր այս վէպը, թէ՝ կիսատ է թողել։ ...Անտարակոյս է, որ 1935 թուականից յետոյ Բակունցը շարունակել է աշխատանքը վէպի վրայ, ապրել է նիւթով եւ հաւանօրէն ինչ-որ չափով ամբողջացրել այն։ Եթէ նկատի ունենանք, որ մինչեւ իր ողբերգական մահը (1938 թիւ) Բակունցը հանդէս չի եկել էլ չէ թէ շատ աչքի ընկնող որեւէ այլ գործով, վէպի տպագրուած հատուածները տարել է Մոսկուա՝ թարգմանութեան համար, ապա պարզ կը դառնայ, որ այդ տարիներին նրա միտքը ամբողջովին զբաղուած է եղել Աբովեանի կեանքի գեղարուեստական պատմութիւնն աւարտելու խնդրով»։

Մենք ամփոփ գծերով պատմեցինք, թէ Բակունց առհասարակ ի՞նչն է զարթել իր երկերի նիւթ, առանց կանգ առնելու այդ երկերի գաղափարական կոնկրետ բովանդակութեան, նպատակների եւ գեղարուեստական կատարման առանձնայատկութիւնների վրայ, որովհետեւ դա տուեալ դէպքում միանգամայն անկարելի եւ աննպատակայարմար է։

Լ. ՄԿՐՏՉԵԱՆ

(Շար. 4)

ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒ ԽՕՍՔԵՐ

Եթէ տգամարդու մը բան մը ըսես՝ մէկ ականջէն կը մտնէ, միւս ականջէն դուրս կ'ելլէ. եթէ կնոջ մը ըսես՝ երկու ականջներէն կը մտնէ եւ բերանէն դուրս կ'ելլէ։

ԺԱՆ ԱՆՈՒՅ

Նեսուերը մարդ մըն է, որ ինքն իր մասին կը խօսի՝ երբ դուռ կը փակաւիր խոսիլ իրեն՝ Ձեր մասին։

ՄԱՐՍԵԼ ԷՅՄԷ

Ահա խորհուրդը՝ որ արդի գրականութեան պապը, Ռեմոն Քրնոյ կու տայ սկրսնակ բանաստեղծներուն.

«Ձեր տողերուն մէջ երակ դրէք... այլապէս՝ կրակը նետեցէք զանոնք»։

⁂

Մի ըներ ուրիշներուն այն ինչ որ կ'ուզես որ անոնք քեզի ընեն. անոնց ճաշակը նրանց նոյնը չէլլալ։

⁂

Մարդ մը, երբ ուզէ վագր մը սպաննել, ափսո կ'անուանէ իր գրածը. երբ վագրը ուզէ սպաննել զինքն՝ վայրենութիւն կը կոչէ։ Ոճիրին եւ արդարութեան տուած մահապատժին մէջ տարբերութիւնը աւելի մեծ չէ։

⁂

Որքան ատեն որ բանտեր ունինք, տարբերութիւն չ'ըներ թէ մեզմէ ո՞ր մէկն է որ անոնց խցիկներուն մէջ կը գտնուի։

Ճ. Պ. ՇՕ

Գ. ՇԱՀԻՆԵԱՆ

ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶԻ ՀԵՏ

Մարդ բնական ոճի երբ հանդիպի՝ ամակընկալի կու գայ եւ կը գտայնի, որովհետու հեղինակ մը կը ստասէր տեսնել եւ մարդու մը գիտը կ'ընէ:

ՓԱՍԿԱԼ

Ա.

Իր ստեղծագործութեան մասին խօսելով՝ Արամ Հայկազ կ'ըսէ. Իմ գրականութիւնս կնանիս վէպն է. վէպ մը, որուն մէջ կը խառնուին մանի մը դրացիներ, ընտանիքիս անդամները, սէրերս – յիմար ու խելօք – ու ինչ մըն ալ գաւառացի տղու ապրում...

Բնորոշումը ճիշդ է եւ ամբողջական. ո՛չ միայն կու տայ ստեղծագործութեան ընդհանուր բնոյթը, այլեւ անոր չրջագիծն ու բովանդակութիւնը: Ըսելակերպի պարզութիւնն ու սրամտութիւնն ալ զարմանալի մը կու տան իր ոճի մասին:

Կեանքի այս վէպը տրուած է աւելի քան երեսուն տարիներու երկայնքին փռուող զանազան գրուածքներով, որոնք յետոյ ամփոփուած են երեք անջատ հատորներու մէջ (*): *Առանձին կազմուած են ծաղկաքաղ ժողովածուի ձեւով. երեքին մէջն ալ կան չորս աշխարհներ բնորոշող գրութիւններ (Գաւառ, Պոլիս, Քիւրտիստան, Ամերիկա), բայց չաղկապում եւ ժամանակագրական դասաւորում չկայ: Վէպը կառուցելու համար ընթերցողը ստիպուած է շարայարումի մտային աշխատանք մը կատարել, խմբել դրութիւնները, յաջորդականութիւն եւ ժամանակագրական զարգացում ստեղծել:*

(*) «Ցեղին Ձայնը», 1950 – «Ցեղին Ձայնը» Բ., 1954 – «Չորս Աշխարհ», 1962:

Գազուքային մեր պայմաններուն տխուր հետեւանքն է այս երեւոյթը։ Առաջին հատորի տպագրութեան ժամանակ հեղինակը ապահովութիւնը չէ ունեցած ուրիշի հրատարակութիւնը տեսնելու եւ զանազան շրջաններ ու սեւեր բնորոշող իր գրութիւններէն ընտրած է մէկ քանին։ Ցեռոյ ալ նոյն ձեւով չարունակած է։ Ինքն ալ կ'անդրադառնայ գործած սխալին, մասնաւորաբար ՓԻԻՐՏԻՍՏԱՆԻ ԼԵՌՆԵՐՈՒՆ ՄԷՋ կապակցութեամբ. Սխալ ըսի, կ'ըսէ, զանոնք այդպէս հոս ու հոն ցրուելով։ Այդ սխալը, ոեւէ անձէ աւելի ու առաջ, ես է որ կը զգամ։ Ցեռոյ յոյս կը յայտնէ որ Հայաստանի մէջ օր մը կ'իրագործեն ինչ որ ինք չէ կրցած ընել, այսինքն առանձին հատորով կը տպեն Փիւրտիստանի վերաբերեալ բոլոր գրուածքները։

Մաղթելի եւ յուսալի է որ այդպէս ըլլայ. ո՛չ միայն մէկ հատորի, այլ երեք հատորներուն համար ալ։ Լաւ կ'ըլլայ անոնք նոր դասաւորումով մը ներկայացնեն Արամ Հայկազի պատմուածքները, ՓԻԻՐՏԻՍՏԱՆԻ ԼԵՌՆԵՐՈՒՆ ՄԷՋը եւ ընտանիքին ու դրացիներուն վերաբերող մնացած գրութիւնները՝ առանձին։ Ամբողջական երկերու դեղեցիկ ծրագիր մըն է առիկա, որ հեղինակի հսկողութեամբ պէտք է կատարուի՝ զանազան կտորներու չաղկապումն ու չարայարումը եւ ընդհանուր վերանայում մը ապահովելու համար։

Արամ Հայկազի պատմուածքները հիմնականօրէն տարբեր են իր միւս գրութիւններէն. «Կեանքի Վէպ»ի բաժինը քիչ է անոնց մէջ։ Հեղինակը գրական մշակուած ձեւ մը կը փորձէ, իրմէ դուրս, իր կեանքէն անկախ՝ տիպարներ ու միջավայր մը կուտայ։ Ոճն ու գրելակերպն ալ տարբեր են. մօտեցումը առարկայական է, արուեստի անկախ գործի մոտեցումով, ո՛չ անձնական վկայութեան, խոստովանութեան շեշտով։ Այս պատճառով ալ անոնց կը պակսի չես գիտեր ինչ ուրոյն յատկանիշ, որ Արամ Հայկազի գրականութեան հիմնական կնիքը կը կազմէ։ Դասական պատմուածքի, հայկական դասական պատմուածքի բոլոր պայմանները կը լրացնեն. յաջող գործեր են, լաւ կառուցուած ու խորացուած, հոգեբանութեան ճիշդ վերլուծումով, բայց կարծես պակաս բան մը ունին, կարծես իրը չեն։ «Գրական» են, մինչ իր իւրայատկութիւնը «ոչ-գրական» ըլլալուն մէջ կը կայանայ։

«Մանուկ Ռէիզը», «Տիօնիկը», ուրիշ պատմուածքներ այս մտածումը կ'աբթնցնեն ընթերցողի միտքին մէջ։ Երբեմն անոնք հեղինակի որոշ յատկանիշներն ալ ունին՝ լեզուի եւ ոճի թարմութիւն, սպասմութիւն, յուզական մթնոլորտ, բայց չեն դադրիր տարբեր ըլլալէ։

ՓԻԻՐՏԻՍՏԱՆԻ ԼԵՌՆԵՐՈՒՆ ՄԷՋը վէպ չէ սովորական իմաստով, բայց իսկական վէպէ մը աւելի հետաքրքրական է, կապող։ Հեղինակը, անկապ բաժիններ կազմող յաջորդական կարճ պատմութիւններով, տրուած է եղեռնի եւ աքսորի տարիներու իր փորձառութիւնն ու ապրումները։ Ուշագրաւ միութիւն մը կայ տարբեր տարիներու գրուած ու տպուած այս հատուածներուն մէջեւ. տիպարները կը պահեն կերպարային միեւնոյն յատկանիշները, պատմելակերպն ու ոճը կը մնան նոյնը. նո՛յնը նաեւ՝ մթնոլորտը։

Հայ պատանիի մը ցաւագին պատմութիւնը ըլլալով մէկտեղ՝ ազգային ողբերգութիւն է այս գիրքը, բայց մանաւանդ մարդկային խոր ապրումներու հանդէս։ Բնութեան սրտառուչ երգ է, կենդանական աշխարհի յուզիչ մտերմութիւն, պատանեկան զգայնութիւններու, յուզումներու եւ սէրերու մասին թրթռուն ու հարազատ վկայութիւն։ Արամ Հայկազի կեանքի վէպին ամէնէն խռովիչ մասերէն մէկն է։

«Վէպ»ի չարունակութիւնը տրուած է ամերիկեան կեանքէ առնուած գրութիւններով, որոնց նիւթը կը կազմեն հեղինակի առօրեան, ընտանիքի անդամները, դրացիները։ Շեչոը տարբեր է, որոշ չափով։ Տիրապետողը սրամտութիւնն է, կեանքի եւ մարդոց պարզ ու խոր սէրը։ Մթնոլորտը լաւատեսութեամբ չի՛ յատկանշուիր, թերեւս, բայց բարութեամբ՝ ա՛նպայման։ Արամ Հայկազ կը դրէ պարզօրէն, առանց յաւակնութեան, պատմած ըլլալու համար, կարծես. բայց ամէնէն աննշան դէպքն իսկ կարեւորութիւն կը ստանայ ընթերցողին համար, որովհետեւ մարդկային հոգեբանութեան մէկ մանրամասնութիւնը կը վերլուծէ, կամ նոր վկայութիւն մը կը բերէ հեղինակի հոգիէն։

⁂

Երկերու ընդհանուր այս չրջագծումէն արդէն կը յայտնուի թէ մասնաւորաբար ենթակայական կերտում ու բովանդակութիւն ունեցող գրութիւններ կը յատկանշեն հեղինակը։ Անոնք են իր հիմնական տուրքը մեր գրականութեան, անոնցմո՛վ մանաւանդ պիտի յիշուի։

Այս գրութիւնները տարբեր են. բայց դժուար է մէկ բառով ըսել ի՛նչ են։ Գնաբական տարբեր ունին, յուշագրական մանրամասնութիւններ կը ներկայացնեն, երգիծական որոշ արժանիքներ կը ցուցաբերեն. բայց բանաստեղծութիւն չեն, յուշ չեն, երդիծանք չեն։ Բնորոշումի մը, նոր անունի մը պէտք ունին։

Զանազան սեռերու համեմատութիւնը կը ցուցնէ թէ գնաբական գրականութիւնը կը զատորոշուի միւսներէն՝ ո՛չ այնքան արտայայտչական ձեւի (չափ, յանգ, տող) որքան բովանդակութեա՛ն եւ այդ բովանդակութիւնը տալու չեչտի՛ տեսակէտէն։ Անձնականն է գնաբերգութեան նիւթը, մինչ անանձնականը, արտաքինը, առարկայականը նիւթն ու կերպը կը բնորոշեն այլ սեռերու, յատկապէս վէպին ու պատմուածքին։

Այս իմաստով՝ գնաբական է Արամ Հայկազի գրականութիւնը։ Իրմէ դուրս դէմքեր ու դէպքեր ներկայացնելո՛ւ իսկ առեն՝ չի՛ դադրիր ինքզինք տալէ, իր ապրումներն ու տպաւորութիւնները գրականութեան վերածելէ։ Ինչն է ըսողը. ամէն մէկ գրածիս մէջ անձէս կամ ապրումներէս բան մը կայ։

Անշուշտ, յուշն ալ գրողի անձը եւ ապրումները կը ներկայացնէ, զանոնք առանցք դարձնելով արտաքին դէպքերու յաջորդականութեան։ Բայց սոսկական յուշ չէ Արամ Հայկազի գրականութիւնը. յուշագրութեան գլխաւոր մտահոգութիւնը վաւերականութիւնն է, պէ՛տք է ըլլայ։ Արամ Հայկազ այդ տեսակի մտահոգութիւն չունի. ճշմարտութեան համար չէ որ կը գրէ, այլ՝ վայելքի։ Արուեստագէտի՛ մօտեցում է իրը։

Արուեստի ուրիշ մէկ արտայայտութիւնը գրականութեան, մասնաւորապէս վէպի եւ պատմուածքի մէջ, ինքնաբաւ ու ինքնօրէն տեսլաշխարհի մը ստեղծումն է։ Գրականութեան մեծ վարպետները, մեր մէջ թէ

ուրիշ ազդերու, գրական ուրոյն տիեզերքի ստեղծիչներ են, բանի թափով եւ ստեղծագործ երեւակայութեան ուժով կերպարներ ու դէպքեր կեանքի կոչող արարիչներ։ Իւրաքանչիւրը ունի սեփական տեսլական մթնոլորտ մը, որուն մէջ շնչող կերպարները ենթակայ են ո՛չ թէ մեր արտաքին աշխարհի կեանքի օրէնքներուն, այլ ներքին օրինաչափութեան մը, երեւակայածին, տեսլական աշխարհի մը տրամաբանութեան։ Իրականութեան տարրերով ստեղծուած են, բայց բանով մը տարբեր են իրական մարդերէն։ Ի՞ապրին իրենց սեփական կեանքով՝ վէպերուն եւ մեր երեւակայութեան մէջ։ Տարբեր է այս կեանքի կլոռոյթն ու ժամանակը, տարբեր՝ մթնոլորտը։ Տոթոյեվսքիի մը, Գալզաքի մը կամ (բոլոր համեմատութիւնները պահած) Երուխանի մը գրական տիեզերքը ո՛րքան ալ ռուսական, ֆրանսական եւ հայկական որոշ ընկերութեան մը պատկերը տայ՝ չի չփոթուիր այն տարբերական աշխարհին հետ, որուն տարրերով կառուցուած է։ Հեղինակի երեւակայութիւնը գէմքերն ու դէպքերը շրջապատած է ուրոյն մթնոլորտով մը, որ անոնց կու տայ մասնաւոր խորութիւն ու թանձրութիւն, տեսակ մը անիրական իրականութիւն։ Քարամազոֆ մը, Կրանտէ մը կամ որեւէ Ամիրայի աղջիկ չենք չփոթեր մեզի հետ ապրող եւ անոնց այս կամ այն յատկանիշը ունեցող անձի հետ։ Տարբեր են. անջատուած են արտաքին կեանքէն, ուրոյնացած, գրական հերոս դարձած։ Գալզաքի պարադայքին, Նոյնիսկ, տեսիլքը ա՛ինքան տիրական է, որ տեսլական աշխարհը կրնայ մրցումի ելլել իրական աշխարհին հետ՝ իր ուժականութեամբ, կենսունակութեամբ։ Ի՞նչ յորդի նախնական ուժով, կը դրդուայ տեսակ մը ստորերկրեայ շարժումով։ Կեանքով։

Հայկազի մարդիկը կապուած կը մնան արտաքին աշխարհին, չեն ուրոյնանար, գրական հերոս չեն դառնար։ Ժամի մը, օրուան մը համար զանոնք փոխ կ՝առնէ կեանքէն, դա՛րձեալ կեանքին վերադարձնելու համար, մինչ Գալզաք արտաքին աշխարհն է որ իր հերոսներով կը բնակեցնէ, իրական կեանքի մէջ իսկ անոնցմով շրջապատուած կը զգայ ինքզինք, երեւակայածին հերոսներն ու ընկերութեան անդամները կը շփոթէ իրարու հետ։

Մտածե՞լ որ Արամ Հայկազ վաւերական գրող չէ որովհետեւ իր երեւակայութիւնը ստեղծագործ այս թափն ու կենդանացնող զօրութիւնը չունի։ Ոչ անշուշտ։ Տարբեր է, պարզապէս։ Իր ստեղծագործութեան բնո՛յթն է տարբեր, ստեղծելու կերպն ու ոճը։ Ուրիշ աշխարհներու կը պատկանին ինքն ու միւսները, ուրիշ պայմաններու ծնունդ են իր եւ միւսներու ստեղծագործութիւնները։

Այս տարբերութեան դիտակցութեա՞մբ է արդեօք որ Արամ Հայկազ միշտ ալ շեշտած է թէ ինք սիրող մըն է եւ ոչ, այսպէս ըսած, արհեստով գրող մը։ Գուցէ։ Բայց ամէն մարդ, ամէն երկ պէտք է գնահատել այնպէս ինչպէս կը ներկայանայ մեզի՝ իր ներքին տրամաբանութեան, մասնակի օրէնքներուն համաձայն։ Ու Հայկազի գործը ընկալելու պարագային՝ պէտք չէ գործածենք ուրիշ ո՛րեւէ հեղինակ վերլուծելու օգնող կերպերը։ Պէտք է առնենք զայն այնպէս ինչպէս որ է՝ այսինքն քնարական, յուշագրային եւ երգիծական տարրերու ինքնարուխ համադրութիւնով ստեղծուած որպէս ապրումի գրականութիւն։

Այս կը նշանակէ երկին հետ եւ երկէն աւելի խօսիլ երկնողի մասին, եւ մտածումի չափանիշներ գործածելէ աւելի կոչ ընել զգացական եւ զգայական մօտեցումի։ Հայկազի գրականութիւնը համապրումով եւ հա-

մակրանքով կը վերլուծուի, այսինքն ապրումը բաժնելով, հեղինակին հետ կրելով զայն։ Ենթակայական գրականութեան մը առաջ ենք։ Նոյն ենթակայական վերաբերումով պէտք է ընդունինք զայն, մեզմէ դուրս առարկայ մը չնկատենք, այլ՝ մեր զգացական եւ զգայական աշխարհին հետ անմիջականօրէն կապուող ձեռնարկ մը։

Այս բոլորէն վերջ՝ հաճելի կատակի մը տպաւորութիւնը կը գործէ Հայկազի այն յայտարարութիւնը թէ իր հատորին մէջ հրեւցած բոլոր անունները հրեւակայական են եւ ապրող հոմանուն անձերու հետ ոչէ կապ չունին։ Իսկզին մէջ՝ անունը միակ մանրամասնութիւնն է, որ կրնայ ապրող անձերու հետ կապ չունենալ... Ճիշդ է, տրուած աշխարհը ինքն իր մէջ ամբողջ է եւ մեկուսացած, բայց երեւակայածին չէ. իրական է եւ արտաքին կեանքի կշռոյթով կը բաբախէ։

Տոսթոյեւսքի, Պալզաք, Երուխան եւ իրենց նմանները կեանքի տարրերով ու տուեալներով ուրիշ ամբողջութիւն մը կը ստեղծեն։ Հայկազ պարզապէս կ'առանձնացնէ որոշ տարրեր ու տուեալներ, կը սահմանագծէ ժամանակին մէջ եւ միջոցին, կու տայ իրենց սովորական յարաբերութիւններով։ Կը ստացուի համատարած կեանքի եւ ընդարձակ աշխարհի մէկ շերտը, հեղինակի՝ ապրած շերտը։

Բ.

Արամ Հայկազի գրականութեան գլխաւոր տարբերութիւնը իր տարբեր ըլլալն է։ Հետաքրքրական է փնտռել այս ինքնուրոյնութեան ծընունդ տուող ազդակները, այդ ծնունդը պայմանաւորող ազդեցութիւնները։

Ինքը՝ հեղինակը կը յիշէ Տիգրան Զէօկիւրեանի Վանի ազդեցութիւնը եւ անդրադառնալով այս հաստատումի անակնկալ հանգամանքին՝ կը խօսի անոր առթիւ զարմանքի մասին։ Անսպասելի ի՛նչ հանդիպումներ գաղտնիքով, ոլորապտոյտ ի՛նչ ճամբաներով Զէօկիւրեան ապրած է Հայկազի վրայ՝ հարց է եւ առանձին ուսումնասիրութեան արժանի խնդիր։ Թերեւս նոյնիսկ հաստատումը կը վերաբերի Վանի հեղինակի՛ն վրայ թողած տպաւորութեան եւ ոչ՝ իր գրականութեան վրայ գործած ազդեցութեան։

Ուրիշ ազդեցութիւն մը, նուազ բացայայտ, ոչ բոլորովին գիտակից՝ թերեւս, աւելի տրամաբանական կը թուի։ Ժամանակակից արեւմտեան պատմուածքի, մասնաւորաբար ամերիկեան շորթ–աբորի–ի մասին է խօսքը։ Հանդիպումները ակնյայտ է մասնաւորաբար ոճի եւ դրելակերպի կալուածին մէջ. նոյն զուարթախոհութիւնը, սեփական փորձառութիւնը ուղղակիօրէն գրաւոր խօսքի վերածելու նոյն ձգտումը, զանարուեստութեան մեւնոյն տպաւորութիւնը։

Նման գրականութեան մը թեմնիքը թեմնիք չունենալ թուելն է, յաճախ։ Նոյնն է պարագան Արամ Հայկազի ստեղծագործութեան։ Մարդ կրնայ մտածել թէ առանց մասնաւոր աշխատանքի, այդպէս՝ ներշնչումի պահու մը գրուած են իր գործերը, քմայքով, կամայականութեան խաղով։ Այդպէս չէ, սակայն, իրողութիւնը։ Գրեթէ բոլոր գրուածքներուն մէջ ալ զգալի է աշխատանքի որոշ նախագիծ, պատրաստութեան քայլորոշ ծրագիր։

Գրուածքին նիւթը կրնայ պատահականօրէն պարտադրուիլ, կեանքի մէկ դիպուածին արդիւնքը ըլլալ, բայց պատահական ձեւով չի հրամցուիր հասարակութեան: Արամ Հայկազ կը ձգէ որ հասունցայ ան իր մէջ, ծանօթութիւններով, անմիջական տպաւորութեան տակ առնուած նօթերով կը հարստացնէ զայն, յետոյ միայն մշակուած ձեւի կը հասցնէ:

Ցոմախիակի ակնարկութիւններ կան այս աշխատաձեւին՝ ՑԵՂԻՆ ՉԱՑՆԷ, ԹԷ՛ ՉՈՐՈՅ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ: Մանաւանդ որ ալ ոկսեր էի ներքնապէս հետաքրքրուիլ այդ մարդով ու նօթեր առնել այս պատմուածքին համար կը գրէ Արամ Հայկազ: Անշուշտ խօսքը կրնայ մի՛այն մէկ գրութեան վերաբերիլ, նոյնիսկ ըսելու ձեւ մը նկատուիլ: Բայց ուրիշ ակնարկութիւններ կը հաստատեն զայն, կը լրացնեն: Այսպէս՝ իր թուղթերու մասին եղած հետեւեալ հաստատումը. հոն կան բոպէական տպաւորութեան տակ առնուած նօթեր, դիտողութիւններ հում ու հասուն:

Երբ այս տպաւորութիւններն ու դիտողութիւնները պէտք եղած կերպով խորացուած են ժամանակի կամ աշխատանքի բերումով՝ գրութիւնը կը ներկայանայ արուեստի գեղեցիկ գործի մը փայլով, պահելով մէկտեղ ներշնչումի հարազատութիւնն ու թարմութիւնը: Կը պատահի նաեւ որ խորանալու հնարաւորութիւն չտեղծուի կամ պարզապէս տրամադրութիւնն ու ճիգը պակսին. այն ատեն՝ նուազ կատարեալ, բայց միշտ հետաքրքրական ու միշտ թարմ գործ մը կ'ունենանք մեր առաջ:

❧

Ինչ ալ ըլլայ գեղարուեստական արժէքը գրուածքին՝ Արամ Հայկազ ի յայտ կը բերէ պատմելու միեւնոյն բացառիկ շնորհը: Ամէնէն հասարակ մանրամասնութիւնն իսկ առած ժամանակ՝ հետաքրքրութիւն կը ստեղծէ ընթերցողին մէջ, երբեմն գիտնալու, հետեւանքին ծանօթանալու ցանկութիւն: Երբեմն տեսակ մը սրսփէնսի կը վերածուի այս հետաքրքրութիւնը:

Այսպէս է պարագան, օրինակ, «Մանուչին մէջ թ՞նչ կարդի կամ վերջերս տպուած եւ հասորի մէջ չմտած ուրիշ գրութեան մը, ուր Հայկազ կը պատմէ Մանկի Նեփալի պատուիրակութեան կազմակերպած մէկ ընդունելութեան մասին: Առաջին գրութեան մէջ կը պատմէ թէ ինչպէս իր գործատեղին մօտ գտնուող եկեղեցիի մը առաջ պոչ կը բռնեն մարդիկ՝ դիրութեան քոյրերու բաժնած սանտուիչները ստանալու համար: Մասնաւոր համակրանքով կը նկարագրէ անոնց կեցուածքն ու շարժումները, կը փորձէ դուշակել անոնց հոգեբանութիւնը: Ու իր աշխատանքի ընկերներուն հետ ինք ալ կը մտածէ թէ սանտուիչներուն մէջ շատ հաճով բան մը դրուած ըլլալու է: Կ'որոշեն, ի վերջոյ, իրենցմէ մէկ երկու հոգի դրկել պոչ բռնելու: Ընթերցողը անհամբեր կը սպասէ արդիւնքին, պարզ բայց հետաքրքրական մանրամասնութեան տեղեկանալու համար: Սակայն դաղանիքը յստակօրէն չի՛ պարզուիր, կը դուշակուի՛ միայն. Հայկազ կ'ըսէ թէ այնուհետեւ երբ դիրութեան քոյրերը իրենց դրատեղեակը կու գային՝ սէ՛ոք կը փորձէր առաջուան պէս խուսափիլ կամ չնչին դումար մը տալ:

Երկրորդ գրութեան ընթերցումը միեւնոյն հոգեբանութեամբ տեղի կ'ունենայ: Հեղինակը (դիտումնաւո՞ր կերպով) ընթերցողին ուշադրութիւնը կը հրաւիրէ այն մանրամասնութեան վրայ թէ անպատեպի է իրեն ուղղուած հրաւէրը, հաւանօրէն, նոյնիսկ, սխալի մը արդիւնք: Ընթերցո-

ղին համար՝ գրութեան առանցքը, լուծելի դաղտնի՛քը կը դառնայ այս դէտը։ Հեղինակին խօսքերուն ու քայլերուն ուշադիր՝ կը մտնէ հետը Մանկի չէնքէն ներս, կը բարձրանայ պէտք եղած յարկը, անհամբեր կը սպասէ որ ի վերջոյ լուծուի՛ դաղտնիքը։ Բայց բանէն դուրս կու դայ որ դաղտնիք չկայ. եղածը պարզ հրաւէր մըն է եւ այդ հրաւէրի արդիւնքը պատմող պարզ գրուածք մը։

Հետաքրքրութիւն ստեղծելու նման փորձեր (եւ յաջողութիւններ) շատ կան մանաւանդ Քիւրտիստանի պատմութիւններուն մէջ։ Գրութեան ձեւն ալ ժեռնոու է, այս պարագային։ Կարճ հատուածի մը մէջ հեղինակը կը սկսի պատմելու, օրինակ, իր երիտասարդ տիրուհիին ու իր փոխադարձ զգացումներու մասին, այդպէս՝ կարծես պատմութեան ընթացքին, առանց երկար մանրամասնութիւններ տալու. յետոյ ուրիշ հատուածի մը մէջ արդէն օրիորին խօսակցութիւն կը դնէ կամ պատանեկան կէս-անմեղ սիրուրտուք։ Բայց երկու հատուածներուն միջեւ ընթերցողի հետաքրքրութիւնը հասած է արդէն բարձրագոյն կէտի մը։ Այս տեսակէտէ խելացի դիւտի մը ապաւորութիւնը կը գործէ «Եկուր երթանք Ս. Նշան...» հատուածի վերջաւորութիւնը, ուր Էլիֆի հետ իր տեսակցութիւնն ու խօսակցութիւնը պատմելէ վերջ՝ կը դրէ. Մուքին մէջ իրարու ձայնցանք եւ, առանց բառ մը եւս խօսելու, իրանք ոտքի։ Ան իր տունը գնաց, ես ալ՝ մեր։ Այս ձեւով ալ հատուածը կը վերջանայ։ Բայց արդէն հետաքրքրութիւնը վառ պահող ուրիշ մանրամասնութիւններու շարքին աւելցած է սրսփէնոի տարր մը։

Անշուշտ խօսքը մտահոգութիւն ստեղծող, հոգեմաշ հատնումի եւ ջղային բացառիկ պրկումի պահեր առթող այն միւս սրսփէնոի մասին չէ, որ արդէն դրական կամ չարժանկարային սեռի վերածուած է, եւ որ պատմութեան մը կամ գործողութեան մը գերագոյն լարումի պահը նշելէ ետք՝ անխուսափելի բացատրութեան մը, վախճանական հանդրուանի մը կը յանդի, գաղտնիք մը կը պարզէ։

Արամ Հայկազի մօտ հետաքրքրութեան լարումը պատմողի բնական շնորհ է եւ յաճախ իրմէ դուրս նպատակ չի հետապնդեր, բան մը հասկցնելու, տեղ մը հասնելու չի ծառայեր։ Հայկազ կը պատմէ պատմելու համոյքին համար, բառերու եւ խօսքի ստեղծած ինքնանպատակ վայելքի բնազդական փնտռտուքով։

Հետաքրքրական է, այս տեսակէտէ, «Օրուքիր Սարատոկայում»։ Որոշ նիւթ չունի, տեսակ մը «պարապ վախտի խաղալիք» է, որ արձակուրդի մը ընթացքին միեւնոյն հիւրանոցը բնակող բարեկամներու ոճային մէկ ժամանցը կը ներկայացնէ։ Գրաւ մըն է. կարելի՞ է դրել «ճիշդ այնպէս, ինչպէս որ պիտի գրէր Զարեհանը, եթէ ինքը հոս՝ այս հիւրանոցին մէջ ըլլար»։ Հարցը այն չէ թէ ի՞նչ չափով օրագիրը Զարեհանը կը յիշեցնէ կամ թէ ի՞նչ արժէք կը ներկայացնէ։ Հայկազի ձգտումն է հետաքրքրականը՝ պատմելու հաճոյքին ոճի խաղի այս հրանգն ալ կցելու։ Խօսքը, կարծես, իր իմաստի պարունակէն անկախ ոգեկան մասնաւոր արժէք մը կը ներկայացնէ՝ հնչիւնի հրաշքով եւ բանի խորհուրդով ծանրաբեռն։

Պէ՞տք է գրելու այս կերպին մէջ փնտռել գրական ըմբռնում մը կամ կարծիք մը՝ կեանքն ու գրականութիւնը զօդող յարաբերութիւններու մասին։ Ամէն պարագայի՝ նման ըմբռնում մը եթէ բառերով ձեւակերպուի՝ հետեւեալ բանաձեւումին կրնայ յանգիլ. գրականութիւնը ա՛նպայման պատգամ մը փոխանցելու չի ծառայեր եւ պէտք չէ ներկայացուի,

Գրուածքին նիւթը կրնայ պատահականօրէն պարտադրուիլ, կեանքի մէկ դիպուածին արդիւնքը ըլլալ, բայց պատահական ձեւով չի հրամցուիր հասարակութեան: Արամ Հայկազ կը ձգէ որ հասունցայ ան իր մէջը, ծանօթութիւններով, անմիջական տպաւորութեան տակ առնուած նօթերով կը հարստացնէ զայն, յետոյ միայն մշակուած ձեւի կը հասցնէ:

Ցաւախակի ակնարկութիւններ կան այս աշխատասիրին՝ ՑԵՂԻՆ ՉԱՑՆԻ, ԲԷ՝ ԶՈՐՍ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ: Մաքուանդ որ ալ սկսեր էի նիրհնապէս հետաքրքրուիլ այդ մարդով ու նօթեր առնել այս պատմուածքին համար կը գրէ Արամ Հայկազ: Անշուշտ խօսքը կրնայ մի՛այն մէկ գրութեան վերաբերիլ, նոյնիսկ բանալու ձեւ մը նկատուիլ: Բայց ուրիշ ակնարկութիւններ կը հաստատեն զայն, կը լրացնեն: Այսպէս՝ իր թուղթերու մասին եղած հետեւեալ հաստատումը. հոն կան բոպէական տպաւորութեան տակ առնուած նօթեր, դիտողութիւններ հում ու հասուն:

Երբ այս տպաւորութիւններն ու դիտողութիւնները պէտք եղած կերպով խորացուած են ժամանակի կամ աշխատանքի բերումով՝ գրութիւնը կը ներկայանայ արուեստի գեղեցիկ գործի մը փայլով, պահելով մէկտեղ ներշնչումի հարազատութիւն ու թարմութիւնը: Կը պատահի նաեւ որ խորանալու հնարաւորութիւն չստեղծուի կամ պարզապէս տրամադրութիւն ու ճիգը պակսին. այն ատեն՝ նուազ կատարեալ, բայց միշտ հետաքրքրական ու միշտ թարմ գործ մը կ'ունենանք մեր առաջ:

❀

Ինչ ալ ըլլայ դեղարուեստական արժէքը գրուածքին՝ Արամ Հայկազ ի յայտ կը բերէ պատմելու միւնոյն բացառիկ շնորհը: Ամէնէն հասարակ մանրամասնութիւնն իսկ տուած ժամանակ՝ հետաքրքրութիւն կը ստեղծէ ընթերցողին մէջ, ելքը դիտնալու, հետեւանքին ծանօթանալու ցանկութիւն: Երբեմն տեսակ մը սրսփէնսի կը վերածուի այս հետաքրքրութիւնը:

Այսպէս է պարագան, օրինակ, «Սանտուիչին մէջ ի՞նչ կարծի կամ վերջերս տպուած եւ հատորի մէջ չմտած ուրիշ գրութեան մը, ուր Հայկազ կը պատմէ Մանկի Նեփալի պատուիրակութեան կազմակերպած մէկ ընդունելութեան մասին: Առաջին գրութեան մէջ կը պատմէ թէ ինչպէս իր գործատեղիին մօտ գտնուող եկեղեցիի մը առաջ պոչ կը բռնեն մարդիկ՝ գթութեան քոյրերու բաժնած սանտուիչները ստանալու համար: Մասնաւոր համակրանքով կը նկարագրէ անոնց կեցուածքն ու շարժումները, կը փորձէ դուշակել անոնց հոգեբանութիւնը: Ու իր աշխատանքի ընկերներուն հետ ի՛նք ալ կը մտածէ թէ սանտուիչներուն մէջ լաւ համով բան մը դրուած ըլլալու է: Կ'որոշեն, ի վերջոյ, իրենցմէ մէկ երկու հոգի զրկել պոչ բռնելու: Ընթերցողը անհամբեր կը սպասէ արդիւնքին, պարզ բայց հետաքրքրական մանրամասնութեան տեղեկանալու համար: Սակայն գաղտնիքը յստակօրէն չի՛ պարզուիր, կը դուշակուի՛ միայն. Հայկազ կ'ըսէ թէ այնուհետեւ երբ գթութեան քոյրերը իրենց գրասենեակը կու գային՝ ոչ ոք կը փորձէր առաջուան պէս խուսափիլ կամ չնչին գումար մը տալ:

Երկրորդ գրութեան ընթերցումը միւնոյն հոգեբանութեամբ սեղի կ'ունենայ: Հեղինակը (դիտումնաւո՞ր կերպով) ընթերցողին ուշադրութիւնը կը հրաւիրէ այն մանրամասնութեան վրայ թէ անսպասելի է իրեն ուղղուած հրաւէրը, հաւանօրէն, նոյնիսկ, սխալի մը արդիւնք: Ընթերցո-

ղին համար՝ գրութեան առանցքը, լուծելի գաղտնի՛քը կը դառնայ այս կէտը։ Հեղինակին խօսքերուն ու քայլերուն ուշադիր՝ կը մանէ հեռը ՄԱԿի չէնքէն ներս, կը բարձրանայ պէտք եղած յարկը, անհամբեր կը սպասէ որ ի վերջոյ լուծուի՛ գաղտնիքը։ Բայց բանէն դուրս կու գայ որ գաղտնիք չկայ. եղածը պարզ հրաւէր մըն է եւ այդ հրաւէրի արդիւնքը պատմող պարզ գրուածք մը։

Հետաքրքրութիւն ստեղծելու նման փորձեր (եւ յաջողութիւններ) շատ կան մա՛նաւանդ Քիւրտիստանի պատմութիւններուն մէջ։ Գրութեան ձեւն ալ ձեռնտու է, այս պարագային։ Կարճ հատուածի մը մէջ հեղինակը կը սկսի պատմելու, օրինակ, իր երիտասարդ տիրուհիին ու իր փոխադարձ զգացումներու մասին, այդպէս՝ կարծես պատմութեան ընթացքին, առանց երկար մանրամասնութիւններ տալու. յետոյ ուրիշ հատուածի մը մէջ արդէն սիրային խօսակցութիւն կը դնէ կամ պատանեկան կէս-անմեղ սիրուրտուք։ Բայց երկու հատուածներուն միջեւ ընթերցողի հետաքրքրութիւնը հասած է արդէն բարձրաղոյն կէտի մը։ Այս տեսակէտէ խսկական գիւտի մը ապաւորութիւնը կը դրծէ «Եկուր երթանք Ս. Նշան...» հատուածի վերջաւորութիւնը, ուր էլիֆի հետ իր տեսակցութիւնն ու խօսակցութիւնը պատմելէ վերջ՝ կը գրէ. Մուրիճ մէջ իրարու նայեցանք եւ, առանց բառ մը ելս խօսելու, իյանք ուռի։ Ան իր տունը գնաց, ես ալ՝ մեր։ Այս ձեւով ալ հատուածը կը վերջանայ։ Բայց արդէն հետաքրքրութիւնը վառ պահող ուրիշ մանրամասնութիւններու շարքին ուեւցած է սրսփէնսի տարր մը։

Անշուշտ խօսքը մտահոգութիւն ստեղծող, հոգեմաշ հատնումի եւ ջղային բացառիկ պրկումի պահեր առթող այն միւս սրսփէնսի մասին չէ, որ արդէն դրական կամ շարժանկարային սեռի վերածուած է, եւ որ պատմութեան մը կամ գործողութեան մը դերադոյն լարումի պահը նշելէ ետք՝ անխուսափելի բացատրութեան մը, վախճանական հանգրուանի մը կը յանգի, գաղտնիք մը կը պարզէ։

Արամ Հայկազի մօտ հետաքրքրութեան լարումը պատմողի բնական շնորհ է եւ յաճախ իրմէ դուրս նպատակ չի հետապնդեր, բան մը հասկցնելու, տեղ մը հասնելու չի ծառայեր։ Հայկազ կը պատմէ պատմելու համոյքին համար, բառերու եւ խօսքի ստեղծած ինքնանպատակ վայելքի բնազդական փնտռտուքով։

Հետաքրքրական է, այս տեսակէտէ, «Որդիր Սարասկայումը»։ Որոշ նիւթ չունի, տեսակ մը «պարապ վախտի խաղալիք» է, որ արձակուրդի մը ընթացքին միւնոյն հիւրանոցը բնակող բարեկամներու ոճային մէկ ժամանցը կը ներկայացնէ։ Գրաւ մըն է. կարելի՞ է գրել «ճիշդ այնպէս, ինչպէս որ պիտի գրէր Զարեանը, եթէ ինքը հոս՝ այս հիւրանոցին մէջ ըլլար»։ Հարցը այն չէ թէ ի՛նչ չափով օրագիրը Զարեանը կը յիշեցնէ կամ թէ ի՛նչ արժէք կը ներկայացնէ։ Հայկազի ձգտումն է հետաքրքրականը՝ պատմելու հաճոյքին ոճի խաղի այս երանգն ալ կցելու։ Խօսքը, կարծես, իր խմատի պարունակէն անկախ ոգեկան մասնաւոր արժէք մը կը ներկայացնէ՝ հնչիւնի հրաշքով եւ բանի խորհուրդով ծանրաբեռն։

Գէ՞տք է գրելու այս կերպին մէջ փնտռել գրական ըմբռնում մը կամ կարծիք մը՝ կեանքն ու գրականութիւնը զօդող յարաբերութիւններու մասին։ Ամէն պարագայի՝ նման ըմբռնում մը եթէ բառերով ձեւակերպուի՝ հեռեւեալ բանաձեւումին կրնայ յանգիլ. գրականութիւնը ա՛նպայման պատգամ մը փոխանցելու չի ծառայեր եւ պէտք չէ ներկայացուի,

պարագրաբար, ընդունուած սեռերու կամ գրական կաղապարներու մէջ։ Ապրելու պարզ զգայութիւնը ունեցող մարդը կրնայ պահանջը ունենալ իր յուզումը, շարժումը կամ վայելքը պատմելու աննպատակ կամ ինքնանպատակ ձեւով, բնականօրէն։ Ապրելու ձեւ մըն է նաեւ այս, աւելի խո՛ր ապրելու ձեւ մը։

Պատմելու արուեստին տրամաբանական լրացուցիչն է կառուցելու արուեստը։ Սրսպիէնս ստեղծել կառուցումի ճիգ գործադրել կը նշանակէ արդէն։ Բայց կայ տակաւին հետզհետէ զարգացող գործողութեան, ժամանակի ընթացքին հասունցող ու խորացող հոգեբանութեան մը պահանջը, մեկնակէտէն ուղղագիծօրէն վախճանի ձգտող կամ տեղ-տեղ կանգ առնող, խորացող, մինչեւ իսկ եռ-դարձով մը գալիքը լուսաւորող կառուցումի թեմիքը։

Այս թեմիքին լաւագոյն ծանօթ է Արամ Հայկազ։ Գիտէ սքանչելիօրէն տիրապետուած կառուցում ունեցող գրուածքներ ճարտարապետել, ինչպէս «Մանուկ Բէյիզը», «Տղաս», եւ ուրիշ գրութիւններու կարգին՝ հոյակապ հատուածներ՝ ՊԻԻՐՏԻՍՏԱՆԻ ԼԵՌՆԵՐՈՒՆ ՄԷՋէն։ Երբեմն, սակայն, կը հանդիպինք նաեւ չտիրապետուած կառոյց ունեցող, կարծես քըմայքի բերումով ցրուած մնացած գրութիւններու («Տղու հոգի»)։ Մէկ բացատրութիւն կարելի է տալ այս երեւոյթին, անկախաբար այն հանգամանքէն թէ այս կամ այն գրութեան մէջ ճարտարութեան պակաս մը վերագրելի է ան. հեղինակի ներկայացուցած աշխարհէն ներս, իւրաքանչիւր գրուածք պահ մը, պատկեր մը կը բնորոշէ համագրութեան մը մէջ եւ իբր այդ՝ միշտ ինքն իր մէջ ամբողջական ըլլալու պարտադրանքին ենթակայ չէ. ընդհանուր կառոյցին մէկ մանրամասնութիւնն է եւ համագրական ընկալումի մը մէջ կը գտնէ իր մասնաւոր տեղը։

Ժամանակակից, այժմէական բնոյթը Արամ Հայկազի գրականութեան կը չեչառուի նա՛եւ խոսակցութեան տրուած էական բաժինով։ Մեր ժամանակի գրականութեան յատկանիշներէն մէկն ալ կենդանի, անմիջական խոսակցութիւնն է։ Երկար վերլուծումներն ու հոգեկան պահերու նրբակազմութիւնները իրենց հաւատարիմ եւ արժէքաւոր ներկայացուցիչները ունին, անշուշտ, բայց դարի կենքը դալի է մանաւանդ ուղղակի խոսքի խառութեամբ հոգեբանութիւնները դրսեւորող գրականութեան մէջ։

Խոսքը շարժում է նաեւ, ապրումի մարմնական արտայայտութեան մէկ ձեւը, հոգեվիճակի մը, կացութեան մը խտացումը ժամանակին ու միջոցին մէջ։ Խտացում մը, որ պահ մը կամ ապրում մը համադրական ձեւով կը թեւադրէ, կը ներընչէ անոր չեչան ու բնոյթը, կը ստեղծէ անհրաժեշտ տպաւորութիւնը, մթնոլորտը, որուն մէջ մտնելով ընթերցողը անմիջական ընկալումով կը հասկնայ, աւելի ճիշդը կը համզգայ այդ պահը կամ ապրումը ունեցող մարդու հոգեբանութիւնը։

Այս պարագային՝ հեղինակին դերը ճիշդ բառը, հարազատ խոսքը գտնելուն մէջ կը կայանայ։

Արամ Հայկազ գիտէ գաղտնիքը ճիշդ բառի գործածութեան։ Ո՛չ միայն կը պահէ ոճային հարազատութիւնը խոսքին՝ իւրաքանչիւր անհատի բերնին մէջ դնելով իր դիրքին ու կացութեան հարազատորէն պատշաճող բառերը, այլեւ կը յարգէ ցեղային յատկանիշները կամ տեղական ու ժամանակային տարբերութիւնները։ Թուրք պաշտօնեան ծեքծեքուն եւ սին քաղաքավարութեան տարազներով կը խօսի, քիւրտ հովիւը՝ պատկերաւոր ու քիչ մը նախնական լեզուով, տարիքոտ կայ կինը՝ դառն փորձառութիւն-

ներով ու հոգիի բարութեամբ ստեղծուած այն արտայայտութեամբ, որուն մէջ դուրգուրանքի շեշտ կայ միշտ եւ ախտոտանքի գաղտնի երանգ, վերջապէս Ամերիկահայը, իր միջավայրի կնիքը կրող գործնական լեզուով մը, որուն ոճային կառոյցը անխուսափելիօրէն կը յիշեցնէ նոր աշխարհի քաղաքակրթութիւնը։

Խօսակցութիւնը, Արամ Հայկազի ղրականութեան մէջ, կը հիւսուի գործողութեան, կը շարունակէ զայն, կը թելադրէ հետագայ զարգացումները, արտայայտելով միաժամանակ խօսողի հոգեբանութիւնը։ Երբ Տիկին Հայկազ կ'ըսէ թէ Օր. Լաւսը հայկական կերակուրներ եփել կ'ուզէ սորվիլ՝ ա՛լ պէտք չի մնար բացատրելու թէ օրիորդը կը հետաքրքրուի հայ երիտասարդով մը եւ ապագայի լուրջ ծրագիրներ ունի։ Նոյնպէս՝ ամբողջ հատուածի մը նկարագրութիւնը եւ ծանօթ շարժումներու խառնումը կայ մէկ հատիկ նախադասութեան մէջ, որ ապաւորիչ կերպով կը փակէ «Ցդաս» գլուխ-գործոցը. Հէյ փա՛, ամէն բան վերջացաւ, արքնցի՛ր, տուն կ'երթանք կոր։

Այս գրականութեան ուրիշ մէկ յատկանիշը նկարագրութիւններու ճշգրտութիւնն ու գեղեցկութիւնն է, իւրայատկութիւնը։ Խօսքը միայն բնութեան այդքան գեղեցիկ նկարագրութիւններու մասին չէ, որոնք նրբօրէն կ'արտայայտեն Արամ Հայկազի հոգեկան բացառիկ կապը բնական ու կենդանական աշխարհին հետ։ Որեւէ կացութեան, վիճակի, դիրքի նկարագրութիւնը կ'իրագործուի մանրամասնութիւններու միեւնոյն ճշգրտութեամբ, դիտողական եւ զառողական իւրայատուկ նրբութիւնով։

Նկարագրութեան իր թեմնիքը հիմնուած է ընտրութեան վրայ։ Ընդհանուր շրջագիծը ընդհանուր կերպով ճշգելէ վերջ՝ կու տայ անհրաժեշտ մանրամասնութիւնը, որուն վրայ կը կեդրոնանայ ուշադրութեան լուսախուրձը։

«Մանուէլին մէջ ի՞նչ կար»ի սկիզբը կայ սա ձեւի խոստովանութիւն մը. Հաւատացէք անկեղծութեանս, եթէ ըսեմ, թէ այդ շէնքին քանի յարկանի ըլլալէն իսկ լուր չունիմ։ Կա՛մ երկյարկանի է, կամ եռայարկանի, ու թերեւս ալ՝ չորս յարկանի. ես ի՞նչ գիտնամ...։ Սրամիտ չափազանցութիւնը մէկ կողմ դրած՝ (երկո՞ւ թէ չորս յարկ) բնաւ դժուար չէ հաւատալ որ ուշադրութիւն չէ դրած շէնքի բարձրութեան։ Կարեւորը ա՛յդ չէ, ինք ալ կ'ըսէ շարունակութեան մէջ։ Կարեւորը այդ շէնքին առաջ ամէն օր կազմուող ձրի սանտուիչ առնելու եկած թշուառ մարդերէ կազմուած պաշն է։ Այդ պոչը մանրամասնօրէն ու ճշգրտութեամբ կը ներկայացնէ մեզի. ո՛չ միայն իր ընդհանուր ձեւին մէջ, այլ բաղադիր տարրերու՝ մարդերու զգաղումի, շարժումի, հոգեբանութեան վերլուծումով։

Բնականչական է միեւնոյն հատուածին մէջ գործածուած «ուշադիր դիտող» բացատրութիւնը։ Այդ ուշադիր դիտողն է, ահաւասիկ, Արամ Հայկազ։ Այսինքն մէկը, որ բոլորի նայուածքին մատուցուած իրերուն ու երեւոյթներուն է որ կը նայի, բայց բոլորին պէս չի տեսներ։ Կ'ընկալէ որոշ ձեւով, իւրայատուկ կերպով՝ զանազանելու իր կարողութեան շնորհիւ։ Տարբեր է տեսնելու իր կերպին, տարբեր՝ նաեւ ներկայացնելու, տեսնել տալու եղանակին մէջ։ Չի սիրեր սովորական, կրկնուած ըսելակերպերը, կը խօսի պատկերներով, համեմատութիւններով։

Վանքը, կ'ըսէ, որ գիւղի ձախին փառաւոր դաշտերու ծայրին նստեր էր, երկրաչափական խրթին խնդիր մը լուծող աշակերտի մը լրջութեամբ...

կամ՝

Կարծես թէ տառապած մարդու իր դէմքին մորթը, ապի մը մէջ ճմռթկուած՝ ու առանց արդուկուելու իր տեղն էր դրուած։

Իւրայատուկ ըլլալու իր ճիգը, անսպասելի պատկերով մը մեզ տպաւորելու ջանքը մտածել կու տան որ մասնաւոր փնտռտուքի մը արդիւնք են այս անակնկալ ըսելակերպը, քիչ մը արուեստական հետապնդումի հետեւանք։ Գո՛նէ սկիզբը. որովհետեւ ա՛լ սովորութիւն դարձած են իրեն եւ չուտով կը դառնան նաեւ ընթերցողին համար։

Պատկերաւոր այս ըսելակերպին մէջ կարծես խուլ ձգտում մը ալ կայ՝ բնութիւնը, արտաքին աշխարհը հոգեկան արժանիքներով օժտելու։ Տեսակ մը տարտամ ոգեպաշտական մղում, որ գարունին սուլիչ փչել կու տայ երկիրի վրայ, ծիծեռնակին՝ երկինքին պատառը մկրատել...

Փնտռտուքի, բայց նաեւ խնամքի կնիքը կայ նաեւ Արամ Հայկազի լեզուին վրայ։ Մաքուր, սահուն, կայտա՛ռ հայերէն մը, որ խօսակցական լեզուի ճկունութեան կը միացնէ նկարագրութիւններու քնարական չունչը եւ մտածողական մասերու խորացումի յատկութիւնը։ Բարբառային շատ թերեւ գունաւորումով եւ տեղ-տեղ օտար բայց ա՛լ հայացած բառերու գործածութեամբ աւելի արտայայտիչ, համով դարձած, վճիտ, յստակ հայերէն մը։

Մէկ տարօրինակութիւն ունի այս լեզուն. խնդրառութեան օրէնքի սխալ կիրառումը՝ դերբայներու գործածութեան ժամանակ։ Արամ Հայկազ կը գրէ. այս վախցած բաներէս ոչ մէկը կամ՝ մեզմէ մէկուն ենթարկուած դժբախտութեան համար մինչ պէտք է գրէր՝ «ոչ մէկը այն բաներէն, որոնցմէ կը վախնայինք...» եւ «դժբախտութեան համար, որուն մեզմէ մէկը կ'ենթարկուէր...»։

Պատահական շեղում մը չէ մատնանշուածը, այլ լեզուական մնայուն յատկանիշ մը, հաւանօրէն խօսակցական լեզուէն ժառանգ մնացած։

Այս բոլորը՝ պատմելու եւ կառուցելու իւրայատուկ ճարտարութիւն, խօսակցական մասերու կենդանութիւն, նկարագրութիւններու գեղեցկութիւն եւ ճշգրտութիւն, լեզուի յստակութիւն ու կենսունակութիւն, տարրերն են ինքնուրոյն արուեստի մը, որ պարզ ըլլալուն պատճառով բան չի կորսնցներ իր արժէքէն, ընդհակառակը կը շահի։ Եւ այս բոլորը կը ստեղծեն այն մասնաւոր, մեր գրականութեան մէջ իր նմանը չունեցող մընթոլորտը, որ Արամ Հայկազի երկերուն է. խոստովանութեան տարօրինակ շեշտով մը մտերմիկ շունչ ստացած, վստահութիւն եւ համակրանք ներշնչող, գրողին եւ ընթերցողին միջեւ տեսակ մը մեղտակից կապ ստեղծող ընտանի, հարազատ մթնոլորտ մը, որ Արամ Հայկազի ոճը կը յատկանշէ։

Երբեմն յուզումով ծանրացած, երբեմն շէնչող խնդուք առաջացնող, բայց յաճախ լուրջի եւ կատակի խառնուրդ արամիտ, հեգնոտ բարութեան շեշտով՝ այս ոճը հարազատօրէն կը պատշաճի ընտրուած նիւթերուն եւ հաւատարմօրէն կը ներկայացնէ հեղինակը։ Պարզ է իր կեանքին պէս, առանց գաղտնիքի, առանց յաւակնութեան, հեզասահ, պայծառ։

Քիչ անգամ այսքան ամբողջականօրէն իրաւ է հարածանօթ խօսքը՝ «ոճը մարդն իսկ է»։ Արամ Հայկազ իր ոճին մէջն է անհատականութեան էական յատկանիշներով. հոգիի անպաճոյճ բարութեամբ, միտքի սրամիտ խաղերով, լուրջի եւ կատակի սահմանին կեցած զուարթախոհութեամբ, մարդկային արժանապատուութեան խոր գիտակցութեամբ։

(Շար. 1)

ՏՈՔԹ. ԵՐ. ԽԱԹԱՆԱՍԵԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՆԻՒԹԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՐԱ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆԸ

●

ՊԱՏՄԱԿԱՆ ՏՆՏԵՍԱՑԵՒՆԸ

Արդի գիտութիւնը, հիմնուելով մանրախոյզ հետազօտութիւնների, նոր նոր գիւտերի եւ անուղղակի առընչուած բազում այլ տուեալների վրայ, վճռապէս ժխտում է գոյութիւնը նախնադարեան համայնական հասարակարգի։ Մի հասարակարգ, որն իրապէս տընտեսաձեւ չի ունեցել, ուր ընկերութիւնը գոյատեւել է՝ մէկը ամէնքի եւ ամէնքը մէկի համար՝ սկզբունքով։ Մի հասարակարգ, որ անխիլիրտ եւ անխոով հոգաբամբասներ տուգացել է անխտրականութեան եւ անշարժութեան ձանձրոյթին, ուր սիրել են հաւասարութիւնը եւ անգործութիւնը, թագաւորել է իդէալական միասնութիւնը եւ ուր բացակայ է եղել մինչեւ իսկ ներքին հակամարտութիւնը։ Այսպիսի մի հասարակարգ լոկ ծնունդն է ինգելսի եւ Մարքսի խեղաւուակին։

Համայնական հասարակարգի պատկերը ներկայացնում է միապաղաղ ընկերութիւն, որի գոյութիւնը տրամաբանորէն անընդունելի է։ Ընկերութիւն նշանակում է այլատարրութիւն, այլազանութիւն եւ բազմադէմութիւն։ Մարդուհոգին անհանգիստ եւ յարաշարժ զորոյթ է, գիւտի, հնարումի եւ ստեղծագործութեան շարժակներով։ Ընկերութիւնը այն ժամանակ կը զարգանայ, երբ կը սկսի շերտաւորուել։ Զարգացումն ու առաջդիմութիւնը արտայայտում են մի կողմից շերտաւորումի եւ տարբերացումի, իսկ միւս կողմից լրացումի եւ ամբողջացումի հոլովոյթում։ Ընկերային դասերը, խաւերը, դասակարգերը թէ մասերն են ամբողջին եւ թէ ամբողջութիւն են կազմում գործակցութեան ոգիով, միասնաբար ապրելու իրենց կամքով։ Անկարելի է երեւակայել, որ համայնական անտեսաձեւում, բոլորն էլ ձկնորս, որսորդ, պտղահաւաք եւ ամէն բան էին, գործերը վարող եւ համակարգող ղեկավարներ չունէին, անձնական եւ համայնական վէճերն ու տարակարծութիւնները հարթող հեղինակաւոր պետեր չունէին։ Գործակցութիւնը ենթադրում է վէճի եւ կռուի վերացում, միասնութեան եւ համերաշխութեան վերականգնում։

Սխալ է մարքսիզմի այն հաւաստումը, թէ հասարակարգի կամ անտեսաձեւի անցումները հեռեւանք են դասակարգային պայքարի։ Եթէ այդ ուղիղ լի-

նէր, կեղեքուող, շահագործուող դասակարգը ակրը պիտի գառնար նոր հասարակարգին։ Սարուկը պիտի ազատէր ճորտատիրութեան վրայ, իսկ ճորտը՝ դրամատիրութեան։ Պատմութեան վճիռը այդ չէ։ Ստրկատիրութեան ժամանակաշրջանում, որ տեւեց 4–5 հազար տարի, դասակարգային պայքար գոյութիւն չունէր մինչեւ իսկ սաղմնային վիճակում։ Ստրուկի դանգատը, դժգոհութիւնն ու ելոյթները մասնակի պոռթկումներ էին անհատական ազատութեան համար։ Ստրուկները զլխաւորաբար ռազմագերիներ էին, որոնց միակ երազը՝ թէկուզ կաչկանդուած ապրէին, միայն ողջ մնային էր։ Այդ ազատութիւնը ոչ թէ ստրուկները ձեռք բերին կռիւով, այլ տէրերը շնորհեցին։ Ճորտատիրական հասարակարգում թաւալող պայքարը ոչ թէ տնտեսական, այլ քաղաքական բնոյթ եւ հանգամանք ունէր։ Ազատագրուող ճորտը չդարձաւ դրամատէր, երբ հասարակարգը փոխուեց։ Մի եղելութիւն, որ էնգելսը խոստովանուեց յայտարարելով, թէ միայն ժամանակակից պատմութեան մէջ է, որ քաղաքական պայքարները դասակարգային կռուի բնոյթ են կրում։

ՏՆՏԵՍԱԿԱՆԸ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԻԱԿ ԱԶԴԱԿԸ

Ապացուցելու համար հռչակաւոր ասոյթը, թէ կեցութիւնն է, որ որոշում է մարդու գիտակցութիւնը, մարքսիստ տեսաբանները յանկերզում են— մարդը նախ պէտք է ուտի, որ կարենայ քաղաքականութեան մասին մտածել։ Այս դասական ասոյթի մէջ սխալ եւ չփոթ կայ։ Մարքսն ու Էնգելսը քաղաքական, հոգեկան ու մտային գործունէութեան պայմանը չփոթում եւ նոյնացնում են նրա պատճառի հետ։ Օրինակով բացատրենք։ Օդը կենսական պայման է ապրելու համար, սակայն մեր գաղափարները, մշակոյթի իրագործումները երբեք արդիւնք չեն օդի, մթնոլորտի փոփոխութիւնների, եւ ոչ էլ նրանցից կախում ունեն։ Իրաւ է, որ մարդկային ընկերութիւնը որքան նախնական է, այնքան այնտեղ զօրեղ են մարդու կենսաբանական պահանջները։ Քաղաքակրթութեան առաջընթացի հետ, գործուն եւ տիրական են դառնում բարդ եւ բազում կամէութիւններ, որոնք բախտորոշ ներգործութիւն են կատարում պատմութեան ընթացքի վրայ։ Դասական ասոյթը թելադրում է մեզ, թէ տնտեսական ազդակի դերը անտեսելու չէ։ Եւ այդքան միայն։

Ինքնաբերաբար մտաբերում ենք դասական հարցումը. մարդը ուտելու համա՞ր ապրում է, թէ ապրելու համար ուտում է։ Անասունը ուտելու համար է ապրում։ Սա բնազդի ուժով եւ մղումով արտայայտուող կենսաբանական պահանջ է։ Մարդը անասուն չէ։ Նիւթական բարիքները, իբրեւ գոյութեան միջոց, անհրաժեշտ պայման են հոգեկան ստեղծագործութեան համար։ Գոյութեան միջոցները, արտադրութիւնը ոչ ինքնանպատակ է եւ ոչ էլ վերջնանպատակ։

Արտադրողականութիւնը մարդուն շնորհուած եւ բնութեան կողմից նրան պարտադրուած կենդանական մի բնազդ չէ։ Անասուններն էլ բնութեան պարգեւն են, սակայն զուրկ են արտադրողական ունակութիւնից, գործիք չունենալու հակումից։ Մարդն է միայն գործիք չունող կենդանին։ Մարդ անհատի այդ յատկութիւնը գալիս է իր ստեղծագործելու արարչական էութիւնից, գիւտի, հնարանքի եւ նորարութեան անյագ ձգտումից։ Ոչ թէ զանգուածները, այլ մարդ անհատներն են, որ գիւտ են անում եւ հնարում են։ Գիւտարարի արարչական ուժը տնտեսականը չէ բնաւ, այլ հոգեկանը։ Մարդու կեանքի նպատակը ազատագրութիւնն է, եւ ազատութեան միջոցով հասնել ինքնիրականացումի։ Ուտելու համար մարդ չի ապրում. վկայ, նուիրեալների չքեղ հոյլը, որ իր գերագոյնը, կեա՛նքը, զոհում է երազի, տեսիլքի սիրոյն։

թէ՛ տնտեսութիւնը եւ թէ ընկերութիւնը մարդկային ստեղծագործ հանճարի բերքն են։ Առանց հանճարի ոչինչ կարելի էր կազմակերպել։ Գեւութիւն, օրէնք, կրթութիւն, ապահովութիւն, եւ այլ կազմակերպութիւններ, ստեղծւում, համակարգւում եւ գործադրւում են մարդու գործարար տաղանդի շնորհիւ։ Ցոմսուել թէ ընկերութիւնը մէկ զսպանակով է շարժւում, տիալեկտիկական ընթացակերպով, նշանակում է քմահաճ դիտումով կախարդական առասպել բանեցնել տնտեսական տգղակի շուրջ եւ անգիտել, ուրանալ ստեղծագործ մարդ էակի ստեղծագործ միտքը, հիզը, ձգտումը եւ ջոկելու ճարտարութիւնը։

Մինչ կառչելով տնտեսական ազդակի մեծաղօրութեան, մարքսիստները պնդում են, թէ մեծ մարդիկ արդիւնքն են իրենց դարաշրջանի տնտեսական իրադրութեան եւ նրանից բխող պայմանների։ Խօսելով Նապոլէոնի մասին, Էնգելսն ասում է, թէ նրա յայտնութիւնը պատմութեան բեմի վրայ, կամքի կամ դիպուածի արդիւնք չէր, այլ ժամանակի տնտեսական պահանջների։ Եւ աւելացնում է ընդգծելով, «եթէ չլինէր Նապոլէոնը, անպայման նրա փոխարէն ուրիշը պիտի դարձ։ Դիալեկտիկային ապաւինելով, իրաւունք կ'ունենայ Ստալինը պնդելու, թէ եթէ Հիթլերը չլինէր, նրա տեղ մի ուրիշ Հիթլեր կը դար։ Մինչ բացարձակ իրողութիւնը այն է, որ Հիթլերը երբեք չէր դայ, եթէ, ուսս պարտիայի հրահանգով, գերման համայնավարները չմիանային նացիներին՝ ճակատ կազմելու ընկերվարականների դէմ, եւ չքուէարկէին Հիթլերի օգտին, աշխարհի հունը եւ ճակատագիրը բոլորովին տարբեր կը լինէր։ Լա՛ւ, եթէ Նապոլէոնի գալուստը անխուսափելի էր, իրրեւ ժամանակի ստիպողութիւն, հապա ինչո՞ւ Հռոմի եւ Ցունաստանի քաղաքակրթութիւնը ահաւոր փլուզումից փրկելու համար, մի մեծազօր փրկարար հերոս երեւան չեկաւ։ Արդեօք ժամանա՞կն էր, որ գաւառանեց դիալեկտիկային թէ դիալեկտիկան՝ ժամանակին։

Նիւթապաշտական դիալեկտիկային կառչելով, ծիծաղելի է պնդել թէ Հոմերոս քնարեց, Պղատոն իմաստասիրեց, Ցիդէաս քանդակեց, Օվիդ երգեց, Ցիսուս քարոզեց, Կոնֆիւսիոս բարոյախօսեց, Բաֆայել նկարեց եւ Վաղներ երգահանեց տնտեսական ճնշումի ներքեւ։ Պատմական նիւթապաշտութիւնը դեռ չի բացատրել, թէ նոյն տնտեսաձեւի տակ ապրող ժողովուրդները ինչո՞ւ եւ ի՞նչպէս ստեղծել են իրարից բոլորովին տարբեր եւ ինքնուրոյն մշակոյթ եւ քաղաքակրթութիւն։ Մարկատիրական տնտեսաձեւով ապրում էին միաժամանակ Ցունաստանը, Եգիպտոսը, Հռոմը, Բաբելոնը եւ Հնդկաստանը, զբաղւում էին հողագործութիւնով եւ անասնապահութիւնով եւ գործածում էին նոյնատեսակ գործիքներ։ Ինչո՞ւ այս երկիրների ժողովուրդները այլատեսակ մշակոյթ, գրականութիւն, կրօնք եւ հիմնարկութիւններ ստեղծեցին։ Մարքսիզմը չի կարողացած լուսաբանել, թէ քաղաքակիրթ Հռովմայեցիները, հեթանոս թշնամիներով շրջապատուած Հայերը, կիսաբարբարիկ Իրլանդացիները, թափառաշրջիկ Սլաւները քրիստոնէութիւնը ընդունեցին՝ անջատաբար իրարից։ Նա չէ պարզաբանած նաեւ, թէ մշակութային բարձրը առջով սնուած եւ նոյն տնտեսաձեւի մէջ դաստիարակուած ականաւոր անձեր տարբեր գաղափարաբանութեան ջատագով են կանգնած։ Եթէ տնտեսական, դասակարգային պայքարն է մարդու դիտակցութիւնը որոշողը, հապա ի՞նչպէս բացատրել բուրժուական ծագումով Ֆ. Մարքսի, դրամատէր Էնգելսի եւ աղքատականութիւնից սերած Լենինի բանուորական դատի դրօշակիր լինելը։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ ՕՐԻՆԱՁԱՀ՞Փ Է

Մարքսիզմի ըմբռնումով, պատմութիւնը հպատակւում է պատճառի և արդիւնքի օրէնքին, այսինքն օրինաչափական է։ Այս պատճառով կոչւում է դիտական ընկերվարութիւն եւ վերլուծում-

նների ընոյթը եւ մեթոտը՝ գիտական։ Հեչտ եւ պարզունակ մեթոտ։ Բաւ է, որ պատմական երեւոյթի պատճառը դիտես, դիւրին կարող ես դուշակել արդիւնքը, որովհետեւ բոլոր դէպքերը նոյն կերպարանքը ունեն։ Կոմկուսի ծրագրում ասուած է, թէ համայնավարը ոչ միայն իմանում է ընթացիկ քաղաքական հարցերը, անցուդարձերը եւ նախատեսում նրանց ընթացակերպը, այլեւ մանրամասն դուշակում է նրանց ծագումը, զարգացման պատճառն ու ուղղութիւնը։ Կարճ խօսքով, բիւրեղի դունդի մէջ լրատակ տեսնում է թէ՛ անցեալը եւ թէ ապագան։ Կատարեալ մարգարէ...

Մի պահ ընդունենք, որ այս յուսութքով օժտուած են բոլոր մարքսիստ տեսաբանները։ Ուրեմն ապասելի է, որ սրանք դատողութեան մէկ կանոնով չափեն ու գնահատեն պատմութեան իրագործութիւնները եւ առօրեայ քաղաքական հարցերը եւ հասնեն նոյն եզրայանգումի։ Բայց իրականութիւնը բոլորովին այլ բան է ասում։ Ուշագրաւն այն է, որ սովետական տարեգրութեան մէջ, հաղուագէպ է եղել, որ երկու տեսաբան նոյն կարծիքը պաշտպանեն, նոյն նախատեսութիւնը յղացած լինեն և նոյն գործելաձեւը որդեգրեն։ Լենինը անհաշտ է եղել իր ուսուցչին Պլեխանովի հետ, Դեբորինը տարակարծիք՝ Բուխարինի հետ, Տրոցկին գրեթէ բոլորի հետ, Խրուշչովը Մաոյ Ցզեդունգի հետ եւայլն... ադ ինֆինիտում։ Նոյն ջահով են լուսաւորում այնքարհը, բայց մէկը այնտեղ շուք է տեսնում, իսկ միւսը՝ փուք, մէկը տերեւ է տեսնում, իսկ միւսը դեւ։ Ո՞ւր մնաց օրինաչափութեան զօրութիւնը, մարգարէութիւնը։

Պատմութիւնը թաւալում է ոչ թէ որոշակիր օրէնքների ուղղութիւնով, այլ հաղարումէկ անյարիր եւ դիպուածական ազդակների ներգործութիւնով, որոնք կարելի չէ մի ընդհանուր յայտարարի վերածել ոչ էլ մէկ հանրագարագիր տարազով բացատրել։ Պատմութիւնը յայտնաբերել է ազդակների անհատնում պէսպիսութիւն եւ բազմազանութիւն, որոնք վճռական անդրադարձ են ունեցել ճակատագրի վրայ։ Այսպէս, իշխանութեան տենչը, կրօնական անողոք մոլեռանդութիւնը, գերեւած փառքի ոխակալութիւնը, մախանքից ծնուած սադրանքները, սեռային հիւանդագին ցանկութիւնը, բազմաթիւ հոգեկան այլ մոլութիւններ։ Պատմական երեւոյթները չոր, բացերեւ ու սահմանազատ եղելութիւններ չեն, ինչպէս կարմիրն ու կանաչը, սեւն ու սպիտակը, մութն ու լոյսը։ Պատմական իրագործութիւնները այնքան բաղմազան երանգներով են միախառն, լոյսի եւ ստուերի այնպիսի խաղերի են ենթակայ, որ թէ՛ նրանց ծրնունդն է առեղծուած եւ թէ վախճանը անծանօթ։ Նման ընդերկրեայ մշտահոս ջուրին, որի ոչ ակունքն է յայտնի եւ ոչ էլ բերանը։

Պատմութեան ընթացքը յաճախ կախուած է դիպուածի եւ պատահականութեան նուրբ թելերից։ Օրինակ, 1917–ին, կերմն նախարարը արտօնեց Լենինին, որ ամրափակ գնացքով, Գերմանիոյ հողով անցնի, Ռուսիա գնալու համար, որովհետեւ ուրիշ ճամբայ չունէր։ Արտօնութիւնը կախուած էր նախարարի քմայքից կամ տրամադրութիւնից։ Եթէ դա զուգադիպէր նրա դէդ տրամադրութեան, եւ արգիլէր Լենինին ճամբորդելը, Ռուսիոյ յեղափոխութիւնը տարբեր շրջագարձ կ'ունենար։ Ինչպէս Բ. Ռասլը է յիշատակում, եթէ Անգլիոյ Հենրի ութերորդ թագաւորը խենթօրէն սիրահարուած չլինէր Աննա Բոլինին, Միացեալ Նահանգների պետութիւնը գոյութիւն չէր ունենայ, Անգլիան կաթոլիկ կը մնար, իսկ այսօրուայ Մ. Նահանգների հողամասը՝ սպանական Ամերիկայի մէկ կալուածը։

Առնենք օրինակը արդի իրադրութիւնից։ Ամերիկան եւ Ս. Մթութիւնը իրենց հիւլէական ռումբի կենդրոնում մի հերթապահ ունեն, որի պարտականութիւնն է, հենց որ հրաման ստանայ, սեղմել կեդրոնի կոճակը, իրբեւ պա-

տասխան թշնամու նախայարձակումին։ Անհաւանական չէ, հակառակ առնուած խիստ նախազգուշութիւններին, հիւանդապէն մի պահի, հերթապահը իր դատողութիւնը կորցնի եւ մահասփիւռ կոճակը սեղմի։ Նման մի պատահականութիւն ճակատագրական կը լինի համայն մարդկութեան համար։ Կը չքանան բոլոր զեղեցիկ երազները մարդկութեան, աշխարհը կը վերածուի ահաւոր քաոսի եւ մարդկութեան մնացորդը կը մխրճուի անլուր եւ անտեսել բարբարոսութեան մէջ։ Կը մահանայ նաեւ դիալեկտիկան, եւ մանաւանդ երանաւէտ համամիտաւոր դրախտի տեսիլքը։ Դիպուածը ինչե՞ր չի կարող կատարել պատմութեան մէջ։

Փ. Մարքսն էլ նախատեսութիւնների բաւիղում մոլորուեց։ Նա նախատեսեց եւ յայտարարեց, թէ դրամագլուխը հետզհետէ պիտի կուտակուի քիչերի մօտ, զուգընթացաբար բանուորների բազմութիւնը պիտի ուռչի եւ մեծանայ, նրանք ծայրայեղ թշուառութիւնից եւ սովալլուկ վիճակից ընդվզած եւ ապրատամբ՝ պիտի տապալեն դրամատիրութիւնը եւ պիտի հաստատեն պրոլետարիատի մենատիրութիւն։ Պատմութիւնը ոչ միայն չարդարացրեց Մարքսի եւ Էնգելսի անբեր յոյսերը, այլ փոխանակ յեղափոխութիւն ծագելու յոյժ առաջացած դրամատիրական երկիրների՝ Անգլիոյ եւ Ամերիկայի մէջ, պոռթկաց ու պայթեց ճարտարարուեստով յետամնաց Ռուսիոյ մէջ։ Նոյն սայթաքումը ունեցաւ Լենինը։ Նա որպէս թէ Մարքսի նախատեսութիւնը պաշտպանեց, դրամատիրութեան դէպի աշխարհակալութիւն, իմպերիալիզմ արած ոստումով։ Իմպերիալիզմը, ասում է Լենինը, «գերահասուն դրամատիրութեան» վերջին ճիգն է՝ օտար երկիրներում նորանոր շուկաների տիրանալու։ Սա բացարձակ անհրաժեշտութիւն է դրամատիրութեան համար։ Առանց իմպերիալիզմի, բոլոր դրամատիրական երկիրները պիտի փուլ գային, որովհետեւ բանուորները սովահար պիտի լինէին, միլիոնաւոր անգործների մի բանակ պիտի ստեղծուէր, որը պիտի վերջանար ընկերային յեղափոխութիւնով։ Լենինը քարոզում էր, թէ եթէ վերացնենք փրկութեան այս լաստը, դրամատիրութիւնը այլեւս իր գոյութեան կռուանից ընդմիշտ զրկուելով, բնական պրոցեսով պիտի կործանուի։ Դրա համար է, որ Լենինը ասել է, «Լոնդոնի եւ Փարիզի ճանապարհը Պեկինի վրայով է դնում»։

Այժմ իմպերիալիզմը իր հոգեվարքն է ապրում։ Գաղութատիրութիւնը վերջ է դտել, սակայն ոչ միայն դրամատիրական երկիրներում յեղափոխութիւն չէ կատարուել, այլ նաեւ Անգլիան, Ֆրանսան, Գերմանիան, Հոլանդան եւ Ճապոնը աւելի բարգաւած են քան երբեւէ իրենց պատմութեան մէջ։ Ամերիկան, որ ամենից զօրեղ դրամատիրական երկիրն է, կարիք բնաւ չի զգում արտաքին շուկաների, շնորհիւ Ռոզվելտի Նիւ Դիլլի բերած վերանորոգումներին, ազգային տնտեսութիւնը յարատեւ ոգեւոր ընթացքումն է, աշխատաւորը աւելի գործողչէք է ստանում, նրա կենսամակարդակը մեծապէս բարձրացած է, վայելում է ընկերային ապահովութեան բարիքները եւ հանգստաւէտ կեանք է անցընում։ Սովետական հմուտ, ճեռնահաս եւ հեղինակաւոր տնտեսագէտներ մէկ երկու տարին մի անգամ, ահազանգ էին հնչեցնում, թէ ահա հասել է ժամը դրամատիրութեան վերջին տագնապին, թէ նա իր օրհան է ապրում։ Պատմական նիւթապաշտութիւնը չարաչար սխալուեց իր յախուռն զուշակութիւնների մէջ, որը պատճառ հանդիսացաւ, որ Խրուշչովը խոկայ եւ դրամատիրութիւնը կործանելու հակատիալեկտիկական միջոցառումներ որոնայ։ Դրամատիրական հասարակարգը ցուցաբերեց արտակարգ ճկունութիւն՝ յարմարուելու դարաշրջանի պահանջներին եւ դրանով իսկ գոյատեւելու զարգացական առաջընթացով։

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԱՐԻՇՏ ԱՌԱՋԴԻՄԱԿԱՆ Է

Մարքսիզմը դրական պատասխան է տալիս այս հարցումին։ Նա դաւանում է, թէ պատմութիւնը հակամարտ դասակարգերի պայքար է, հետեւաբար դրա համադրոյթը անպայման առաջդիմութիւն է։ Սա դիալէկտիկայի հրամայականն է։

Պատմութեան բազմաթիւ դէպքերն ու անցուդարձերը եկել են ապացուցելու, որ այս հաստատումը ճիշդ չէ եւ չի համապատասխանում իրողութեան։ Ուղիղ ու անհերքելի է, որ գիտութիւնն ու տեքնիկան, բոլոր պայմաններում եւ բոլոր ժամանակներում, անդադար ընթանում են առաջդիմական զարգացման ուղիով, որովհետեւ գիտական նուաճումների եւ տեքնիկական գիւտերի եւ հնարումների ընթացակերպում, յաջորդականութեան անքակտելի մի կապ կայ։ Որեւէ նոր գիւտի կառոյցը խարսխուած է հինի արմատների վրայ։ Մշակոյթի բնագաւառում պարզան տարբեր է։ Բարոյականի, իրաւունքի, արուեստի, դրականութեան ոլորտներում մշտական առաջդիմութիւնը թէական խնդիր է։ Հին եւ զեղահրաշ մշակոյթները Հռոմում եւ Յունաստանում ծաղկեցին եւ մարդկութեան պարգեւեցին գլուխ գործոցներ, որոնք այսօր առարկայ են ապշանքի եւ հիացումի, իսկ նրանց ստեղծագործ ժողովուրդը դատապարտուեց անպտուղ լճացումի եւ հետագայ առաջադէմ դարերում չտուեց անգամ հինի նուազագոյն արժէքը։ Այսօր դոյութիւն ունեն թերաճ եւ քաղաքակրթօրէն յետամնաց ժողովուրդներ, որոնց բարոյական ըմբռնումները, նուիրումի եւ այլասիրութեան խոյանքները բացակայ են քաղաքակիրթ ժողովուրդների մէջ։ Մշակոյթի պատմութիւնը ելեւէջների մի շարան է, վերելքի եւ անկումի, փթթումի եւ խամրումի, առաջդիմութեան եւ յետադիմութեան։ Օրինակ, բարբարոսների ներխուժումը Հռոմի վրայ, առաջդիմական ի՞նչ աւելացրեց, եթէ ոչ քայքայում կազմակերպութիւնների, փճացում սքանչագործ գեղակերտումների եւ բարոյական պղծութիւն եւ ապականութիւն։

Եթէ ուղիղ լինէր Մարքսի պատուիրանը, թէ միայն կռուով կը ստացուի յաղթանակ եւ առաջդիմութիւն, ապա ուրեմն պէտք է հետեւցնել, որ համայնավար հասարակարգում, դասակարգերի բացակայութեան բերումով, պայքար գոյութիւն պիտի չունենայ, ուստի առաջընթաց էլ գոյութիւն պիտի չունենայ։ Էնգելսը պատասխանելով այս առարկութեան, ասել է «կատարեալ պեռութիւն, կատարեալ ընկերութիւն բաներ են, որոնք միայն մեր երեւակայութեան ծնունդն են» (Էնգելս, Անտիդիւրինգ, էջ 46)։

Հապա ինչի՞ համար է պատմական դիալեկտիկան, պատմութեան օրինաչափութեան տեսութիւնը, որ ամէն պատճառ իր ուրոյն արդիւնքը կը տայ, ինչպէս ամէն նշենի մի միայն նուշ։ Սա խրոխտութիւն է եւ ոչ երեւակայութիւն։

ՀԻՄՆԱՇԷՆՔ ԹԷ ՎԵՐՆԱՇԷՆՔ

Մարքսիզմը, հակառակ իր պնդումին մոնիստ չէ, այլ դուալիստ է, այսինքն երկուութիւն ունեցող ուսմունք է։ Ըստ Մարքսի կոթողական երկին՝ Կապիտալին, նիւթն է գիտակցութեան ծնողը։ Օրինաչափութեան հիմունքով, պաշտպանելի է որոշադրականութիւնը։ Տրամաբանական է նաեւ այն, որ համայնավարութեան յաղթանակը անխուսափելի է, իբրեւ «երկաթէ անհրաժեշտութիւն»։ Մինչեւ այստեղ մարքսիզմը մոնիստ է։

Բայց նոր բացատում է իր մոնիզմը, երբ նա պնդում է, թէ գիտակցութիւնը, մարդու կամեցողութիւնը ներգործում է տնտեսականի, ընկերութեան վրայ։ Մարքսիզմը եւ լենինիզմը խրախուսում են բռնութիւնով, յեղափոխական արիւնահեղութիւնով, տապալել իշխանութիւնը, եւ բռնի միջոցներով նոր հասարակարգ ստեղծել։ Այսպիսով նիւ-

թը ինքնարժէք գոյացութիւն լինելուց դադարում է եւ դառնում խաղալիք մարդկային կամքի։ Սա բացորոշ կերպով կամապաշտութիւն, վոլունտարիզմ է։

Այս երկուութեան, երկդիմութեան հիմնապատճառը հոգեբանական եւ քաղաքական է։ Պատճառականութեան պաշտպանութիւնը լաւատեսութիւն ծաւալելն է բանուորութեան մէջ, այն սեւ օրերում, երբ պրոլետարիատը տրորւում է յետադիմութեան հարուածների ներքեւ։ Կարծես ուզում է ասել, մի՛ յուսահատուէք, բանուորներ, հակառակ այս ճնշումներին, պիտի գայ յաղթանակի օրը, որովհետեւ անխուսափելի է այդ։ Իսկ կամապաշտութիւնը առաջ է քշւում, իբրեւ յեղափոխական զօրաշարժի կոչ, դանդուածները ոգեւորելու եւ կռուելու հրաւէր։

Ի վերջոյ յաղթանակը կազմակերպողը մարդու իմացականութիւնն է, իսկ իրագործողը մարդու կամքն է։ Պլեխանովը գտնում էր, որ ընկերային յեղափոխութիւնը վաղաժամ է, որովհետեւ Ռուսիան դեռ հասուն չէ ճարտարարուեստով, ինչպէս Մարքսն ու Ենգելսն էին նախապայման ընդունում այդ։ Սակայն Լենինը պնդում էր, թէ այդ նախապայմանը կը լրացնի պրոլետարիատը, երբ իշխանութիւնը ձեռք առնի։ Եւ յաղթանակեց ոչ թէ ուսմունքը, այլ Լենինի կամքը, վճռականութիւնը։

Հիմնաշէնքի եւ վերնաշէնքի հեգեմոնիան նիւթի առաջնութեան եւ գիտակցութեան երկրորդային լինելու խնդիրն է։ Ուրիշ առիթով կ՚անդրադառնանք այս հակասական հարցին։ Ասենք այսքանը։ Հիմնաշէնքը նիւթականն է, վերնաշէնքը՝ ոգեկանը։ Եթէ ամբողջը մի շէնք է ներկայացնում, վերնայարկերն են կարեւորը։ Հիմնայարկը առանձին, առանց վերնայարկի անարժէք է։ Իրականութիւնը այն է, որ շէնքը մի անքակտելի ամբողջութիւն է, որի հիմնայարկը եւ վերնայարկերը իրենց ինքնուրոյն արժէքը ունեն եւ առանց մէկի միւսը անհասկանալի է։ Հիմնաշէնքի եւ վերնաշէնքի արտառոցութիւնը ցայտուն է զարձրել նախկին համայնավար եւ կարկառուն պրոֆ. Ա. Կէօալերը հետեւեալ պատկերաւոր ոճով։ «Մարքսիստ ընկերութեան մէջ երկու տեսակ համայնավարութիւն կայ, մէկը տնտեսական է՝ ծուարած դեռնայարկում, իսկ միւսը՝ իմացական է՝ ձեղնայարկում։ Այս շէնքում բացակայ է սանդուղն ու վերելակը»։ (Արթիր Կէօալեր, Եոգի եւ կոմիսար, էջ 97)։

ՎԵՐԱՔԱՆ

Ցարդ «Բաղինում տրուածը ամփոփ եւ համառօտ խոցումն է մեր ուսումնասիրութեան։ Բաղում յարակից հարցեր մանրամասնօրէն քննարկուած չեն։ Տրուածը մի խթան կարող է հանդիսանալ հարցասէր եւ որոնող մտքի համար։ Այլ հարցեր, ինչպէս անհատի դերը պատմութեան մէջ, ազատութեան ըմբռնումը, ընկերվարական իրապաշտութիւնը, հայրենասիրութիւնը, անկախութեան գաղափարը, մարքսիստ բարոյագիտութիւնը եւայլն հետագային քննութեան առարկայ պիտի լինեն՝ հայութեան եւ մեր հայրենիքի կապակցութիւնով։

ԴՈԿՏ. ԵՐ. Խ.

ՎԵՐՋ

Նոր Գիրքեր

«ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵԳԻՐՔԸ»

Խմբագիր՝ Կ. ԳԷՈՐԳԵԱՆ

1963, Պէյրութ· Տպ· «Մշակ»

Իր կատարած գործին մշակութային նշանակութեան եւ այդ նշանակութեան իրական չափին խորապէս գիտակից, պարկեշտ մտաւորականի մըն է կարօ Գէորգեան. ուր ասոր տարիներէ ի վեր, ժամացոյցի մը ճշդութեամբ, ամէն տարի գրեթէ նոյն օրերուն հրատարակ կը հանէ իր «Ամէնուն Տարեգիրքը», որուն ընթերցումը իրական վայելք մը դարձած է Սփիւռքի հայ ընթերցող հասարակութեան համար:

Տարեգիրք մը, որպէսզի իսկապէս ամէնունը ըլլայ, պարտաւոր է շատ մը պայմաններ լրացընել, որոնցմէ գլխաւորը իմացականութեան, ճաշակի ու հետաքրքրականութեան միջին մը ունենալն է: Այլազանութիւնը առոր մէջ ուրիշ գլխաւոր պայման մըն է. նիւթերու դասաւորումն ու համեմատական բաշխումը էջերու վրայ՝ ոչ նուազ ճշգրտութեամբ հրատարակ պայման մը: Հայկական Սփիւռքի պարագային, իւրահանչիւր գաղութի հանդէպ լուրջ վերաբերում մը ունենալը՝ դեռ չորրորդ պայման: Եւ այսպէս՝ դեռ մեծ ու պտտիկ ուրիշ պայմաններ: Դիւրին գործ չէ, չըսելու համար դժուար գործ է՝ «Ամէնուն Տարեգիրքը» հրատարակել: Այդ ցաւագին գործին գրեթէ բոլոր դժուարութիւններուն յաղթահարած խմբագիրն է անա կարօ Գէորգեան: Սկսաւ ասկէ տասը տարի առաջ, ու հիմա, տասը տարի ետք, իր ուժերը ուրիշ ամուր են քան առեւտ ժամանակ, կարենալ հրկարօրէն հայելու համար:

1963-ի «Ամէնուն Տարեգիրքը», իր բացառիկ ծաւալով ու բացառիկ բովանդակութեամբ, հրախտաշատ աշխատանքի մը տասնամեակը կը բոլորէ ու կը գտնուայ նոյն ատեն յոյսի գեղեցիկ եւ շշոփելի մեկնակէտ մը՝ գործի նոր ու երկար շրջանի մը հաշուոյն: Տարեգիրքին խմբագիրը, Կ· Գէորգեան, վկայութեամբը այսօր իր տասը մեծածաւալ հատորներուն, մտաւորականն է, որ կ'ստէ ճահանչը, կ'ստէ յոգնութիւնը, կ'ստէ ընկրկում մտնող ամէն բան: Աշխատանքը մեծ կիրք մըն է իրեն համար, մեծ սէր մը, թերեւս կրօնքի պէս բան մը:

Ինը հատորներէ ետք, որոնց մասին դրական անկեղծ արտայայտութիւնները անպակաս եղան միշտ, սեռ այս տարուանը, – տասնիրդ «ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵԳԻՐՔԸ»:

Հատոր մը՝ մեծ, լեցուն, աղուոր: Հի՛ւթ ունեցող: Ու կեանքի փայլ, ու լրջութիւն, ու ջերմութիւն: Հատոր մը՝ ուր կայ կեանք, տեղեկութիւն, առօրեայ: Ուր կայ նրազի անկիւն, սրուեստի անկիւն, զուարթութեան անկիւն: Ուր տեղատորուած է մանաւանդ հայկական հսկայ գաղութ մը (Ամերիկահայ), զանազան կազմակերպութիւններով, իր ընդարձակ մտահոգութիւններով, դէպքերով ու դէմքերով· կատարուած աշխատանքներով ու յառաջդիմութիւններով: Հատոր մը՝ շտեմարան գեղեցիկ բաներու եւ օգտակար բաներու:

Այսպէս, 1963-ի «Ամէնուն Տարեգիրքը» պատկառելի է՝ իր ծաւալով – 804 մեծադիր էջ: Պատկառելի մանաւանդ՝ իր բովանդակութեամբ (գրական, արուեստի, ազգային եւ այլ), աշխատանքի եւ այլազանութեան իր ընդարձակ ծիրով, ուր յաջող փորձը կ'ելլայ 13 հիմնական բաժիններով ընդգրկել հայկական եւ մասամբ նաեւ ընդհանրական տարիին կարեւոր եղելութիւնները:

1963-ի «Ամէնուն Տարեգիրքը» կրնանք յայտարարել *կատեր մը*՝ որ կը մղէ միտքը միշտ պրպտումի, զտումի եւ դասաւորման սպառիչ խմբագրութեան մը: Ցայտարարը՝ յետոյ, *հետաքրքրութեան մը* որ արթուն է շարունակ, որ ուտի վրայ է, որ չի յոգնիր, բընանալ չի գիտեր, ոչ իսկ փորձած է կարծես մը բարփել: Ցայտարարը ապա *հաշիւ* մը՝ որ ցոյելու համար խիստ առաջնորդ մը ընտրած է իրեն – *թծախնդրութիւնը*, տարեգիրքին նիւթերէն սկսեալ մինչեւ անոր թուղթն ու տպագրութիւնը: Այդ թծախնդրութեան շնորհիւ՝ տարեգիրքը հարիւրաւոր էջերու տպաւորիչ շարունակութիւն մը քլլալէ դադրած է ու եղած՝ յարդարանք, խնամք, արուեստ:

Այս բոլոր աշխատանքները բազմահարիւր էջերով տարեգրքի մը կանոնաւոր հրատարակման համար, յամառ եւ նոյն բանը կրկնող յուշարարի մը պէտք ունին: Արդ, ո՞վ է այս առթիւ այդ յամառ յուշարարը, բոլոր յուշարարներուն պէս անտեսանելի բայց ներկայ եւ որ կ· Գէորգեանն կը պարտադրէ պատնէշին վրայ մնալ, անընկուն եւ անհահանջ, ամենայն եռանդով ու ամենայն թծախնդրութեամբ, ամէ՛ն տարի ճիշդ ատենին ու առաւել որակով՝ յոյս ընծայել իր «Ամէնուն Տարեգիրքը»· ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, ի հարկէ, որ կը հրամայէ տագնդ ու բարեխղճութիւն ունեցող իր ունկնդիրներուն՝ վերբել, տակաւ աւելի, հայ մշակոյթին տուրքը:

Ե· Գ·

ԹԱՏՐՈՆ

«ՆՈՐ ՊՍԱԿԻ» ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Համազգայինի Գուրգ Համուտի «Լեւոն Շանթ» թատերախումբը, 1963-ի Յունուար 26-ին եւ 27-ին, քաղաքի սրբանկարչի Գոլէժ տը լա Սալի մէջ ներկայացուց Յ. Օշականի «Նոր Պսակ» գործը, տրամ երէք արարուածով, առնուած 1921-ի պոլսահայ կեանքէն։

Գրական այլ սեռերու մէջ մեծարժէք գործեր տուած հեղինակին այս թատերակը, դժբախտաբար հեռու է բեմական ինչպէս եւ գրական յաջողութիւն մը ըլլալէ։ Կը թուի մեզի, թէ գիտակցած է առոր նաեւ ինքը հեղինակը՝ քանի որ անտիպ թողած է զայն։ Ափսոս որ լաւագոյն մշակումի մը չէ հասցուած այս թատերակը, որ կրնար իր ընտրած նիւթով,- կանանց հոգեկան աշխարհին, սրտին, ու մարմնին անխիղճ ու անհոգի չահագործումը տղամարդոց կողմէ - արուեստի գործ մը դառնալ։ Նիւթը ունէ՛ր կարելիութիւնը, չէ հասած սակայն անոր՝ հեղինակը։

Թատերակը կը մնայ այդ իսկ պատճառով, կառոյցով թոյլ, տիպարներու և դէպքերու անբաւարար զարգացումով, և յաճախ ալ անբնականութեամբ տկարացած։

Խաղարկութիւնն ու բեմադրութիւնը, այս դժուարութեանց դիմաց (դժուարութիւն մըն էր նաեւ Օշականի լեզուն, որ բեմական չէ), ընկրկեցան։ Աշխատա՞նք՝ այո, անկասկած որ թափուած էր. կը բաւէ՞։

Շնորհալի ուժեր, անշուշտ որ ունի խումբը. խնամքի, բեմական լուրջ դաստիարակութեան կարօտ կարելիութիւններ կան հոն, ապագայ ուժեր կարելի է ըսել նոյնիսկ։ Սակայն կարելիութիւններ են դեռ միայն, եւ հիմնականը թատերական, բեմական արուեստի պահանջներուն համապատասխան երկար ու լուրջ աշխատանքն է։ Տաժանք է թատերական արուեստին ծառայելը. կը պահանջէ երկարատեւ յոյնութիւն, զոհաբերութիւն, եսի անտեսում. վարձատրութիւնը սակայն, հոգեկան ներքին բաւարարութիւնը՝ հարատութիւն մըն է, որ մառչելի չէ ամէնուն։

Արժէ, որ շնորհալի ուժերը չփախչին բեմէն, չդադրին նուիրուելէ անոր, ու աշխատին։ Արժէ, եւ պէտք է նաեւ, որ յառաջդիմութիւն մը արձանագրուի, խուսափուի տեղայլէն, բան մը աւելցուի բեմական եւ գրական, հոգեբանական եւ դերասանական պաշարին վրայ։ Այդ գնով միայն թատերական խումբերը իմաստ եւ գոյութեան իրաւունք կ'ունենան։

Կարելիութիւններ են՝ Օր. Տիգրանուհի Տէմիրճեան, որ սպասուհիի դերը յանձն առած էր, փաստաբանը (Պր. Յարութիւն Գաբրիէլեան), Մարգարեանի քրոջ, Փիշթօֆի դերով՝ Օր. Մարկօ Սամանճեանը. Պր. Մարգարեան (Բիւզանդ Արզումանեան), Տիկ. Մարգարեանի դերին մէջ՝ Օր. Մարի Խաչատուրեանը, շնորհալի ուժ մըն է մանաւանդ Անժէլի դերը խաղացող Օր. Սօսի Թավուշճեանը։ Պ. Թաթուլ Այնէճեան իրեն յարմար դեր մը չէր ընտրած։ Զենք վերագտներ Համազգայինի Գասպար Իփէկեան թատերախումբին մէջ ձգնաւորը խաղացող շնորհալի դերասանը, ափսոս։ Պր. Թ. Այնէճեան պէտք է նուիրուի խաղարկութեան, եւ իրեն յարմար դերերով, ատիճանական զարգացման եւ յառաջընթացի մը կարելի հեռանկարը իրականացընելու համար։

«ԿԱՐԱՊԻ ԵՐԳԸ»

Համազգայինի «Գասպար Իփէկեան» թատերախումբը, Փետրուար 12–17–ը, կրան թէաթրի մէջ ներկայացուց Ժենիա Արիստակեան Պոլսակինի 4 արարնոց «Կարապի երգը» թատերակը, բեմադրութեամբ Գր. Ժ. Սարգիսեանի։

Թատերակը՝ արուեստական դրութիւններով, խաւաքարտէ անձնաւորութիւններով, անբնական ու անբաւարար զարգացումներով, ողբերգականը ծիծաղելիի վերածող եւ անհաւանականութիւններով շաղախուած թատերակ մը. խմաստներէ դատարկուած եւ արտաքին ձեւը միայն պահած տիալոկ մը. կարճ՝ արուեստէ զուրկ գործ մը։ Ափսոս։

Իր փորձառութեամբ ու ցարդ արձանագրած յաջողութիւններով, Համազգայինի «Գասպար Իփէկեան» թատերախումբը պարտաւորութիւնը եւ կոչումը ունի առաջնորդողը ըլլալու Գէյրութահայ, մինչեւ անգամ Սփիւռքի հայութեան թատերական կեանքին։ Իր պարտականութիւնն է թատերասէր հասարակութիւնը տանիլ դէպի աւելի գեղեցիկը, աւելի դժուարը, անկասկածելի արժէքները թատերական դրականութեան, եւ ոչ թէ ինչել «Կարապի երգերու։

Այս կեանքէ պարպուած թատերակը ներկայացնելու համար, անհրաժեշտ էր դերասաններուն ու դերուսոյցին կողմէ աւելի մեծ հիպ, դէթ խաղարկութեամբ, չեչտերու բնականութեամբ, ծածկելու կառոյցի թերիները, տիպարներուն թուղթէ ըլլալը, ինչպէս կրցան ընել Օր. Գարմէն Պուտաքեան, Օր. Արշալոյս Պոյաճեան եւ Տիկ. Զեփիւռ Շանթ, որոշ դժուարին տեսարաններու։

Օր. Արշալոյս Պոյաճեան, իր բաժինը բերած խումբի այլ ներկայացումներուն եւս, այս անգամ սակայն կը դառնար յայտնութիւն մը. իր խաղով, չեչտերու բնականութեամբ, յաջողեցաւ կենդանութիւն մը մը տալ իրեն տրամադրուած տիպարին (որը, պէտք է ըսել, քիչ մը աւելի տանելի ու բնական նախադասութիւններ ունէր իր տրամադրութեան տակ, քան միւս տիպարները), ըրաւ զայն բնական, ջերմ, վարակող ու դարձաւ այն տիպարը, այն դերասանուհին, որուն մուտքին կը սպասուէր անձկութեամբ, քիչ մը բնական չունչ ու կեանք ստանալու համար բեմէն։

Օր. Գարմէն Պուտաքեան, իր բեմական բացառիկ ձիրքին շնորհիւ կրցաւ տանելի բնականութիւն մը բերել հեղինակին կողմէ դատարկուած Օր. Հուրի Առաքելեանի տիպարին։ Շատ աւելի պատասխանատու, շատ աւելի լուրջ ու ծանր դիրքերու մէջ պէտք է օգտագործել Օր. Պուտաքեանը. թանկարժէք ուժի մը վատնումն է զինք նման դերերով բեմ հանելը։

Մնացեալ դերակատարները՝ (Սըմբատ Աւաքեանի դերով՝ Գր. Սարգիս Այանեան, Մովսէս Նկարիչի դերով՝ Գր. Ժ. Շահապեան, Արամ Թաֆայէլեանի դերով՝ Գր. Կարօ Խաչատուրեան) կամ իրենց տեղը չէին, իրենց յարմար դերը չունէին, կամ դերին յարմար չեչտը չկրցան գտնել, բնականութեան տպրումը փոխանցել սրահ։

Այս բոլորով հանդերձ, խումբը, շնորհիւ իր փորձառութեան եւ դերուսոյցի ջանքերուն, կրցաւ պահել անսասպլի համաչափութիւնը։ Հայ բեմը կը շարունակէ սպասել իրենցմէ՝ աւելին։

Բ. Փ.

ԵՐԲ ԱՐԱՐԱՏԸ ԿԸ ՍՐԲՈՒԻ[ԳՐԱԿԱՆՈՒԹԵՆԷՆ

Հայաստանի սովետական գրողների միութեան վարչութիւնը թերթ մը ունի, օրկան մը, «Գրական Թերթ» շաբաթաթերթը։ Այդ օրկանի 25 Յունուարի թիւին մէջ հետեւեալ նամակը կարդացինք, ուղղուած խմբագրութեան, բանաստեղծ Վազգէն Նորենցի կողմէ։ Կարդացինք հաճոյքով. կարդացինք զարմութեամբ. զարմութիւնը Արարատին մատնուած ճակատագրէն կուգար, ուրախութիւնը՝ Նորենցի վճռական հարցադնդումէն։ Բայց...անշուշտ որ ընթերցողը դժուար թէ բան հասկնայ այս կրկնակրկռուք նախաբանէն, աւելի լաւ է որ կարդայ նախ Վ. Նորենցի նամակը ամբողջութեամբ։—

Ցարգելի ընկեր խմբագիր,

Վերջերս Երեւանի դպրոցներից մէկում առիթ ունեցայ ներկայ լինելու ութերորդ դասարանի հայոց գրականութեան դասին։ Դասն էր Եղիշէ Չարենցի ստեղծագործութիւնը։ Աշակերտներն արտասանում էին մեծ բանաստեղծի հանրայայտ մարգարիտը՝ «–Ես իմ անուշ Հայաստանի...»։

Բոլոր արտասանողներն անխտիր կատարում էին միեւնոյն սխալը,– բանաստեղծութեան եզրափակիչ տողը՝

– «Որպէս անհաս փառքի համբայ, ես իմ Մասիս սարն եմ սիրում»։

կոչել էր եւ նրա փոխարէն աշակերտները կրկնում էին նախավերջին տան վերջին քառատողը՝

«Էլի ես որքա՜ ու արնավա՜ռ իմ Հայաստան հարն եմ սիրում»։

Դասի աւարտին ես ուսուցչի ուշադրութիւնը հրաւիրեցի այդ պարագայի վրայ։ Նա արդարացաւ, որ դասագրքում այդպէս է տպագրուած եւ ինքը իրաւասու չէ շտկելու դասագիրքը։ Ստուգեցինք։ Բանաստեղծութիւնն աղաւաղուած է ութերորդ դասարանի համար կազմուած «Հայրենի Գրականութիւն» դասագրքում։ Գրքի կազմողներն են Թ. Զուհարեանն ու Վ. Եսայեանը։

Այդպիսի վրիպակ կամ սպրդում չի կարող լինել դասագրքում եւ մնալ չուղղուած, ուրեմն այդ կատարուած է ինչ որ նկատառումով։ Թոյլ տուէք, ընկեր խմբագիր, ձեր թերթի միջոցով հարց տալ Թ. Զուհարեանին եւ Վ. Եսայեանին, թէ ի՞նչ իրաւունքով եւ ի՞նչ նկատառումով է կատարուած այդ աղաւաղումը։

ՎԱՂԱՐՇԱԿ ՆՈՐԵՆՑ

Թ. Զուհարեանին կամ Վ. Եսայեանին մենք ծանօթ չենք, կարենալ նուազագոյն չափով իսկ դուշակելու համար թէ ի՞նչ պիտի ըլլայ իրենց պատասխանը. յոյսենք թէ, վէպ մը կարդացողի հեատաքրքրութեամբ պիտի կարդանք այդ պատասխանը, եթէ լոյս տեսնէ։ Բայց, մենք ալ հայ գրականութեան անաղարտ պահպանման նախանձախնդիր ըլլալով, մեզի իրաւունք կուտանք մէկ երկու հարցում ալ մեր կողմէ աւելցնելու, որոնց պատասխանները եթէ տրուին, վէպը տաք հացի պէս պիտի խլուի ձեռքէ

ձեռք, Հայաստանի թէ արտասահմանի մէջ։

Այո. նախ եւ առաջ հետաքրքրական է իմանալ թէ ինչո՞ւ Զարենցի անմահ տողը,— հայ ժողովուրդին համար գծած ճանապարհը —, դուրս կը մնայ Հայաստանի մէջ լոյս տեսած, հայ մանուկներու համար պատրաստուած, «Հայրենի Գրականութիւն» գրքէն։ Ո՞ւր է Զարենցի «քաղաքական աննիրելի սխալը» այդ տողին մէջ. Մասիսը փառքի ճամբայ համարե՞լը արդեօք. փառքի ճամբան Մասի՞սը համարելը արդեօք, դեռ հասած չըլլալը մատնանշե՞լը արդեօք, եւ ենթադրեցուով պատգամած ըլլա՞լը արդեօք, թէ պէ՛տք է հասնիլ անոր,— հայուն համար փառքի միակ ճամբուն։

Յետոյ. հետաքրքրական է անշուշտ իմանալ, թէ այդ բոլոր աշակերտներուն մէջ մէկ հատիկ իսկ ծանօթ չկա՞ր Զարենցի անեղծ բանաստեղծութեան, որ ուշադրութիւնը հրաւիրէր ուսուցչին, տնօրէնութեան, ծնողքին, մամուլին...

Հետաքրքրական է իմանալ նաեւ, թէ ուսուցիչները որ այդ դասագրքով կ'աւանդեն իրենց դասերը, նշմարա՞ծ են արդեօք կատարուած զեղչը Զարենցի հայրենասիրական ապրումներէն. եթէ այո, (եւ անկասկած որ այո), ինչո՞ւ լռած են «ազատութեան» նո՛ր այս պայմաններուն մէջ։

Մեր հարցումները հոս չեն վերջանար դժբախտաբար, քանի որ շատ կրկնուած հարցում մը եւս պիտի տանք։

Այո, Վաղարշակ Նորենցի հետ մենք ալ կը հարցնենք, ի՞նչ նկատառումով եւ ի՞նչ իրաւունքով է կատարուած այդ աղաւաղումը, բայց կը շարունակենք հարցնել, լրացնել հարցումը՝

Ի՞նչ նկատառումով, եւ ի՞նչ իրաւունքով կատարուած են, կը շարունակեն կատարուիլ նաեւ այսօր, գրական ու պատմական մնացեալ աղաւաղումները...

Ի՞նչ նկատառումով եւ ի՞նչ իրաւունքով կատարուեցան այն մեծ աղաւաղումները, 1937–ին, որոնք ոչ թէ գրագէտին ստեղծագործութիւններէն տող մը թոցնելուն մէջ կը կայանային, այլ անոր ...գլուխը։

Ի՞նչ նկատառումով եւ ի՞նչ իրաւունքով կը կատարուի ապաւաղումը այդ դէպքերուն, որոնք կը յիշատակուին միայն որպէս «ապէտալի թուական», առանց մանրամասնութիւններու, տուանց ինչո՞ւներու,եւ ի՞նչպէսներու. առանց մանաւանդ որո՞ւն կամ որո՛նց կողմէ կատարուած ըլլալը յայտնելու։

Ի՞նչ նկատառումով, եւ ի՞նչ իրաւունքով լռութիւն կը պահուի մինչեւ այսօր, ԶԱՐԵՆՑԻ ՄԱՀՈՒԱՆ ձեւին մասին, մահուան թուականին մասին, մահուան վայրին մասին, դերեզմանին վայրին մասին, եթէ ունի։

Որո՞ւն պէտք է գրէ Հայ ժողովուրդը իր արիւնագիր նամակը, պատասխան մը ստանալու համար սիրտ ու հոգի արիւնող իր հազար հազար հարցումներուն... Մ. Զ.

ԾԱՆՕԹ.— Մեր նշմարագիրներէն Մ. Զ.–ին յայտնեմ, թէ իր նշմարը տպարան զրկելէ ամսիներ առաջ, ստացանք «Գրական Թերթ»ի 1 Փետր. 1963–ի թիւը, ուր Վ. Նորենց ստացած է իր պատասխանը ՀԱՅԳՏՈՒՄԱՆԿԷՐԱՏի (Տէ՛ր Աստուած, օգնէ որ հրամչեմ) խմբագրութեան վարիչ քնկ. Ս. Նազարեանի կողմէ, որ կ'ըսէ թէ նկատառում չկայ կատարուած ապաւաղումին մէջ, այլ եղածը սրբագրական վրիպում է և 1963–ի հրատարակութեան մէջ սխալը ուղղուած է։

Գնա՛ հ և այս պատասխանը, եթէ կրնաս, հեռաբիբրական վէպի մը պէս կարդա հիմա, սիրելի Մ. Զ.։ Միւս եարցումներուդ համար ալ խօսքեր մը կը ճարուին ի հարկէ. ոգի մնաս.— ՀԱՅԳՏՈՒՄԱՆԿԷՐԱՏՆԵՐԸ։ Բ.

«ԲԱԳԻՆ»Ի ՖՈՆՏԻՆ

Շնորհակալութեամբ ստացանք Պր. Ալեք Փիլիպոսեանէ 100 տոլար։

«ԲԱԳԻՆ» ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

- Տոքթ. Գէորգ Կերկէրեան (Պէյրութ), *Պրն. Պերճ Փոփազեանի (Թրիփոլի)։*
- Պրն. Յակոբ Սարաֆեան (Պէյրութ), *Տոքթ. Ռ. Մոմճեանի (Ժընեւ)։*
- Տոքթ. Սերիոժա Թորոսեան (Միւնիխ), *Տէր եւ Տիկին Յարեթի (Փարիզ) եւ Տիկին Տիրուհի Պեռոյեանի (Իսիլէ-Մուլինոս, Ֆրանսա)։*

ՆՈՐ ՆԿԱՐՆԵՐՈՒ ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ

(ԻԽՂԱՆԿԱՐՆԵՐ)

ԺՈՐԺ ԿԷՕՎԷՐՋԻՆԵԱՆԻ

12 Մարտէն 23 Մարտ

ԱԼԷՔՍԷՕ ՍԱԼՊԻ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ

Մամարի փողոց, Ուարտիյէի հրապարակ (Համրա)

ՏՊԱՐԱՆ ԱՏԼԱՍ – ՀԵՌ. 245402 – ՊԷՅՐՈՒԹ

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 20 Լ. ՈՍԿԻ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 7 ՏՈԼԱՐ

ՀԱՏԱՎԱՃԱՌ 2 Լ. ՈՍԿԻ

Վարչութեան հասցէ՝—

DIKRAN KOUYOUMDJIAN

P. B. 587, Beyrouth – Liban